

«ԳԱՀՆԱՄԱԿ ԱԶԱՏԱՑ
ԵՒ ՏԱՆՈՒՏԷՐԱՆՑ ՀԱՅՈՑ»
ԵՒ
«ԶԱԻՐԱՆԱՄԱԿ»

«Գահնամակ» եւ «Զօրանամակ» անուններով մեզ են հասել Հայոց վաղ միջնադարի երկու փաստաթղթերի եզակի գրչագրական պատճեններ:

Դրանցից առաջինը պահպանուել է անյայտ մագաղաթեայ ժողովածոյ-ձեռագրից հանուած եւ պահպանակի վերածուած թերթի վրայ (անցման երկաթագրով, երկու էջերի երկուական սիւնակների 25ական տողերում ամբողջութեամբ): Այն 1850ին թիֆլիսցի Համբարձում եւ Աւետիք Էնֆիանճեանցների գրավաճառանոցում յայտնաբերել է ժամանակի յայտնի մշակութային ու պետական գործիչ, բժիշկ Գէորգ Ախվերդեանցը (Եռու. Ա. Ախվերդով), որ ճիշտ գնահատելով գտածոն ու նախնաբար վերծանելով նրա բնագիրը, 1851ին ուղարկել է այն Մոսկուա (նախ՝ իր արտագրութիւնը, ապա մի քանի ամիս անց՝ նաեւ մագաղաթեայ թերթը)՝ իր բարեկամ, Լազարեան հաստատութեան ուսուցչապետ Մկրտիչ Էմինին¹: Վերջինս էլ 1858ին իրագործել է «Գահնա-

1 1851ի Փետրուարի 13ին Մ. Էմինին գրած նամակում Գ. Ախվերդեանցն իր գիտի մասին մասնաւորապէս յայտնում էր. "Когда я принимал вместе с Петром Шаншиевым от Энфианджянца рукописи, купленные нами для приношения библиотеке института, Амбарцум мне указал на несколько листов пергамента, которые были заложены переплетчиком в переплет... какого-то ճաշոց-а; я вынул их, оставил их у себя, и на другой же день приступил к разбору этих листков, которые показались мне старше, потому что буквы все заглавные (երկարագիր), большие и довольно красивые, но буквы в некоторых местах сильно полиняли, а в других покрыты были жиром и копотью... оказалось, что это остатки каких-то речей или толкований о шести днях мироздания; они

մակ»ի առաջին հրատարակութիւնը Մովսէս Խորենացու «Պատմութիւն Հայոց»ի՝ իր պատրաստած թարգմանութեան յաւելուածում՝ կից սիւնակում տալով նաեւ ռուսերէնը եւ կոչելով այն (ըստ բովանդակութեան կամ մի շտապողական վերականգնումով) «Վրամական»²: Մ. Էմինի կազմած բնագիրը մի քանի տարի անց նրանից ստացաւ եւ հրատարակեց Ղեւոնդ Ալիշանը³, իսկ աւելի ուշ նրա տպագրից այն վերահրատարակեցին Կարապետ Կոստանեանցը եւ Խորէն Ստեփանէն⁴: Յետագայում Մ. Էմինը պահպանակն ուղարկել է Վենետիկ՝ Ղ. Ալիշանին, որ 1890ին իր «Այրարատ» աշխատութեան մէջ կրկին վերահրատարակել է «Գահնամակ»ը՝ կոչելով այն «Սահակեան» կամ «Վրամական» եւ կից զետեղելով ցայսօր Մխիթարեան միաբանութեան Մ. Ղազարի վանքի թանգարանում պահուող մագաղաթեայ թերթի զոյգ էջերի լուսատիպ նկարները⁵: Բնագրի սկզբում առկայ Սահակ Պարթեւի նամակ-առաջաբանի ռուսերէն թարգմանութիւնն է. դարի սկզբին իրենց հիմնարար մենագրութիւններում ներկայացրել են

имеют свое достоинство: мысли довольно ясны, но, главное, слог изящен и красив... Зато в одном листе я нашел вознаграждение за труды мои; точную копию с этого листа присылаю к тебе... ты увидишь, что это почерк, переходный от երկաթագիր-а к բրոնզագիր-у..." (Ա.Լ.ԵՔՍԱՆ, Գ., *Նամակներ*, Երևան 1964 [«Գրական ժառանգութիւն», 3], 212-213): Տե՛ս նաև 3 Յունիսի, 1851 թուակիր նամակը՝ 224-225, եւ ծանօթագրութիւնները՝ 354-356:

2 *История Армении Моисея Хоренсакого*, Перевел с армянского и объяснил ЭМИН, Н., Москва 1858, 358-360 (*վերահրատ.*՝ *История Армении Моисея Хоренсакого*, Новый перевод ЭМИН, Н., Москва 1893, 295-297):

3 *Սոփերի Հայկականի*, հտ. Զ., Ա. Ղազար, Վենետիկ 1853, 132-134, ծնթ. 111 (ծանօթագրութեան սկզբում հ. Ղ. Ալիշանը նշում է. «...նամակ գահուց Սահակայ, որ յառաջ քան զամս սակաւս գտաւ ի մասնէ ի մագաղաթի երկաթագիր, ի կողս մատենի միոյ, ի Մոսկով քաղաքի, գոր եւ գաղափարեալ բանասիրի ուրումն եւ բարեկամի՝ մասնաւորեաց եւ մեզ. յորում թուին բարձր եօթանասուն. եւ պակասի պատմեմն, որոյ եւ սկզբանն բանք թերատմ...»):

4 ԿՈՍՏԱՆԵՆՍՅԱՆՅ, Վ., *Հիւսուածի Հայոց մարգպանների պատմութեան առաջին մասի համար*, գիրք Գ., Վիեննա 1877, ներդիր՝ էջ 32ից յետոյ (այստեղ՝ նաև «Ներսէսեան գահնամակը» եւ մագաղաթեայ պահպանակի «Զօրանմակ»-ը). ՄՈՎԱԷՍ ԽՈՐԵՆՍՅԱՆ, *Հայկական պատմութիւն*, Աշխարհարար թարգմանեց եւ լուսաբանեց ՍՏԵՓԱՆԷ, Խ. ծ. վրդ., Ա. Պետերբուրգ 1889, 260-262, ծնթ. 690:

5 Ա.Լ.ԵՔՍԱՆ, հ. Ղ., *Այրարատ. Բնաշխարհի Հայաստանեայց*, Ա. Ղազար, Վենետիկ 1890, 430-431 (լուսատիպները՝ ներդիրով, այդ էջերի միջև):

նաեւ Գրիգոր Խալաթեանցը⁶ եւ Նիկողայոս Աբոնցը⁷, իսկ աշխարհաբար թարգմանութիւնն աւելի ուշ կատարել է Ստեփան Մալխասեանցը⁸ :

Երկրորդ փաստաթուղթը՝ «Զօրանամակ»ը, յայտնաբերուել է (եւ 1842ին գծագիր-նմանահանութեամբ հրատարակուել) բոլորակ (օվալաձեւ) աղիւսակի պատկերի ձեւով Յովհաննէս եպ. Շահաթունեանցի կողմից՝ Ս. Էջմիածնի կաթողիկոսարանի մատենադարանի մի հին ձեռագրում («ի մատեանս հնոց»), գրչուհի Տիրամայրի ընդօրինակութեամբ ըստ գիտնական-եպիսկոպոսի՝ կցուած Անանիա Շիրակացու «Ժամանակագրութեանը»⁹ : Իր գտածոյի մասին հեղինակը յայտնում է հետեւեալը (մեզ համար առանձնապէս կարեւոր կտորներն ընդգծում ենք). «Որովհետև յիշատակեցաւ ձմեռոց գորաց Հայոց, կարևոր է գիտել հայրենասէր անձանց եւ զանմեռ մշտապատրաստ գորացն զքիւ ի ժամանակի անդ քագաւորացն Հայոց. զայս ծանօթութիւն ոչ ոք ի պատմագրաց եթող ի գրուածս իւր յաղագս ապագայից, այլ ի խուզարկութեան մերում ի մատենանս հնոց՝ զտաք զայն աշխատասիրեալ յԱնանիայ Ծիրակունոյ ի վախճանի ժամանակագրութեան նորին, զոր ձեւացուցեալ էր ի քառաբաժին բոլորակ աղիւսակի միում, եւ զբաժինսն որոշեալ անուամբ դրանց՝ դրունք հիսսիսային, հարասային, արեւելեան եւ արեւմտեան, եւ յիրաքանչիւր բաժինսն դասաւորութեամբ շարակարգեալ զնախարարսն կամ զագնուականս եւ զաշխարհսն եւ զթիւ յատկացեալ գօրացն նոցին, որոց ամենեցուն զումար թէպէտ ոչ համեմատի ամբողջ թուոյն՝ որ ի լուսանցի անդ աղիւսակին նշանակի եւ այն թերեսս ի սխալմանց գրչաց մատենին, բայց այնուամենայնիւ դարձեալ հարկատր դասուցաւ ի մէնջ դնել սատ

6 ХАЛАТЯНЦ, Г., *Армянские Аршакиды в "Истории Армении" Моисея Хоренского, Опыт критики источников*, Ч. I, Москва 1903, 297.

7 АДОНИЦ, Н., *Армения в эпоху Юстиниана. Политическое состояние на основе нахарарского строя*, СПб., 1908, 249-250 (վերահրատ. Երևան 1971, աշխարհարար թարգմ. Երևան 1987, անգլերէնը՝ ADONTZ, N., *Armenia in the Period of Justinian...*, Translated with partial revisions, a bibliographical note and appendices by Garsoïan, N., Lisbon 1970, 191-195; Appendix III, 67-69).

8 ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՅԻ, *Հայոց պատմութիւն*, Թարգմանութիւն, ներածութիւն եւ ծանօթագրութիւններ ՄԱԼԽԱՍԵԱՆ, Ստ., Երևան 1940, ծնթ. 338, 338-339 (էջ 336-338ում՝ նաև բնագիրը). տե՛ս նաև *Հայ ժողովրդի պատմութեան բրեստովստիա*, հտ. 1, Երևան 1981, 613-615 (հատուածի կազմող ԱԲՐԱՀԱՄԵԱՆ, Ա. Գ.):

9 *Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ*, Աշխատասիրութիւն ՇԱՀՄԱԹՈՒՆԵԱՆՑ, Յ. եպս., հտ. Բ., Վաղարշապատ - Ս. Էջմիածին 1842, ներդիր՝ էջ 58ից յետոյ:

զօրինակն այնր աղիւսակի, զոր հագի ուրեմն ի հնոթեանց անտի թղթոցն կարողացաք կենդանացուցանել»¹⁰: Գրչի յիշատակագրութիւնը բոլորակ աղիւսակն իր մէջ պարփակող ուղղանկիւն զարդաշրջանակի աջ կողադաշտի ներքեւի մասում է (կողադաշտի վերեւից գրուած ամփոփում-աւարտից յետոյ, երկու ձեռագիր նմանահանուլթիւնում էլ ձեւաւոր փակագծի մէջ առած ու փոքրատառով սկսող) եւ առանց լուրջ տարընթերցումների. «յիշեա՛ ֆրիստուս ողորմու՛ք քն ԳՏԻրամայրն եւ քո՛ղ գլանցանն նորա /գեղագիր B նմանահանութեան մէջ՝ նորայ/»:

Մաշտոցի անուան Մատենադարանում թիւ 1379 ձեռագրում (ընդօրինակուած՝ 1334ին Երզնկայում, Թորոս գրչի կողմից, Կիրակոս Երզնկացի վարդապետի պատուէրով) առկայ է փաստաթղթի «մի քերի օրինակ» (թ. 1բ). դա բոլորակ աղիւսակի երկթերթ տարբերակի աջ կէսն է (մեր բնագիրը կազմելիս այն նշանակել ենք E տառանիշով)¹¹: ՄՄ թիւ 1379 գրչագրում (թ. 1բ) յիշատակագրութիւնը ձեռագրի ստացողինն է եւ գլխատառով է. «Յիշեա՛ ֆրիստուս Աստուած գմեղուցեալ ծառայես՝ գկիրակոս վարդապետ եւ գՅովաննէս վարդապետ եւ գՆերսէս հոգեւոր որդեակն մեր ի քում գալրստեանդ. եւ քեզ փա՛ոբ»:

Յույճ. Շահխաթունեանցի աղիւսակի վերծանութիւնը 1877ին կատարեց Կարապետ Կոստանեանցը՝ ընթերցելով նրա տողերը շրջանաձեւ, վերեւի կենտրոնից ժամացոյցի սլաքի ուղղութեամբ, ցաւօք՝ բաց թողնելով նախարարական «ագգերի» ներցուցակային համարակալումը (2xԱ-ԻԱ, 2xԱ-ԻԲ), չնկատելով «Հիւսիսային» ու

10 Անդ, 58: Անանիա Շիրակացու «Ժամանակագրութիւն» ասելով ժ. դարի առաջին կեսում, քերես, հասկանում էին՝ իրականում՝ Փիլոն Տիրակացուն պատկանող երկասիրութիւնը. հմմտ., օր.՝ Հայկազեան բառարանում (հտ. Ա., 17). «Շիր. քրոն.: Քրոնիկոն կամ Ժամանակագրութիւն՝ քաղեալ ի նախնեաց, մանաւանդ յեսերեայ եւ ի Խորենացոյն եւ այլն, եւ հասուցեալ ցաւուրս իւր, եթէ չկայցեն եւ ինչ ինչ պատուաստեալ յայլոց. զի է գործ խառնակ յոյժ ըստ բազում գլխոց, եւ խառն յառասպելաց ասորոց»:

11 Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Գ., Կագմեքին ՔեՅՕՇԿԱՐԵԱՆ, Ա. - ՍՈՒՔԻԱՍԵԱՆ, Կ. - ՔԵՕՍԷՆԵԱՆ, Յ., Երեւան 2008, 1107-1108: ՇԱՀԻՆԵԱՆ, Լ., *Զօրանամակ*, ի ՀՄՀ, հտ. Գ., Երեւան 1977, 704: Այդ քերթը լոյս է տեսել՝ *Армянское войско в XVIII веке: из истории армяно-русского военного содружества. Исследование и документы*, Подготовил к изданию ХАЧАТРЯН, А., Ереван, 1968, 7:

«Հարաւայիւն» «դռնէրի» տեղերի՝ յուշարձանի առաջին գրչի կողմից թոյլ տրուած շփոթը եւ սխալ ընտրելով յետագայում կրկնուած «Արեւմտեան» ու «Արեւելեան» դռնանունների ուղղուածութիւնը. դրա հետեւանքով այդ վերծանութեան մէջ բոլոր 4 դռնանունները սխալ տեղերում են յայտնուել, իսկ «Հարաւայիւն» եւ «Արեւելեան» նախարարական «ազգերի» հերթականութիւնը ստացուել է շրջուած¹²: Երկու դէպքում բիւրի նշանի վերականգնման անհրաժեշտութիւնը չնկատելով՝ Կ. Կոստանեանցը նաեւ բաց է թողել Կաղմեացի եւ Սիւնի նախարարական «ազգերի» զօրաքանակների վերծանումը եւ փոխարէնը հարցական նշան դրել (թերեւս, նոյն պատճառով է ի յայտ եկել նաեւ Յովհ. Շահաթունեանցի՝ իրականում անարդարացի բողոքը. «ամենեցուն գումար թեպէտ ոչ համեմատի ամբողջ թուոյն ... և այն թերեւս ի սխալմանց գրչաց մատենի», տե՛ս վերելում): Յետագայում Յովհ. Շահաթունեանցի նմանահանած աղիւսակի արտատպութիւնն իր «Այրարատ»ում վերահրատարակեց Ղ. Ալիշանը (բնագրի ամփոփում-աւարտը «գեղագիտութեան» գետեղելով բոլորակի կենտրոնում ներգծած զարդաշրջանակի մէջ)¹³, իսկ բնագրի ուշագիրը ընթերցումը, անհրաժեշտ վերականգնումներով՝ Ն. Աղոնցը¹⁴:

Երկու փաստաթղթերի հրատարակիչների եւ թարգմանիչների, ինչպէս նաեւ Կար. Կոստանեանցի, Գր. Խալաթեանցի, Սիւրեկան Տիգրանեանի, Յակոբ Մանանդեանի քննական անդրադարձերից յետոյ¹⁵ բնագրերի առաւել մանրամասն վերլուծութիւնը ներ-

12 ԿՈՍՏԱՆԵԱՆՑ, Կ., *Հիւսուած՝ Հայոց մարգպանների պատմութեան առաջին մասի համար*, գիրք Գ., ներդիր էջ 32ից յետոյ: Հմմտ. ԱՆԱՍԵԱՆ, Յ., *Հայկական մատենագիտութիւն. Ե-ԺԸ. դր.*, հտ. Գ., Երևան 2004, 165 («Կ. Կոստանեանցի կազմած ցուցակը, 1877ին ակնյայտօրէն շփոթ ու սխալ էր՝ նախ յիշեալ վրիպման և յետոյ այն քանի հետևանքով, որ ինքը, միօրինակօրէն հետևելով գծագրութեան աշխարհագրական շրջագծին, անտեսել ու խախտել էր տոհմերի աստիճանական հերթականութիւնը խմբաւորումների ներսում՝ երբեմն շարքում առաջին եղող տոհմը դարձնելով վերջին և վերջինը՝ առաջին»):

13 Ա.Լ.ԻՇԱՆ, հ. Ղ., *Այրարատ*, ներդիր՝ էջ 424-425ի միջև, նոյն էջերում՝ նաև բնագրի ընթերցումը:

14 АДОНИЦ, Н., *Армения в эпоху Юстиниана*, 251-252:

15 ХАЛЯТЯНИЦ, Г., *Армянские Аршакиды*, Ч. I, 292-297. ՏԻԳՐԱՆԵԱՆ, Ս., *Հայոց իրաւունքի պատմութեան ներածութիւն*, Երևան 1923, 187-202. ՄԱՆԱՆԻՅԱՆ, Յ., *Ֆեռդալիզմը հին Հայաստանում*, Երևան 1934, 14-15. Նոյն, *Երկեր*, հտ. Բ., Երևան 1978, 326-330: Էրմիտաժի՝ Սասանեան շրջանի ոսկէ սկուտնի զարդապատկերների

կայացրեց Կիրիլ Թումանովը¹⁶, որ նորովի համեմատեց դրանց մատուցած նիւթը աւատական դարաշրջանի Եւրոպայի իրողութիւնների հետ, սակայն, նաեւ կրկնեց Ն. Ադոնցի մի խնդրառու ենթադրութիւնը մեզ հասած «Գահնամակ»ի՝ իբրեւ ոչ պաշտօնական գրուածք է. դարու կէսերից յետոյ ստեղծուած լինելու վերաբերեալ¹⁷, ինչպէս նաեւ ոչ լրիւ արդարացուած մի փորձ կատարեց՝ վերանայելու «Զօրանամակ»ի կառուցուածքը: Փաստաթղթերի վերջին հանգամանալից քննութիւններն իրականացրել են Գագիկ Սարգսեանը, Բագրատ Ուլուբաբեանը, Լեւոն Շահինեանը, Բաբէկն Յարութիւնեանը, Անահիտ Փերիխանեանը, Յակոբ Անասեանը, Կարէն Իւզբաշեանը եւ Ալբերտ Մուշեղեանը¹⁸:

Մեզ հասած «Գահնամակ»ը վաղ միջնադարի Հայոց արքունիքի համակարգում նախարարական տոհմերի զբաղեցրած եօթ

և Մոկսի քուրդ քեկերի կենցաղի համադրութեամբ նախարարական քարճերի ու գահերի վերաբերեալ ուշագրաւ դիտարկումներ է կատարել Յովսէփ Օրբելիւն (ОРБЕЛИ, И., *Фольклор и быт Мокса*, Москва 1981, 33-34): Առիթն օգտագործում եմ՝ երախտագիտութիւնս յայտնելու ուսուցչիս՝ Պարոյր Մուրադեանին, որի օգնութեամբ եմ ուշադիր գտնուել այս և այլ կարևոր հարցերում:

16 TOUMANOFF, C., *Studies in Christian Caucasian History*, Georgetown 1963, 229-253: Նշուած դիտանկիւնների մասին հմմտ. ՍԱՐԳՍԵԱՆ, Գ. *Նիկողայոս Ադոնցի գլոխգործոցը*, - Հայաստանը Յուստինիանոսի դարաշրջանում..., Երևան 1987, 556, ծնթ. 7 (վերահրատ.՝ ՍԱՐԳՍԵԱՆ, Գ., *Պատմագիտական ճետագոտութիւններ*, Կազմեց և խմբագրեց ՄՈՒՐԱԴԵԱՆ, Պ., Երևան 2006, 183):

17 АДОНИ, Н., *Армения в эпоху Юстиниана*, 295:

18 ՍԱՐԳՍԵԱՆ, Գ., *Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսէս Խորենացին*, Երևան 1966, 158-161. ՈՒՆՈՒԲԱՅԵԱՆ, Բ., *Հիւսիս-արևելեան Հայաստանի նախամարզպանական շրջանի վարչաճարտարական վիճակի հարցի շուրջը*, ի ԲԵՀ, 1975, քիւ 2, 159-163. Նոյն, *Դրուագներ Հայոց Արեւելից կողմանց պատմութեան (V-VII դդ.)*, Երևան 1981, 124-127. ՇԱՀԻՆԵԱՆ, Լ., *Գահնամակ*, ի ՀՍՀ, հտ. 2, Երևան 1976, 662-664. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ, Բ., *«Գահնամակ» թուագրման հարցի շուրջը*, ի ՊԲՀ, 1976, քիւ 2, 57-74. Նոյն, *«Զօրանամակ»ը Մովսէս Խորենացու «Հայոց պատմութեան» ստեղծման 1500-ամեակը*, ի Միջազգային գիտածոյովի դրոյթներ, Երևան 1991, 28-30. ПЕРИХАНИЯ, А., *Общество и право Ирана в парфянский и сасанидский периоды*, Москва 1983, 67-72, 312-314. ԱՆԱՍԵԱՆ, Յ., *Հակակրան մատենագիտութիւն*. Ե-ԺԸ. դդ., հտ. Գ., 159-168 («Գահնամակ» բառայօդուած). ԻԻԶԱՇԵԱՆ, Կ., *Աւարայրի նակատամարտից դէպի նուարակի պայմանադրութիւնը*, Երևան 1989, 23-30 (վերահրատ.՝ Անթիլիսա 2005 և Երևան 2005). ՄՈՒՇԵՂԵԱՆ, Ա., *Մովսէս Խորենացու դարը*, Երևան 2007, 235-239, 327-328:

տասնեակ պատուաստիճան-գահերի ցուցակն է՝ ներկայացրուած Ս. Սահակ Պարթեւ կաթողիկոսի (388-439) նամակում, ուր նշուած է նաեւ, որ այն հաստատուել է Սասանեան արքայից արքայի կողմից: Նամակում ուղղակիօրէն տրուած է վաւերագրի՝ «Գահնամակ» անուանումը, որն ակնյայտօրէն իրանական ծագման է՝ կազմուած պահլաւերէն ստուգաբանութեամբ «գահ» եւ «նամակ» բառերից¹⁹: Ի դէպ, եզրոյթի՝ բնագրում օգտագործուած աւարտական իով Գահնամակի ձեւի մէջ (հմմտ. «Ներսէհ՝ հրամանաւ արքայից արքայի, եւ ես՝ Սահակ Հայոց կաթողիկոս, կնքեցաք գ՛հահնամակի ն...»²⁰), ի տարբերութիւն «հայերէն» ձեւի, որն ընկալուած է որպէս Գահ-[ա]-նամակ, թերեւս, կարող է դիտարկուել իրանական իզաֆետային կառուցուածքի նշան (թէկուզ եւ այդ դէպքում աւելի սովորական պիտի լինէր բաղադրիչների հակառակ շարադասութիւնը): Իսկ բառամիջի եւ առկայութիւնը կարելի է կապել անգամ հայկական բարբառային-խօսուածքային Ա-Ե-Ա յաճախողէպ անցման հետ (այն յատուկ է նաեւ իրանական լեզուներին), որի հետեւանքով ունենք Ա բախ-Ե բախ, Ա ուն-Ե ուն, Ան-ձաւացի-Անձաւացի եւ այլն²¹:

«Գահնամակ» անուանումը յիշատակուած է նաեւ հայ այլ մատենագիրների երկերում, սակայն ո՛չ ամենավաղ շրջանի: Մովսէս Խորենացին նման պաշտօնական վաւերագրերի (առանց դրանց անունը տալու) սկզբնաւորումը կապում է այն «բարեկարգութիւնների» հետ, որ Հայաստանում կատարեց Արշակունեաց արքայատոհմի հիմնադիր Վաղարշակ Թագաւորը (ըստ Պատմահօրը հա-

19 Ա.ՃԱՌԵԱՆ, Հ., Հայերէն արմատական բառարան, հտ. Ա., Երեւան 1971, 504 («ԳԱՀՆԱՄԱԿ «նախարարների պատույ պատիւանի ցուցակը... =Հիւ. պիլ. *gāhnāmak, իբր պրս. *gāhnāma «գահական բուդը», գիրք կամ ցուցակ», որ կազմուած է gāh

«գահ, պատույ պատիւան» եւ nāmak «գրութիւն, գրուածք» բառերից. - Հիւ.Ք. 125»): Ա.ՆԱՍԵԱՆ, Յ., Հայկական մատենագիտութիւն, հտ. Գ., 159 (հեղինակը նաեւ նկատում է, որ՝ «Գահ բառի ունեցած վերոյիշեալ իմաստով [պատիւ, իշխանական պատիւան] պատմական աղբիւրներում հաւասարապէս հանդէս է գալիս նաեւ բարձ բառը, այնպէս որ այդ երկու բառերը որպէս հոմանիշներ միասնաբար էլ գործածուած են Աստուածաշնչի Ե. դարի հայերէն բարգմանութեան մէջ [Գ. Մկր. Ե. 8]»):

20 Իմա՝ «այս Գահնամակի-ն»: Լրիւ բնագիրը տե՛ս ստորեւ:

21 ԿԱՐԱԳԵՈՋԵԱՆ, Յ., Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբիւրներում. Սեպագիր տեղանուններ (Այրարատում եւ յարակից նահանգներում), Երեւան 1998, հտ. I-1, 85, 87, 184, 189, 229-231:

սած աւանդութեան՝ Բ. դար ն. Ք.): Օրինակ «Պատմութիւն Հայոց»ի գլ. Բ.է.ուս. «Քանգի բազում ինչ աստ՝ կարգաց եւ յաւրինուածոց տանց, ազգաց, քաղաքաց, շինից, դաստակերտաց, եւ համայն ասել՝ արեւն թագաւորութեան եւ որ ինչ շուրջ զթագաւորութեամբն՝ գարաց, գարապետաց կողմանց, կողմնակալաց, եւ որ նման այսոցիկ»։ նաեւ՝ Բ.ը.ուս. «Եւ արեւն իմն հաստատէ [Վաղարշակ] ի տան թագաւորութեան իւրոյ... Եւ՝ կարգս զինուորութեանց, եւ նոցունց առաջինս եւ երկրորդս եւ երրորդս եւ որ ի կարգին»²²: *Ինչպէս Խորենացին, այնպէս էլ վաղ շրջանի միւս մատենագիրները (Եղիշէ, Փաւստոս Բուզանդ, Ագաթանգեղոս, Ղազար Փարպեցի, Պետրոս Սիւնեցի, Սեբէոս), առանց յիշատակելու «Գահնամակ» վաւերագիրը, ընդարձակ տեղեկութիւններ են հաղորդում Արշակունեաց թագաւորութեան ու մարզպանութեան շրջանի նախարարների կայուն ժառանգական գահերի, բարձերի եւ տեղակարգութեան հաստատութեան մասին*²³, որոնց «գոյութեան փաստը հայերի մէջ կասկածի ենթակայ չէ»²⁴:

«Գահնամակ»ը յանուանէ յիշատակում է Ուխտանէս եպիսկոպոսը Ժ. դարու վերջերին (982)²⁵, ընդ որում՝ նրանից կարճ մէջբերում անելով, եւ դրանից նկատում է, որ պատմիչի ձեռքի տակ եղել է հէնց մեզ հասած բնագրի մի տարբերակը²⁶: Ըստ հեղինակի ներկայացման՝ Վաղարշակ Արշակունի թագաւորը ինդրել է աւագ եղբօրը, Պարթեւ արքային՝ օգնելու իր պատգամաբեր Մարիբայ կատինեային, որին յանձնարարել էր՝ «որոնել

22 Մովսիս Խորենացու Պատմութիւն Հայոց, Աշխատութեամբ ԱԲԵՂԵԱՆ, Մ. - ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ, Ա., Տփղիս 1913 (այսուհետեւ՝ ՊՀ), գլ. Բ.է., 109, Բ.ը., 117: Այստեղ եւ ստորեւ բնագրերում որոշ կէտադրման փոփոխութիւններ կամ ընդգծումներ ենք կատարել՝ առանց յատուկ ծանօթագրելու:

23 Դրանց ամփոփ բնութիւնը տե՛ս АДОНИЦ, Н., *Армения в эпоху Юстиниана*, 272-277. Ա.ՆԱՍԵԱՆ, Յ., *Հայկական մատենագիտութիւն*, հտ. Գ., 159, ծմբ. 6:

24 АДОНИЦ, Н., *Армения в эпоху Юстиниана*, 272: Շարունակութիւնը՝ "Оно [местничество] было принято как при дворе армянских Аршакидов, так и персидских царей. Об этом свидетельствуют отечественные историки".

25 Ա.ԿԻՆԵԱՆ, Հ., *Բանասիրական հասակոտորներ. 3. Ե՞րբ գրած է Ուխտանէս իր Պատմութիւնը*, ի Աւետիք, Բէյրութ 1944, թիւ 5-8, 57. ՈՒԽՏԱՆԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ, *Հայոց պատմութիւն*, Թարգմանութիւնը, առաջաբանը եւ ծանօթագրութիւնները ԱՌԱՔԵԼԵԱՆ, Վ., Երեւան 2006, 16-17:

26 ՈՒԽՏԱՆԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ, *Պատմութիւն Հայոց*, Վաղարշապատ 1871, գլ. Ա.իւ, 40:

գդիւանն արժունի եւ տալ գԳահնամակ նախարարացն Հայոց... Իսկ նա գտնալ գԳահնամակն՝ բերեալ [առ] Վաղարշակ արքայն Հայոց: Իսկ նա առեալ գորինակն՝ նախարարութիւն կարգէ իւրաքանչիւր ումնէ՛ բարձ եւ պատիւ տալով նախարարացն՝ ըստ իւրաքանչիւր բարձի տալով իշխանութիւն միոյ միոյ ըստ արժանեաց՝ որում վա-
յելէր...» (չարունակութեան մէջ ասուում է. «Եւ գայլս մի ըստ միո-
ջէ կարգէ եւ կոչէ անուանա. առաջին՝ Սիւնեաց տէր, երկրորդն՝ աս-
պետ Բագրատունի, երրորդն՝ Արծրունի, չորրորդն՝ Մա[ղ]խազունի,
հինգերորդն՝ Մամիկոնեան, եւ գայլ եւս...»)՝²⁷ *Ինչպէս նկատում
ենք, Ժ. դարի վերջում Ուխտանէսը զուտ գրական շեղում է կա-
տարում իրեն աղբիւր ծառայած Մովսէս Խորենացու վկայու-
թիւններին, որոնց համաձայն՝ Վաղարշակ Արշակունի թագաւորը
Հայոց նախարարութիւնների գահակարգութիւնը սահմանել էր
առաջին անգամ, առանց ակելի հին փաստաթղթի ու կարգի՝*²⁸:

Նոյն դարում Մեսրոպ Երէց Վայոցձորեցին իր «Ժողովաբալ
արարած» (ըստ յիշատակագրութեան՝ 967) «Պատմութիւն սրբոյն
Ներսիսի Պարթեւի Հայոց հայրապետի» երկի Ե. գլխում բերում է
թագաւորական եւ նախարարական 167 տոհմերի անուններ պա-
րունակող մի ցուցակ, որ ներկայացնում է իբրեւ՝ «Գահի [կամ՝
Բարձի չորեքհարիւր] իշխանացն Հայոց»²⁹ (նախադրութիւնն է. «Եւ
իբրեւ ձեռնադրեցաւ մեծն Ներսէս ի Կեսարիա եւ եկեալ ի Հայս՝
նորոգէր զգահս իշխանացն Հայոց, գոր էր կարգեալ ի Խոսրովայ
եւ յայլ թագաւորացն: Ձնոյն եւ նա կարգէր՝ ի ժամ ցաշոյն ի սեղան
արքային Արշակայ՝ բարձս չորեքհարիւր, որ են այսոքիկ...»)՝³⁰ *Սա-
կայն այս բնագրում որոշակի են ուշ գրական ծագում յուշող ի-
րողութիւնները՝³¹, ուստի՝ մասնագէտներն այն կոչում են ոչ մի-
այն «Ներսէսեան», այլեւ յաճախ՝ «Կեղծ գահնամակ» (թէպէտ նա-
եւ կարեւորում է, որ հեղինակն ի թիւս այլ աղբիւրներին, ըստ
ամենայնի, օգտագործել է նաեւ մեզ հասած «Գահնամակ»ը):*

27 Անդ: Քառակուսի փակագծերով մի քանի վերականգնումները ժԹ. դարի հրատա-
րակչինն են:

28 Նաեւ Ն. Աղոնցի ուշագրաւ դիտարկումները (Армения в эпоху Юстиниана, 253-254):

29 Սոփերժ Հայկականի, հտ. Զ., 32-38. Ա.Լ.ԻՇԱՆ, հ. Դ., Այրարատ, 432-433. АДОНИ,
Н., Армения в эпоху Юстиниана, 257-259:

30 Սոփերժ Հայկականի, հտ. Զ., 32:

31 Մանրամասն տե՛ս АДОНИ, Н., Армения в эпоху Юстиниана, 259:

Եւ վերջապէս՝ ժԳ. դարի վերջերին Ստեփաննոս Օրբէլեանը, յղելով Ղեւոնդին (որին Ն. Ադոնցը ենթադրաբար նոյնացնում է Ը. դարի յայտնի պատմագրի հետ, թէպէտ մեզ հասած վերջինիս «Պատմաբանութեան» մէջ նման հաղորդում չկայ³²), գրում է Տրդատ Մեծի արքունիքում գործածուած «Գահնամակ»ի մասին, ընդ որում զգացում է հեղինակի ծանօթ լինելը ե՛ւ մեզ հասած «Գահնամակ»ին, ե՛ւ «Զօրանամակ»ին, ե՛ւ «Ներսէսեան» գահնամակին (բնագիրն է. «հրամայէ մեծին Տրդատայ կարգել զքազաորութիւն իւր ըստ սահմանի կայսերացն Յունաց եւ տալ ըստ իւրաքանչիւր պատշանի գահ եւ պատիւ իշխանացն յաջմէ եւ յահեկէ: Որ եւ գեղեցկապէս յօրինեալ՝ ի ժամ քաջոց նստել բարձս չորեքհարիւր իշխանաց, որոց գահագլուխք՝ բղեաշխն Գուգարաց, իշխանն Ադանեաց, իշխանն Անգեղտան, իշխանն Կորդուաց, ասպետն Բագրատունի, իշխանն Արծրունեաց, իշխանն Սիւնեաց եւ իշխանն Մամիկոնեից. սոքա էին գահագլուխք ամենայն իշխանացն Հայոց: Իսկ գօրացն եւ աշխարհին վերայ չորս միայն կացուցանէ իւրոյ թագաւորութեանն երկրորդ հրամանատարս ի վերայ ամենայնին. արեւելեան կողմանն՝ զիշխանն Սիւնեաց քսան եւ մի իշխանօք, հիւսիսային կողմանն՝ զբղեաշխն Գուգարաց քսան եւ երկու իշխանօք, արեւմտեան կողմանն՝ զԿորդուացին քսան եւ մի իշխանօք, հարաւային կողմանն՝ զիշխանն Անգեղտանն քսան եւ երկու իշխանօք: Զայս այսպէս գտաք ի Գահնամակի իշխանացն Հայոց, զոր Ղեւոնդ գրեաց, եւ սակաւ մի ցուցանէ Ագաթանգեղոսին եւ Ներսիսին»³³: *Տեղին նշենք, որ չբացատրելով «Գահնամակ»ի առիթով յղուած ազբիւրի վերաբերեալ Ն. Ադոնցի ենթադրութիւնը՝ կարելի է, իբրեւ այլ վարկած՝ Սիւնեաց պատմիչի յղումը վերագրել նաեւ ոչ պակաս յայտնի Ե. դարի Վարդանանց նահատակ Ղեւոնդ երէցին, որ Մեսրոպ Մաշտոցի ու Սահակ Պարթեւի առաջին սաներից էր եւ*

32 Անդ, 254-255. ԱՆԱՍԵԱՆ, Յ., *Հայկական մատենագիտութիւն. Ե.-ԺԸ. դդ.*, հտ. Գ., 160, ծնթ. 13:

33 *Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սրսական*, Ի լոյս ընծայեաց ԷՄԻՆ, Մ., Մոսկվա 1861, գլ. Զ., 15-16. *Պատմութիւն նամանգին Սրսական*, Արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց, Թիֆլիս 1910, գլ. Է., 24-25: ՕՐԲԷԼԵԱՆ, Ա., *Սիւնիքի պատմութիւն*, Թարգմանութիւնը, ներածութիւնը եւ ծանօթագրութիւնները ԱՐԲԱ.ՀԱՄԵԱՆ, Ա., Երեւան 1986, 78-79:

Կորիւն վարդապետի աշակերտակիցը³⁴. Ստ. Օրբէլեանն այլուր առիթ չի ունեցել՝ յիշատակելու Ը. դարի պատմիչին, իսկ Ղեւոնդ երէցին յիշատակում է եւս մէկ անգամ³⁵:

Ինչպէս նշեցինք, մեզ հասած՝ հայ ազնուականութեան պատուաստիճան-գահերի ցուցակ-«Գահնամակ»ը ներկայացուած է Հայոց Սահակ կաթողիկոսի նամակում, իսկ առանձին, փաստաթղթային ձեւաւորմամբ ցուցակի տարբերակ մեզ չի հասել: Սակայն չբացառելով նման տարբերակի (անգամ՝ տարբերակների) գոյութիւն ունեցած ու գործառուած լինելը՝ հարկ է նշել, որ, ըստ ամենայնի, պարտադիր չէ կասկածի տակ առնել նաեւ հէնց նամակ-տարբերակի՝ պաշտօնապէս շրջանառուած-գործառուած լինելու հնարաւորութիւնը (ի հարկէ՝ իր ժամանակին): Աւելին՝ Ստեփաննոս Օրբէլեանի մի դրուագից երեւում է, որ մարզպանական դարաշրջանի հասարակական մտածողութեան մէջ պատուաստիճանների ցուցակ-«Գահնամակ»ի գործառուածը յարիր է ընկալուել նաեւ պատմագրական երկի, այն է՝ Ագաթանգեղոսի «Պատմութեան» կազմում: Գլխադրում յղելով Զ. դարի կէսերի եպիսկոպոս, մատենագիր եւ Խորենացու («Քերթողաօր») աշակերտ Պետրոսին («յասացուածոց սրբոյն Պետրոսի Սիւնեաց եպիսկոպոսի»)՝ Օրբէլեանը շարադրում է Դ. դարի յայտնի իշխան Անդոկի (Արշակ Բ.ի աներոջ) մասին մի կիսանովբային պատում, ըստ որի, մասնաւորապէս, Շապուհ Բ. Որմզրեան արքան կամեցել է ճշտել հայ ակադանու՝ «գագատատոհման եւ գնոցին նախապատիւ նախադաս նախագահութիւն», ուստի՝ հայերից պահանջել է այդ մասին վկայող պաշտօնական գրաւոր որեւէ նիւթ («գնախնականն գիր ըստ իւրաքանչիւր ըստ տանց ազատագարմն եկաց ձե-

34 ԿՈՐԻՒՆ, *Վարժ Մաշտոցի*, Բնագիրը ... առաջարանով եւ ծանօթութիւններով ի ձեռն ԱԲԵՂԵԱՆ, Մ., Երևան 1941, գլ. ԺԶ., 66, գլ. ԺԹ., 74. ԿՈՐԻՒՆ, *Վարժ Մաշտոցի*, Յառաջարան, բնագրի վերակազմութիւն եւ ծանօթագրութիւններ, աշխատասիրեց ԱՆԱՆԵԱՆ, Կ. Պ., [Հանդերձ իտալերէն թարգմանութեամբ], Ս. Ղազար, Վենետիկ 1998, 50, 62. *Մատենագիրք Հայոց*, հտ. Ա.-Բ., Ե. դար, Անթիլիաս 2003 (բնագիրն՝ ըստ ԿՈՐԻՒՆ, *Վարժ Մեսրոպ Մաշտոցի*, Աշխատութեամբ ՄԱԹԵՒՈՍԵԱՆ, Ա., Երևան 1994), գլ. ԺԷ., 244, Ի., 248: «Վարժ»ի վաղ գրչագրում էջերի յետևառջութեան մասին տե՛ս ՄԱԹԵՒՈՍԵԱՆ, Ա., *Կորիւնի Մեսրոպ Մաշտոցի պատմութեան ձեռագրի մի թղթի տեղափոխութիւն*, Ս. Ղազար, Վենետիկ 1990:

35 Պատմութիւն տանն Սիսական, անդ, գլ. ԺԶ., 42 (*Պատմութիւն նահանգին Սիսական*, գլ. ԺԷ., 59):

րոց գնախաստիճանն եւ գնախանիստ պատիւն»), որին ի պատասխան՝ «նոյնժամայն խորհուրդ արարեալ իշխանացն Հայոց Մեծաց՝ մատուցին առաջի թագաւորին զցանկալին ամենայն տառից... զգրաւորական գիրս սրբոյն Գրիգորի, որ Ագաթանգեղն կոչի... գտեալ նմա զգիր տասն եւ եօթն բարձի ազատացն Հայոց իշխանաց...»³⁶ :

Ինչ վերաբերում է մեզ հասած «Ջօրանամակ»ին, ապա դա երկու տարբերակում էլ ուղղանկիւն շրջանակի մէջ ներգծուած բոլորակ (մի փոքր օվալաձեւ) քառաբաժին աղիւսակ է, որի բաժինների (անուանուած՝ ըստ Հայոց Արշակունեաց թագաւորութեան չորս կուսակալ զօրավարութիւնների՝ «Արեւելեան դուռն», «Հարաւային դուռն», «Արեւմտեան դուռն» եւ «Հիւսիսային դուռն») ճառագայթաձեւ բացուող եռասիւնակ տողերում թուարկուած են 21-22ական նախարարական «ազգեր» (ընդամէնը՝ 86), իրենց թւահամարներով (Ա.-ԻԱ./ԻԲ., առաջին սիւնակում) եւ զօրականների քանակով (Մ.-ԱՔՆ, երրորդ սիւնակում եւ դէպի ներս շրջուած): Բացի այդ, ուղղանկիւն շրջանակի աջ կողագաշտի մէջ վերեւից ներքեւ կարճ տողերով տրուած է բնագրի աւարտն ու ամփոփումը. «Սորին մեկնեալ եւ գովանս՝ ի յայլ աշխարհս գրաւեալս: Եւ լինի թիւ մարտիկ արանց, որ ընդ ազգաւք՝ ՁԳ-ից հագարաց: Թող՝ գսպասաւորս դրանն արժունի, որ է Ոստանդ, որք ի պատերազմ ելանէին ընդ արբայի, եւ Մարդպետական, որ է ներքինի պահապան ի վերայ թագուհոյն եւ գանձուցն, եւ ընդ ամենայնն՝ թիւ զարացն Հայոց, որ է հարիւր եւ քսան հագարաց»³⁷: Մատենագրութեան մէջ «Ջօրանամակ» անուանումն արձանագրուած չէ, ուստի՝ այն շարունակում է մնալ պայմանական: Չնայած դրան, դժուար է համաձայնել Ն. Ադոնցից ի վեր շրջանաւորող այն մօտեցման հետ, թէ տուեալ փաստաթուղթը «Գահնամակ»ի մի տեսակ է:

«Ջօրանամակ»ի՝ նկարագրուած իւրատեսակ ձեւաւորումն, առաւել մեծ հաւանականութեամբ, կարող էր ուղղակիօրէն կրկնած լինել այն վաղագոյն հայերէն նախօրինակ-պատճէնի արտաքին տեսքը, որ գրերի գիւտից յետոյ պիտի թարգմանուած-կազմուած

36 Անդ, գլ. Ը., 20-21 (Պատմութիւն նամանգին Միւսական, գլ. Թ., էջ 30-31): Պատումի մանրամասն արժեւորումը տե՛ս АДОНИ, Н., *Армения в эпоху Юстиниана*, 273-277:

37 Տե՛ս Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի եւ ճինգ գաւառացն Արարատայ, էջ 58ին յաջորդող ներդիրը: Հ. Ղ. Ալիշանի Այրարատի էջ 424-ին յաջորդող ներդիրի արտատպութեան մէջ բնագրի այս աւարտը տեղափոխուել է բոլորակ աղիւսակի կենտրոնում ներգծուած ուղղանկեան մէջ:

լինէր Արշակունեաց ականական պետութեան զինուժի կառուցուածքն ու ձեւաւորման չափաքանակները (Պորենացու բնորոշումով՝ «կարգի գիւտորութեան»³⁸) պաշտօնապէս սահմանող մի հրովարտակ-վաւերագրից³⁹: Վերջինիս լեզուն կարող էր ե՛լ յունարէնը լինել՝ գոնէ Տրդատ Մեծի օրօք շատ հաւանական տարբերակ, ե՛լ ասորերէնը կամ պահլաւերէնը: Սակայն «Զօրանաւակ»ի արտաքին ձեւաւորման ուշադիր վերլուծութիւնը ստիպում է կանգ առնել վերջին տարբերակներից որեւէ մէկի վրայ, քանի որ մեզ հասած աղիւսակում «Հիւսիսային» եւ «Հարաւային» դռնանունների տեղերն աջից ձախ ուղղութեամբ ակնյայտօրէն շփոթուած են: Պատահականութեամբ բացատրել այդ շփոթը, որն անկասկած, գալիս է հայերէն թարգմանական նախօրինակից, հնարաւոր չի թւում, ուստի՝ վրիպումը պէտք է կապուի սեմական գրահամակարգին բնորոշ (արամայերէն տառերով էր նաեւ պահլաւերէնը) աջից-ձախ գրութիւնից արուած անուշադիր թարգմանութեան-փոխադրման հետ: Հաւանական է թւում, որ վերջինս կատարուել է հետեւեալ ձեւով:

Նախ՝ երեւում է, որ Դ. դարի մինչհայերէն (ասորերէն կամ պահլաւերէն) նախօրինակում նախարարական զօրքերի թուարկումն սկսուել է բոլորակ աղիւսակի վերեւի կենտրոնից դէպի ձախ ընթացող «Արեւելեան Դռնից», եւ ժամացոյցի սլաքի հակառակ ուղղութեամբ շարունակուելով «Հարաւային Դռնով», ապա «Արեւմտեանով»՝ աւարտուել է «Հիւսիսայինով»: Ընդ սմին՝ վերարտադրելով բոլորակ գծագիրը (ենթադրաբար, հէնց Ե. դարում)՝ առաջին թարգմանիչ-նկարիչը (կամ նկարիչը՝ թարգմանիչի օգնութեամբ), հաւանաբար, գրել է նաեւ գեղագիր դռնանուանումները չորս ցանկասիւնակներից իւրաքանչիւրի առջևում, ինչպէս որ եղել է աջից-ձախ գրութեամբ ու ժամացոյցի սլաքի հակառակ ուղղութեամբ բոլորող նախօրինակում եւ ինչպէս որ առկայ է նաեւ մեզ հասած տարբերակի բոլոր չորս դէպքերում

38 ՊՀ, գլ. Բ.Ը, 117 («Եւ արեւն իմն հաստատէ [վաղարշակը]... Եւ՝ կարգս գիւտորութեան...»):

39 Հմմտ. АДОИЦ, Н., *Армения в эпоху Юстиниана*, 280 ("Покуда действовало это положение относительно нахарарской кавалерии, необходимы были точные сведения о численности князей и их воинств. На почве такой необходимости должны были возникнуть соответствующие письменные документы официального или иного происхождения, родственные с тем памятником, который трактуется нами, - воинской грамотой").

(երկուսուժ, ինչպէս նշեցինք՝ շփոթուած, միւս երկուսուժ՝ հետագայի կրկնութեամբ): Սակայն այդ աշխատանքը կատարելիս արուել է նաեւ մի լուրջ փոփոխութիւն. գծազրոյդ-նկարիչը աշխարհի կողմերի մասին իր պատկերացումներին (հայերէն ձախից աջ գրութեան տրամաբանութեամբ՝ ժամացոյցի սլաքի ուղղութեամբ) անհամապատասխան է համարել հորիզոնական գրուած դռնանտւանտւանների դիրքերը (աջ կողմում պիտի վերելի «Արեւելեանից» յետոյ գրուէր «Հիւսիսային դուռն է», թէկուզ եւ՝ դէպի վեր շրջուած, իսկ ձախում, ներքեւի «Արեւմտեանից» յետոյ՝ «Հարաւային դուռն է») ուստի՝ ուղղակի փոխել է դրանց տեղերը⁴⁰: Բայց երկրորդ աշխատողը՝ գրիչ-թարգմանիչը (կամ գրիչը՝ թարգմանչի հետ), ամենայն հաւանականութեամբ, անհաղորդ է եղել թէ՛ այդ փոփոխութեանը, թէ՛ փաստաթղթի բովանդակութեան մանրամասներին (նախարարական «ագգերի»՝ այս կամ այն սահմանակողմին պատկանելուն), եւ ընդամէնը նոյն հերթականութեամբ փոխադրել-լրացրել է ցանկասիւնակների ներսի անուններն ու դրանց կողքին գրուած թուերը: Սկսելով, անկասկած, վերելի կենտրոնում գրուած եւ դէպի ձախ ուղղուած «Դռնից»՝ նա խնամքով պահպանել է տողերի՝ ներսից դէպի դուրս ճառագայթածեւ ուղղութիւնը, որի հետեւանքով երկու ձախ ցանկասիւնակների տոհմանունները շրջուած են գրուել («սեմագիր»՝ աջից ձախ գրութեամբ նախօրինակը, բնականաբար, նման խնդիր չունէր): Այդ շրջուածութիւնն, ի վերջոյ, թերութիւն համարելով՝ գրիչը կատարել է միայն մէկ լուրջ փոփոխութիւն. ձախից հաս-

40 «Զօրանամակ»ի մեզ հասած աղիւսակի միւս մեծ բերութիւնը բոլորակի վերելի ու ներքեւի կենտրոններում ուղղահիգ գրուած դռնանտւանտւանների («Արեւելեան» եւ «Արեւմտեան») կրկնուած լինելն է իրար հակառակ ուղղուածութեամբ: Դրա հետեւանքով կրկնուող դռնանտւանները շփոթութեան տեղիք են տալիս՝ գոնէ Յովի. Շախիաբունեանցի տարբերակում մի դէպքում՝ աջից, միւսում՝ ձախից հայելով «Հիւսիսային դռան» ցանկասիւնակի առաջին եւ «Հարաւային դռան» վերջին տոհմանուններին: Սակայն դա, անկասկած, հետեւանք է ոչ թէ բարգամնութեան համագամանների, այլ այն ուշ գրչի անյաջող նախնանտւանութեան, որին յանձնարարուած է եղել նախօրինակ մեծ մագաղաբաբերքի աղիւսակ-պատկերն ընդօրինակել գրչագրական երկու՝ աւելի փոքր չափի թերթերի վրայ. այդ խնդիրը լուծելիս գրիչն, ըստ երեւոյթի, որոշել է թերթերից միայն մէկի վրայ ընկնող ուղղահիգ դռնանտւանտւանները գուտ գեղագիտական նկատառումներով արտապատկերել նաեւ միւս թերթին, այն էլ՝ ուղղելով դէպի դիմացի ցանկասիւնակները (իհարկէ՛ նոյն նկատառումով):

նելով բոլորակի ներքեւի կենտրոնին՝ նա չի շարունակել նոյն՝ «սեւմագիր» նախօրինակի ուղղութիւնը. որպէսզի աջ ցանկասիւնակները տոհմանուները լրիւ շրջուած չգրուեն (ինչպէս որ մեզ հասել է նաեւ աջ կողմի դռնանուանումը), նա սկսել է դրանք տող առ տող թարգմանել-լրացնել վերեւի կենտրոնից դէպի աջ բոլորուող-իջնող («հայկական») տարբերակով:

Ի հարկէ, վերջին հանգամանքը կարող է տպաւորութիւն ստեղծել, թէ «Զօրանամակ»ի հայերէն պատճէն-նախօրինակը մտալոյացուել է հէնց այդպիսի՝ ժամացոյցի սլաքի ուղղութեամբ ընթացող կառուցուածքով, ընդ որում՝ սկզբում ունենալով «Հիւսիսային դուռն»ը, ապա՝ «Արեւմտեան»ը եւն: Սակայն, կարծում ենք, որ տուեալ տպաւորութիւնը պէտք չէ նման շփոթութեան տեղիք տայ. ամբողջական վերլուծութիւնից երեւում է, որ հայերէն տարբերակը մտալոյացուել ու իրագործուել է որպէս մինչ գրերի գիւտը շրջանառուած փաստաթղթի պարզ թարգմանութիւն (իրագործման ընթացքում ի յայտ եկած թերիներով), այլ ոչ թէ իբրեւ մի յատուկ տարբերակ: Տեղին նշենք նաեւ, որ նախորդ վերծանողները չեն փորձել խորանալ վաւերագրի կառուցուածքային առանձնայատկութիւնների մէջ եւ նրա ցանկասիւնակները ներկայացրել են պարզապէս նոր ժամանակների նախընտրութիւններին համապատասխանող դասաւորութեամբ («Արեւմտեան», «Արեւելեան», «Հիւսիսային», «Հարաւային»): Բայց աւելի արդարացուած կը լինէր այս խնդրում հնարաւորինս ճշգրիտ պատկերացում մշակելը, որ թոյլ կը տար կատարել խիստ ուշագրաւ թուացող պատմա-մշակութային եզրայանգումներ:

«Զօրանամակ»ի բնագիրը մեզ ամբողջական հասածի տպաւորութիւն է թողնում, իսկ «Գահնամակ»ն, ընդհակառակն՝ ըստ ամենայնի, բազմաթիւ անունների պակաս ունի վերջից (Ն. Արդոնցի հաշուարկով՝ երկու տասնեակից աւելի)⁴¹: Բայց արդէն

41 АДОНИЦ, Н., *Армения в эпоху Юстиниана*, 256: Ի հարկէ, նկատուած է, որ «Զօրանամակ»-ում եւս կան որոշ՝ յաճախ ակնյայտ ուղղելիք-վերականգնելիքներ: Օր.՝ բուռն է, քէ ակնյայտօրէն վերականգնելի-տեղափոխելի են Ամատունի (քնագրում՝ *Ամաակունի*) եւ Ընծաբին («Գահնամակ»ում՝ *Ընծայեցի*) իշխանատոհմերին վերագրուած գորաբանակների բուերը՝ Մ (200) եւ Տ (4000) (հմմտ. ուղղագիծ երկաթագիր Տ - Մ. Ընծաբին նախարարական «ագգի» գորաբուի՝ այս ձևով սրբագրման անհրաժեշտութիւնը նկատել է արդէն ՅԱՐՈՒԹԻԻՆԵԱՆ, Բ., «Զօրանամակ»ը Մոսկու խորնացու «Հայոց պատմութեան» տեղեկութիւնների լոյսով, 29): Կարելի է յիշել,

նկատուած է, որ դրա պատճառը զուտ տեխնիկական է. այդ՝ առանց բացառութեան փոքր իշխանատոհմերի անուններն, անկասկած, եղել են մեզ հասած միակ թերթը պարունակած ձեռագրի յաջորդ թերթի սկզբում⁴²: Ընդ սմին, կորսուած անունների մեծ մասը կարող է որոշ հաւանականութեամբ վերականգնուել «Զօրանամակ»ից (իսկ վերջինիս համեմատութեամբ՝ «Գահնամակ»ն աւելի ունի միայն երեք տոհմանուններ՝ ՄԹ. Նախներին, Կ. Քաղապետն արքունի եւ ԿԳ. Յուլն⁴³, եթէ, ի հարկէ, չհաշուենք թուով 11 երկրորդ-երրորդ իշխանաճիւղերը)⁴⁴: Պակասում են նաեւ բնագրի վերնագիրը եւ առաջին տառը (կամ տառերը): Սկզբնատառը չկայ՝ թերեւս, որեւէ գրչի վրիպման պատճառով. գրիչները յաճախ էին արտագրութեան պահին բաց թողնում հատուածի սկիզբնատառը կամ տողը՝ մելանագիրն աւարտելուց յետոյ դրանք գունագարդ նկարելու նպատակով, սակայն երբեմն մոռանում էին անել դա: Եթէ ընդունենք, թէ բնագիրն առանձին վերնագիր է ունեցել, ապա կարող ենք նաեւ ենթադրել, որ այն գրուած է եղել նախորդ մագաղաթաթերթի վերջում:

որ Արտագ խոշոր գաւառին տիրող Ամատունիները գոնէ 440, 445 եւ 450-451 թուականներին վարում էին Հայոց երկրի «առաջին... զինուորական» պաշտօնը՝ հագարապետութիւնը, իսկ Եղիշէին ու Փարպեցուն ծանօթ Ընծայեցի-Ընծաբին իշխանատոհմը յետագայի Տուրուբերան աշխարհի ոչ մեծ մախարարութիւններից էր (երկու փաստաթղթում էլ յիշուած՝ Մանդակունի եւ Սղկունի տոհմերից առաջ). ի դէպ, այն ոչ մի կապ չունէր յետագայի Վասպուրականի արևելքում ընկած Աննահիճոր գաւառի հետ (Թովմայ Արծրունու մօտ վերջինս մէկընդմէջ կոչուած է նաև *Ընծայից ձոր*), որ, բոլոր դէպքերում, նոյնպէս մեծ չէր:

42 ХАЛАТЯНЦ, Г., *Армянские Аршакиды*, Ч. I, 297 ("Всех княжеств в списке - 70: быть может, их было больше, так как до нас сохранился лишь один лист, исписанный до конца").

43 Ըստ Կ. Թումանովի՝ հարցականով նշուած ենթադրութեան (*Studies in Christian Caucasian History*, 231, ծմք. 283)՝ *Յուլն* = «Զօրանամակ»ի՝ *Յողկեպան* («Արեւելեան դուռն. է. ...Մ [(50) մարտիկ արք]»): Սակայն աւելի հաւանական է թուով՝ գրչական աղաւաղումների ենթակուած (դեռևս Ն. Ադոնցի դիտարկմամբ. *Армения в эпоху Юстиниана*, 256) *Յողկեպան* տոհմանունը համեմատելի համարել Սինիքում յայտնի *Չորք - Կապան* գաւառանունների հետ. ՅԱ.ԿՈՐԵԱՆ, Ա., *Պատմա-աշխարհագրական եւ վիճագրագիտական հետազոտություններ (Արցախ եւ Ռուսիք)*, Վիեննա-Երևան 2009, 282-283:

44 АДОНЦ, Н., *Армения в эпоху Юстиниана*, 256-257.

«Զօրանամակ»ի՝ մեզ հասած բնագրի կազմութեան ժամանակը Տրդատ Գ-ի դարաշրջանին կամ ամենաուշը՝ Խոսրով Կոտակի առաջին տարիներին վերագրելու տարբերակը վաւերագրի հաւաստիութիւնն ընդունող մասնագէտների մօտ կասկած չի յարուցում⁴⁵: Իրօք, փաստաթղթում արձանագրուած մի քանի նախարարական տներ Հայաստանում հաստատուել էին, ըստ հաւատարի աղբիւրագիտական տուեալների՝ Տրդատի իշխանութեան տարիներին (298-330), իսկ մի քանիսն էլ ոչնչացուել էին նրա որդու՝ Խոսրով Կոտակի օրօք (Մանաւագեաններ, Որդունիներ եւն): Փոխարէնը՝ մեզ հասած «Գահնամակ»ի թուագրման հարցում տեսակէտներն էապէս տարբերում են: Ն. Աղոնցի ու նրա հետեւորդների կարծիքով Սահակ Պարթեւի նամակը գրուել է մարզպանութեան ստեղծումից (այսինքն՝ 428ից) յետոյ⁴⁶: Բովանդակութեան ուշադիր վերլուծութեան հիման վրայ այդ կարծիքը չընդունելով՝ Բ. Ուլուբաբեանը ցոյց է տուել, որ «Գահնամակ»ն արտացոլում է մինչմարզպանական շրջանի պատկերը, ուստի՝ կարող է շարագրուած համարուել Ե. դարի առաջին քառորդում⁴⁷: Այս խնդրում վճռորոշ է «Գահնամակ»ում «ԻԳ. Գարդմանայ տէր» իշխանի յիշատակման փաստը, քանի որ միայն 428ին Ուտիք աշխարհը (եւ նրա կազմում Գարդման գաւառը) Վուամ Ե. Սասանեանի կողմից հանուեց մարզպանութեան վերածուած Հայաստանի կազմից ու միացուեց Աղուանից թագաւորութեանը (նոյն ժամանակ ստեղծուած Աղուանք-Առան մարզպանութեան կազմում): Բացի այդ, «Գարդմանայ» եպիսկոպոսական աթոռ է յիշատակում Ուխտանէսի երկում պահպանուած 30 եպիսկոպոսական թեմերի ցանկը («Յաղագս եպիսկոպոսաց, որք ընկալան աթոռ ի տեղիս տեղիս ի սրբոյն Գրիգորէ յիւրաքանչիւր գահս»), որ նոյն

45 ՇԱՀԻՆԵԱՆ, Լ., *Զօրանամակ*, 704. Հայ ժողովրդի պատմութեան էրեստոմատիս, 618 (հատուածի կազմող՝ ԱՐՐԱՀԱՄԵԱՆ, Ա.). ՅԱԿՈՐԵԱՆ, Ա., *Պատմա-աշխարհագրական եւ վիճագրագիտական հետազոտութիւններ*, 281-283:

46 АДОНИЦ, Н., *Армения в эпоху Юстиниана*, 262-263; ԵՐԵՄԵԱՆ, Ա., *Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»ի (Փորձ VII դարի հայկական քարտէզի վերակազմութեան ժամանակակից քարտէզագրական հիմքի վրայ)*, Երեւան 1963, 23. TOUMANOFF, C., *Studies in Christian Caucasian History*, 229-231; ԱՆԱՍԵԱՆ, Յ., *Հայկական մատենագիտութիւն*, հտ. Գ., 159:

47 ՈՒՆՈՒՅԱՆ, Բ., *Հիսիս-արեւելեան Հայաստանի նախամարզպանական շրջանի վարչա-քաղաքական վիճակի հարցի շուրջը*, 159-163. Նոյն, *Դրոսազներ Հայոց Արեւելից կողմանց պատմութեան*, 124-127:

պէս իրականում արտացոլում է 387ից 428 թուականների միջակայքի պատկերը (բնագրում. «...շարադրեցից եւ յայտ արարից գիրաբանչիւր գահս՝ որպէս Լուսաւորչին մերոյ սրբոյն Գրիգորի է կարգեալ եւ եղեալ զսեփիական աթոռընկալ եպիսկոպոսացն զկարգս... Այս երեսուն եպիսկոպոս, որք աթոռակալութեամբ ընկալան ձեռնադրութիւն ի սրբոյն Գրիգորէ...») ⁴⁸ :

Եւ վերջապէս՝ Բ. Ուլուբաբեանի ճշտումներից յետոյ պատմա-բանասիրական նոր քննութեան ենթարկելով մեզ հասած «Գահնամակ»ի բնագիրը՝ Բաբկէն Յարութիւնեանը փորձել է փաստարկել, որ Սահակ Պարթեւի նամակը կարող է թուագրուել 432ով (այսինքն՝ մարզպանական շրջանով), սակայն նրան յաջողող ցանկը պէտք է համարել Հայոց թագաւոր Խոսրով Դ-ի եւ Շապուհ Գ. Սասնեանի օրօք 388 թուականին հաստատուած «Գահնամակ»ը ⁴⁹ : Ուսումնասիրողը ենթադրում է, որ «Գահնամակ»ը Ճահապն Ծոփաց տէրի տակ նկատի ունի Ճահմնեաց Ծոփք (կոչուած նաեւ՝ Փոքր) գաւառի իշխանին (որ երկրի «բաժանքից» յետոյ գտնուում էր Հռոմէական կայսրութեանն անցած հատուածում), իսկ դա կարող էր լինել միայն այն տարիներին, երբ Արշակ Վերջին թագաւորի մահուանից յետոյ Խոսրով Դ-ն, Սասնեանների եւ Հռոմի միջեւ կայացած մի ժամանակաւոր համաձայնութեամբ, վերահսկում էր նաեւ Հայաստանի արեւմտեան մասը ⁵⁰ : Բայց միանգամից պէտք է նշել, որ Ճահապն եւ Ճահմնի անուանումների նոյնացումը (առկայ՝ դեռեւս Ն. Ադոնցի եւ Կ. Թումանովի մօտ) իրատ խնդրառու է թւում, քանի որ Ագաթանգեղոսի իշխանացանկում դրանց տակ հանդէս են գալիս երկու

48 ՈՒԽՏԱՆԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ, Պատմութիւն Հայոց, գլ. Ա.հ., 100: 428-451 բուականների վարչական փոփոխութիւնների խնդրի մասին մանրամասն տե՛ս նաև ՅԱՐՈՒԹԻԻՆԵԱՆ, Բ., Մեծ Հայքի թագաւորութեան հիսախարեւելեան մարզերի վարչա-քաղաքական կազմիւնը 387-451 թթ., ի ԲԵՃ, 1976, թիւ 2, 77-95. АРУТЮНЯН, Б., Административное деление закавказских владений Сасанидского Ирана согласно труду Елиши э, в Кавказ и Византия, вып. 1, Ереван 1979, 19-35; АКОПЯН, А., Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, Ереван 1987, 109-114; СЕМЕНОВ, И., Этнополитическая история Восточного Кавказа в III-VI вв., Автореф. дисс. ... канд. ист. наук, Махачкала 2002, 14:

49 ՅԱՐՈՒԹԻԻՆԵԱՆ, Բ., «Գահնամակի» թուագրման հարցի շուրջը, 62-74:

50 ՊՃ, գլ. Գ.խթ., 319-320:

տարբեր նախարարներ (բնագրում. «եալքներորդ՝ իշխանն Ծոփաց աշխարհին... չորեքտասաներորդ՝ իշխանն շահապն Զարաւանդ եւ Հեր գաւառի»)՝⁵¹ Փոխարէնը՝ «Գահնամակ»ի Ծոփքը, մեծ հաւանակա- նութեամբ, կարող է լինել Մեծ Ծոփքը (որ պարսկական մասում էր), ինչպէս որ ուղիղ ձեւով երեւում է Ագաթանգեղոսի երկի՝ յունարէն թարգմանութեամբ պահպանուած «Գրիգորի վարբ» կո- չուող տարբերակի իշխանացանկից. «եօքերորդ՝ իշխանը Մեծ Ծոփ- քի, որը Միջագետքի մօտ է գտնուում»⁵²: Ըստ այսմ՝ «Գահնամակ»ի սկզբնօրինակում պարզապէս կարելի է վերականգնելի համարել անգամ Ե. Շահապն, [Զ.] Ծոփաց տէր փին. Ե. Շահապն Ծոփաց տէր:

* * *

Բոլոր դէպքերում «Գահնամակ»ի բնագիրը թուագրող ու- սումնասիրողները նախ եւ առաջ յենուել են նրա սկզբնամասի վրայ՝ ընկալելով դրա բովանդակութիւնն այնպէս, թէ հայ նախա- րարների գահացուցակը Ս. Սահակ Պարթեւ կաթողիկոսը (388- 439, ընդմիջումներով) յայտնաբերել է Հայոց թագաւորի դիւա- նում (վերջին Արտաշէս-Արտաշէրի կամ Խոսրով Դ-ի) կատարած փնտռութիւն («Խնդիր արարեալ») արդիւնքում, որից յետոյ վաւե- րաթուղթը հաստատման է ուղարկուել Տիգրան՝ արքայից արքայ Վւսամ Ե Գոռին (420-438/439): Սակայն ամբողջ բնագրի ուշագիր վերլուծութիւնը եւ լեզուաբանօրէն հնարաւորինս ճիշտ տողա- տումն ու կէտադրումն աւելի հաւանական են դարձնում նրա ըն- թերցման այլ տարբերակ:

Նախ՝ թուում է, թէ ուսումնասիրողներին պարզապէս կաշ- կանդել է բնագրի ամենասկզբի պակասի տեղում աւելի քան մէ- կուկէս դար առաջ Մ. Էմինի առաջարկած «[Սա]խակայ Խնդիր

51 Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Աշխատութեամբ Տէր-ՄկրՏԵԱՆ, Գ. - ԿԱՆԱ- ՅԵԱՆՑ, Ա., Տփղիս 1909, գլ. ձժԹ., 414 (թիւ 795):

52 GARITTE, G., Documents pour l'étude du livre d'Agathange, Rome 1946, 73 (§ 98); Ագա- թանգեղոսի Պատմութեան յունական նորայայտ խմբագրութիւնը (Վարք), Թարգմանու- քիւն յունարէն բնագրից՝ ԲԱՐԹԻՎԵԱՆ, Հ., առաջարան եւ ծանօթագրութիւններ՝ Տէր-ՂԵՒՈՆՊԵԱՆ, Ա., ի Էջմիածին, 1966, թիւ Թ.-Ժ., 79; Ա.ԳԱԹԱՆԳԵՂՈՍ, Պատ- մութիւն Հայոց, Աշխարհաբար թարգմանութիւն ներածակնով ու ծանօթութիւն- ներով Տէր-ՂԵՒՈՆՊԵԱՆ, Ա., Երևան 1977, 178:

արարեալ...»⁵³ վերականգնումը՝ (Ն. Աղոնցը դա շեչտուած է դար-
 ձրեւէ՛ «[Իմ՝ Սա]հակայ...»): Իրականում շատ աւելի հաւանական է,
 որ կորսուել է միայն մէկ տառ, այն է՝ Ա սկզբնատառը «[Ա.]հա
 կայ խնդիր արարեալ» պարզ արտայայտութեան մէջ, որը բաղկա-
 ցած է «Ա.հա» եղանակաւորիչից եւ «կամ» բայից՝ գործածուած
 որպէս օժանդակ բայ «առնել» բայի անցեալ դերբայի հետ⁵⁴: Այդ
 «կորած» (ինչպէս ենթադրում էր, օր.՝ Բ. Յարութիւնեանը) ստոր-
 ոգեալը «յայտնաբերելով»՝ տեսնում ենք, որ բնագրի առաջին
 նախադասութեան գործող անձը ոչ թէ Սահակ կաթողիկոսն է,
 այլ հէնց Հայոց «Արտաշէս Թագաւոր»ը («[Ա.]հա կայ խնդիր արա-
 րեալ... յԱրտաշէսի Թագաւորի»): Դրանից յետոյ արդէն պարզ է
 դառնում, որ «խնդիր արարեալ»ն այդտեղ ունի ոչ թէ «որոնե-
 լու», այլ ուղղակի՝ «հայցելու, հարցնելու, հարցում անելու» իմաս-
 տը⁵⁵ (ըստ այդմ՝ յաջորդող «եթէ»ն պահանջող հարցական է
 դառնում), իսկ «գոր ի Տիսպոնն» հատուածն անհրաժեշտ է ըն-
 կալել իբրեւ երկու բառով ընդմիջուած «ի դրբան արբունի» հա-
 տուածին լրացնող (պայմանականօրէն պարզեցուած՝ «կայ խնդիր

53 Տե՛ս դեռեւս նրա՝ Գ. Ախվերդեանին հասցեագրած 2 Ապրիլի, 1851 թուակիր նա-
 մակում (Ա.Լ.Վ.ԵՔՍԱՆ, Գ., *Նամակներ*, 355) եւ *История Армении* Моисея Хоренска-
 го, 358:

54 «Բաղադրեալ ժամանակ է կազմում նաեւ կամ բայը՝ խոնարհուող բայի անցեալ
 դերբայի հետ. *հասեալ կամ* (հասել եւ), *եղեալ կայք* (պառկած է՛), *եկեալ կայ*
 (եկել է)» (Ա.Բ.Վ.ԵՔՍԱՆ, Վ., *Գրաբարի քերականութիւն*, Երևան 2010, 194):
 Նշուած մեկնագրութեան «Գրաբարի հատընտիր» բաժնի օրինակներից տե՛ս «կայր
 կախեալ յերևոյթ տեսիլ նշանակի, եւ փաղփաղէր մարմինն ի բարձուէն...» (էջ
 244. *Փաւստոսի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց*, Ս. Ղազար, Վենետիկ 1933,
 գլ. Գ.ծք., 185. *Մատենագիրք Հայոց*, հտ. Ա.-Բ., 375): Ս. Գրքից նշեմք *ահա-յով*,
 անցեալ դերբայով եւ օժանդակ բայ դարձած կամ-ով մի օրինակ՝ «*Համբարձ
 Աբրահամ զաչս իւր եւ ետես, եւ ահա խոյ մի կախեալ կայր զծառոյն սարե-
 կայ գեղջերաց*» (Մննդ. ԻԲ., 13), որի յունարէնում եւս առկայ են *ահա-ն* եւ բա-
 դադրեալ ստորոգեալ ("Και ἀναβλέψας Ἀβρααμ τοῖς ὀφθαλμοῖς αὐτοῦ εἶδεν καὶ ἰδοὺ κριὸς
 εἶς κατεχόμενος ἐν φυτῶ σαβεκ τῶν κεράτων"):

55 Ըստ Հայկագեան բառարանի՝ «խնդիր» գոյականի իմաստներն են (հտ. Ա., էջ 952).
 «Խոյզ, յոյզ, որոնումն», «Քննութիւն, հարցութորձ, վէն, տարակոյս լուծանելի,
 խուզարկութիւն բանից», «Պահանջումն», «Խնդրուած, հայցուած, իրն հայցեալ»:
 Այսպիսով՝ ստացում է. «Ահաւասիկ հարցում է արուել Արտաշէս Թագաւորի
 կողմից...»:

արարեալ յԱրտաշէսի թագաւորի՝ ի դըրան արժունի, գոր⁵⁶ ի Տիւպոնն, ...եթէ^o ես... տեսի»): *Նաեւ հասկանալի է դառնում, որ «Արտաշրի ի դիւանիւն»՝ ըստ ամենայնի, նշանակել է «Արտաշրական դիւան»՝ իբրեւ բնորոշում (եւ անգամ՝ գուցէ, անուանում) Իրանի պետական արխիւ-դիւանի (կամ առնուազն նրա՝ նորօրեայ եզրոյթով ասած՝ Փոնդերից մէկի), ընդ որում՝ աւելի հաւանական է՝ հէնց առաջին Սասանեան արքայի անունով: Վերջինս, ինչպէս դա պատկերացնում էին Ե դարի հայ հեղինակները (Խորենացու օրինակով), բացի իրենց հայրենիքը նուաճելուց ու նրա մեծ մասն աւերածութեան ենթարկելուց («գերելով՝ գլոյով մասն աշխարհիս յաւեր դարձուցանէր»⁵⁷)՝ դրա հակառակն էլ էր արել. «գեղեցկապէս յարդարեալ գաշխարհս Հայոց՝ ի կարգ առաջին [այսինքն՝ նախկին, Վաղարշակ թագաւորի օրերի!] հաստատէր»⁵⁸: Եւ ահա, հերթական անգամ Տիգրան ուղարկուած Սահակ Պարթեւից ակնկալել են հէնց այդտեղ՝ «Արտաշրի ի դիւանիւն» փնտրել ու գտնել (եթէ^o ես ... տեսի»)* անհրաժեշտ փաստա-

56 Գուցէ, իրօք, վերականգնելի համարելով՝ որ փխն. գոր, ինչպէս նկատել է Բ. Յարութիւնեանը («Գահնամակի» բուագրման հարցի շուրջը, 73): Ուսումնասիրողն առաջինն է միշտ նկատել նաև այս հատուածի վերջում՝ «տեսի» բառից յետոյ նախադասութիւնն աւարտելու անհրաժեշտութիւնը՝ թէկուզ եւ չգգալով նրանում «եթէ»ի հարցական բնոյթը (անդ):

57 ՊՁ, գլ. Բ.հգ., 215: Ի դէպ, մեծ բարերախտութիւն կը լինէր, եթէ այս արտայայտութեան մէջ կէտադրման՝ մեր կատարած փոփոխութիւնը (1913ի բնական բնագրի համեմատ) նպաստէր՝ յարթահարելու վերջին տասնամակներում հայագիտութեան մէջ վաստակաշատ գիտնականների մի շտապողական վրիպման հետևանքով սպրդած այն թիրրնկալումը, իբրև թէ տուեալ արտայայտութիւնից բխում է Մեծ Հայքի թագաւորութեան քաժանուած լինելը Սասանեան Իրանի եւ Հռոմէական կայսրութեան միջև Գ. դարի կէսերին (ՊՐՀ, 1976, թիւ 1, 67-88. Հայ ժողովրդի պատմութիւն, հտ. II, Երևան 1984, 39-43. Հանդէս Ամսօրեայ, 2007, 160-171): Այդ պնդումը լոկ գրարարի շարահիւսութեան նրբնազնկերի բույլ իմացութիւն է ցուցանում (պիտի ընկալել, պայմանականօրէն պարզեցնուած՝ «գլոյով մասն աշխարհիս գերելով-յաւեր դարձուցանէր») եւ կոպտօրէն անտեսում յարակից ենթատեքստերը, այդ թւում՝ հէնց շարունակութեան մէջ՝ «Յորմէ գաղթեալ նախարարն Հայոց՝ ...ի Յոյնս պատիւնէին» (ա՛յսպէս, այլ ոչ թէ՝ «Հայաստանի ոչ յոյով, Յունական քաժին»): Բայց, ցաւօք, այն դեռևս տեղափոխում է ատենախօսութիւնից ատենախօսութիւն եւ փարտէզից փարտէզ:

58 ՊՁ, գլ. Բ.հե., 215-216 (ուշագրաւ է նաև՝ «Եւ գերկիրս գրով ընդ հարկաւ իրով արկանէ եւ ամենելիմբ զիր անուն հաստատէ»): Ա.ՆԱ.ՍԵԱՆ, Յ., Հայկական մատենագիտութիւն, հտ. Գ., 159-160:

Թուղթը: Այն, բարեբախտաբար, յայտնաբերուել է, ապա հաստատուելով արքայից արքայի ու կաթողիկոսի կնիքներով՝ Սահակ Պարթեւի կողմից ուղարկուել է (բնականաբար՝ Հայաստան)՝ «Քաղոց ամսի 17» թուակիր մի նամակ-առաջաբանով («գիր արարի ես՝ Սահակ կաթողիկոս»)՝ այն մասին, թէ «Նորին բարերարութիւն» Հայոց թագաւորն (այլ ո՛չ թէ Պարսից արքան) ինչպէ՛ս նախկին ժամանակների օրինակով կարգադրի (ապառնիով, այլ ո՛չ թէ յորդորական հրամայականով. «եթէ որպէ՛ս Ձեր բարերարութիւնդ հրաման տացէ... որպէս յառաջ առ Հայոց ազգին...») գահակարգութեան խնդիրները «Հայոց ազատաց եւ տանուտէրանց» համար՝ առաջարկուած «արդար եւ ճշմարիտ» ձեւով նրանց իր «դիւանի շահամարի» մէջ «առնելով» (դասակարգելով-հաշուառելով)⁵⁹: Եւ այդ ամէնը, կրկին նշենք՝ ի պատասխան Արտաշէս թագաւորի՝ անշուշտ, Սահակ Պարթեւի հետ նախապէս մտայղացուած ու պատրաստուած պաշտօնական հարցումի («Խնդիր արարեալ ի դրրան արժունի յԱրտաշէսի թագաւորի...»):

Որ Արտաշէս թագաւորի իշխանութեան սկզբներում Հայոց կաթողիկոսը Տիգրան է հասել եւ այնտեղ կարեւորագոյն խնդիրներ լուծել՝ ժամանակին դիտարկել է արդէն Գր. Խալաթեանցը⁶⁰: Այդպէս նաեւ՝ որոշ հայ բանասէրներ, օր.՝ Հ. Կ. Քիպարեանը, որը Սահակ Պարթեւի մասին գրում էր. «420-421 զինքը Տիգրան կը գտնենք, ուր գուցէ կ'երթայ Արտաշէսի թագաւորութիւնը յաջողակաւ համար, եւ պարսիկ արքային վրայ իր ունեցած հեղինակութեամբ դադրեցնել կու տայ քրիստոնէաներու դէմ հանուած հալածանքը»⁶¹:

59 «Առնել» բայի երկրորդ իմաստով (ի Հայկազեան բառարանի, հտ. Ա., 308՝ «Կառուցանել, կարգել, համարիլ»):

60 ХАЛАТЯНЦ, Г., *Армянские Аршакиды*, Ч. I, 296. "...католикос Саак ездил в Персию в дни армянского царя Арташеса, при персидском царе Враме V, быть может, даже для утверждения Арташеса на престоле... 17-го числа армянского месяца к'ах'оца... католикос Саак посетил в персидской столице Ктезифона персидскую государственную канцелярию и в архиве царя Арташира (379-383) видел касающийся армян наместника наместник — податный список *крестьян, составленный, быть может, по приказанию этого царя после разделения Армении между Персией и Византией*". Վերջին միտքն (ընդգծուած), իհարկէ, գրեթէ ամբողջութեամբ սխալ է:

61 Քիպարեան, հ. Կ., *Պատմութիւն հայ ինն գրականութեան*, Ա. Ղազար, Վեներտիկ 1992, 75:

Սակայն Սահակի նամակի հասցեատիրոջ հարցում Գր. Խալաթեանցի ընկալումը, ցաւօք, չի տարբերում միւսներից⁶², ինչպէս, օր.՝ Ստ. Մալխասեանցի ընկալումից, որի թարգմանութեան մէջ կարգում ենք. «գրեցի Վոամ արքայից արքային և բարերարին [այնինչ Սահակն ուղիղ ձեռով չի նշում հասցեատիրոջը - Ա. Յ.] թէ թող ձեր բարերարութիւնը չկայ որպէս - Ա. Յ.] հրաման տայ՝ Հայոց ազատների և տանուտերների ցուցակագրութիւնը կազմել ձեր դիւանում...»⁶³։ Բայց բնագրից ամենաշատ շեղումները Մ. Էմինին են (վերծանութեան ցանկացած տարբերակով)՝ կրկնուած Ն. Աղոնցի կողմից⁶⁴։ Խիստ դժուար է հասկանալ, թէ գիտնականների պատկերացմամբ՝ ինչպէ՞ս կարող էր Սահակ Պարթեւը գրել՝ «Եւ է այսպէ՛ս արդար ևւ Բշմարիտ», եթէ իր նամակն ուղղում էր Պարսից արքային։ Նոյնը՝ Հայոց կաթողիկոսի կնիքը դնելու հարցում, եթէ կնքուող փաստաթուղթը պիտի պահուէր Տիգրանի դիւանում։

Ամէն ինչից բացի, նախորդ վերծանողներին ու թարգմանիչներին խանգարել է նաեւ բնագրի առաջին սիւնակի 7րդ տողաւարտում պատուոյ նշանի տակ վերցուած Ժէ (17) թուանշանից յետոյ գրչի դրած վերջակէտը, որին նաեւ երկու խոշոր գլխատառեր են յաջորդում՝ Ի եւ Վ («տեսի ի քաղոց ամսոյ ի Ժէ։ Ի Վոամայ...»)՝⁶⁵։ Վստահելով դրան՝ հրատարակիչներն այդ նոյն տողում են աւարտել իրենց վերականգնած բնագրի առաջին նախադասութիւնը (միայն Բաբելէն Յարութիւնեանը խախտեց այդ «ա-

62 ХАЛАТЯНЦ, Г., *Армянские Аршакиды*, Ч. I, 296, "Тут он письменно обращается к "царю царей и благодетелю" (по-видимому, таков был титул этого властелина) Вралу, прося его о следующем: "чтобы твоё благодеяние повелело, как то было прежде у армян, произвести для твоей канцелярии [новую] общую перепись армянских дворян и владетелей, дабы [сообразно с тем] места их в разрядном списке были определены".

63 ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆՍԻ, *Հայոց պատմութիւն*, 1940, 338:

64 АДОНЦ, Н., *Армения в эпоху Юстиниана*, 270 ("Я Саак искал во дворе царя Арташеса того, о чем заговорил в Ктезифоне, что я видел гатакан пәма Арташира в диване [17 месяца к'аг'ош]. И обратился я католикос Саак к Вралу... с просьбой: да прикажет Ваше Благодеяние сделать перепись армянским азатам и танутерам для вашего дивана..."). Տե՛ս նաև ծմք. I (որտեղ քննարկ խաբարուածութեան վերաբերեալ ուսումնասիրողի քազմաթիւ բողոքներից ոչ մէկն արդարացի չէ) և *История Армении* Моисея Хоренскаго, 1858, 358:

65 Դրանցից մէկի՝ մագաղաթեայ պատառիկի գոնէ պիշանեան լուսատիպ նկարում յստակ երևացող Ի-ի փոխարէն հրատարակիչները եւ են ընթերցել:

ւանդոյթը»), որի հետեւանքով ամսաթիւը կտրուել է Սահակի ուղարկած նամակից («գիր արարի եւ՝ Սահակ կաթողիկոս...») եւ կապուել արքունի դիւանում «Ռամական ցամակը» տեսնելու գտնելու հետ: Իրականում, սակայն, դժուար է նկատել, որ անյայտ գրչի համար հիմք են ծառայել, ամենայն հաւանականութեամբ, նախօրինակից եկած՝ թուանշան ցուցանող կրկնակէտերը («ի *:ժէ:»), որոնցից երկրորդը նա սխալմամբ ընկալել է իբրեւ վերջակէտ: Ի դէպ, հրատարակիչները շտապողաբար են վստահել նաեւ գրչի յաջորդ վերջակէտին, որ նա դրել է «նոյնպէս ներսնե» բառերից առաջ: Այն յետ տանելով ու դնելով «Որ յայսմ հետէ»ից առաջ (այսպիսով ընկալուում է. «Որպէսզի⁶⁶ այսուհետեւ... գահ[ակարգ]ը յայտնի լինէր, ...կնքեցիմք Գահնամակը...»)՝ յաջողում է միեւնոյն նախադասութեան մէջ չլթողնել բայի տարբեր ժամանակներով խոնարհուած երկու ստորոգեալները («հրաման տացէ» եւ «ի յայտ լինէր») եւ իրարից ոչ շատ հեռու կրկնուած «Հայոց ազատաց եւ տանուտերանց»ներն ու «նոյնպէս»ները: Ստացուող նախադաս, նպատակի պարագայ երկրորդական նախադասութեան կապակցութեամբ հմմտ. «կարելոր է նորից ընդգծել, որ նպատակի իմաստը դրսևորելու համար երկրորդական նախադասութիւնների ստորոգեալը դարձեալ դրուում է ստորադասական եղանակի բայածուերով (առաջին եւ երկրորդ ապառնիներով), որոնք բացառապէս ընդական եղանակի ապառնի ժամանակի համարժեքով են հանդէս գալիս... Շարադասութեան տեսակէտից՝ առհասարակ գլխաւոր նախադասութիւնը լինում է առաջադաս, իսկ երկրորդականը՝ յետադաս: Բայց երբ հեղինակը իր հաղորդման մէջ ուզում է ընթերցողի ուշադրութիւնը սեւեռել նպատակ ցոյց տուող երկրորդական նախադասութեան բովանդակութեան վրայ, այդ դէպքում վերջինս դրուում է նախադաս»⁶⁷: Լեւոն Խաչերեանը Որ շաղկապով նպատակի պարագայ երկրորդական նախադասութեան օրինակներ է նշում Սաղմո-

66 Հմմտ. «[նպատակի պարագայ] երկրորդական նախադասութիւնները գլխաւորին կապուում են հիմնականում գի շաղկապով, իսկ համեմատաբար սակաւ դէպքերում՝ որպէս գի, թէ, եթէ, որ շաղկապներով... Յիշեալ շաղկապներին գլխաւոր նախադասութեան մէջ ընդհանրապէս յարաբերեալ չի համապատասխանում. միայն բացառիկ դէպքերում հանդիպում են վասն այնորիկ, վասն այսորիկ, վասն նորա, վասն որոյ, յայն սակա յարաբերեալները» (ԽԱՉԵՐԵԱՆ, Լ., Գրարարի շարահիւստիւն, Ի Հանդէս Ամսօրեայ, ՃԷ. տարի, 1993, 78. սկիզբը տե՛ս Հանդէս Ամսօրեայ, ՃԵ. տարի, 1991, 1-49, ՃԶ. տարի, 1992, 15-63):

67 Անդ, 81:

սից (ԼԱ, 9. «Մի՛ լինի՛ք որպես զճիս եւ զջորիս, զի ոչ գոյ ի նոսա իմաստութիւն. ի սանձս եւ ի դանդաւանանդս նմիւնցես զկգակս նոցա, որ առ քեզ ինչ ոչ մերձեցան [մերձեցիցին]») եւ *Եզնիկ Կողբացուց* (էջ 113. «Զհագար ամ յաշտ արար [Զրուան], զի թերեւս որդի մի լինիցի նմա, որում անուն Որմիզդ, որ զերկինս եւ զերկիր եւ զամենայն՝ որ ի նոսա, առնիցէ»)՝⁶⁸:

Մի փոքր էլ յետ վերադառնալով՝ մանրամասնենք, որ Սահակի նամակ-առաջաբանի սկզբում մեր կողմից վերականգնուած «[Ա.]իա» եղանակաւորիչ բառը՝⁶⁹ բազմաթիւ այլ դէպքերում եւս տեսնում ենք միջնադարեան Թղթերի, Ճառերի, ինչպէս նաեւ մէջբերուած ուղղակի խօսքերի եւ կարեւոր հատուածաբաժանումների սկզբում (նաեւ՝ «Եւ ահա», «Զի ահա», «Արդ ահա», «Ահաւասիկ» տարբերակներով): Օր.՝ նրանով է սկսւում «Գիրք բղթոց»ի հէնց այն նամակը (Թիֆլիսեան տպագրում՝ ԶԹ.), որ Հ. Նորայր Պողարեանի աշխատասիրած երկրորդ հրատարակութեան մէջ գրուած է առաջին տեղում («Ա. Երանելւոյն Մակարայ՝ Սրբոյ քաղաքին Երուսաղէմի հայրապետի՝ Կանոնական թուղթ ի Հայս... Ահա վասն ահին եւ երկուդին Աստուծոյ եւ ի փափագ սիրոյ բարեպաշտութեան ձերոյ փութացայ գարթուցանել զբարեսէր եւ զպարզամիտ սիրոս ձեր...»)⁷⁰: Նոյն հրատարակութեան երկրորդ փաստաթղթում (Թիֆլիսեան տպագրում՝ ԶԸ.) «Եւ ահա»ով է սկսւում հասցէագրութեանն ու ոճական նախաբանին յաջորդող առաջին բովանդակային պարբերութիւնը («Բ. Սրբոյն Կիրդի եպիսկոպոսի՝ առ Նեստոր... Առ սուրբ եւ աստուծապաշտ եւ պաշտանակից մեր Նեստոր... ողջոյն: ... Եւ ահա մեծ սիւնհոդոսն որ եղև...»)⁷¹: «Ահա»ով է սկսւում նաեւ Օձնեցուն վերագրուող «Նորին տեսն Յովհաննու Հայոց կաթուղիկոսի՝ Ընդդէմ այնոցիկ, որ ապականեն գուրբ խորհուրդն ի ձեռն խմորոյ եւ ջրոյ» վերտառութեամբ նամակը՝ հետեւեալ շարադասօրէն ուշագրաւ սկզբով. «Ահա յառաջագոյն ծանուցեալ առաքելոցն՝ զապստամբութիւն հերձուածոյն ի ճշմարիտ հաւատոյն, եթէ այլայլեն զխորհուրդ տնարե-

68 Անդ, 83: Հմմտ. *Եզնիկայ վարդապետի Կողբացոյ Եղծ աղանդոց*, Ս. Ղազար, Վենետիկ 1826, 113:

69 Ա.Ռ.Ա.ՔԵԼԵԱՆ, Վ., *Գրաբարի քերականութիւն*, 220:

70 *Գիրք բղթոց*, Երուսաղէմ 1994², 1: Տե՛ս նաև *Գիրք բղթոց*, Թիֆլիս 1901, 407. *Կանոնագիրք Հայոց*, հտ. Բ., Աշխատասիրութեամբ ՅԱ.ԿՈՒՅԱՆ, Վ., Երևան 1971, 216:

71 *Գիրք բղթոց*, 10: *Գիրք բղթոց*, 1901, 460:

նութեանն Քրիստոսի: Յառաջագոյն հաստատեցին գղեղ բժշկութեան ի գիրս եւ ի գլուխս ընթերցարանաց...»⁷²: *Հասցէագրութիւնից յետոյ այդպէս են սկսուում եւս երկու թղթեր՝ Աղեքսանդրիայի Պետրոս հայրապետի՝ Կոստանդնուպոլսի պատրիարք Ակակին ուղղուած Իններորդը* («Ի՛Լ... Ահա արժանի եղեր, սուրբ հա՛յր իմ, տեսանել զփառս Տեառն մերոյ...») *եւ Կիւրիոն Վրաց կաթողիկոսի՝ Հայոց Աբրահամ Աղբաթանեցի հայրապետին ուղղուած Երրորդը* («Ահաւասիկ» *տարբերակով*. «Ձ... Ահաւասիկ այս եւ ի մէջ երրորդ թուղթ գրեցաւ առ ձերում սրբութիւնդ: Եւ ե՛ս զսահման հաշտութեան պիմտ պահեմ...»⁷³): «Ահա»*ով է սկսուում* «Երանելւոյն Թեոդորոսի [Քոթեմաւորի]՝ Ընդդէմ Մայրագումացոյն» *ճառը*. «Ահա այժմ նորահրատ տոչորեցաւ բոց եւ գրեղմնաբեր տունկս բանական դրախտին... համրացուցանել մարակի...». *դրան յաջորդող պարբերութեան սկիզբն է*. «Քանզի ահա վերայայտեցան այժմ ի տանս Թորգոմաց նորածին դառնութեան զարմֆ...»⁷⁴: *Իբրեւ կարեւոր հատուածաբաժանումների սկիզբ՝ երկու օրինակ յիշենք Յովհանն Օձնեցու* «Սակս ժողովոցն, որ եղեն ի Հայս» *երկից, որի վերջին հատուածում կանոնական կարեւոր դրոյթներից առաջ հեղինակը երկիցս յիշատակում է իրեն* («Ահաւասիկ զայս գրեցաք կանոնս՝ եւ՝ Յովհաննէս Հայոց կաթողիկոս, ամենայն եպիսկոպոսաւ եւ քահանայիւք եւ ուխտի մանկամբք եկեղեցւոյ սրբոյ...». «Ահաւասիկ ես՝ Յովհաննէս Հայոց կաթողիկոս, գրեցի իմով ձեռամբ զայս կանոնս, հաստատութեամբ սուրբ հաւատոյ...»⁷⁵): *Եւ իբրեւ մէջբերուած ուղղակի խօսքի սկիզբ՝ մի քանի օրինակ նշենք Մովսէս Դասխուրանցու (պատմագրութեան մէջ կոչուած նաեւ՝ Կաղանկատուացի)* «Պատմութիւն Աղուանից»*ում բառացի արտագրութեամբ պահպանուած՝* «684 թուականի պատմութիւն» *անուանուած երկից. այստեղ «Ահա»ով են սկսուում Ուխտանէս կաթողիկոսի, Վարազ Տրդատ իշխանի եւ Իսրայէլ եպիսկոպոսի խօսքերը (համապատասխանա-*

72 *Գիրք քրթոց*, 467 (մի փոքր փոփոխել եմք կետադրութիւնը): *Գիրք քրթոց*, 1901, 234 (ԾԸ):

73 *Գիրք քրթոց*, 346: *Գիրք քրթոց*, 1901, 185:

74 *Յովհաննոս Իմաստասիրի Աւանցւոյ Մատենագրութիւնը*, Ս. Ղազար, Վեներտիկ 1833², 171:

75 Յովհաննէս ԿԱԹՈՂԻԿՈՍ ՕՁՆԵՑԻ, *Սակս ժողովոցն, որ եղեն ի Հայս*, Գիտա-բնական բնագիրը ՅԱԿՈՒԵԱՆ, Ա., ի *Հանդէս Ամսօրեայ*, ՃԻԳ. տարի, Վիեննա-Երևան 2009, 130, 134: *Գիրք քրթոց*, 490, 492 (ՁԸ). *Գիրք քրթոց*, 1901, 231-232 (ԾԷ):

բար՝ «Ահա առաքեաց մեզ Տէր ի Սիովնէ գաւազան գաւրութեան, եւ սովաւ տիրեսցուք մերոց քշնամեաց...». «Ահա հարկք, որ եղան ի վերայ մեր ի դժնդակ ազգէն Տանկաստանեաց, յոյժ վտանգեալ տարակուսեացէ գմեզ...». «Ահա զխոստմունս սիրոյ քո, զոր ունիս առ Աստուած...»⁷⁶): *Վերջում յիշենք, որ Ս. Գրքում, որի մեծագոյն մասի թարգմանիչը եւ խմբագիրը Ս. Սահակ Պարթեւն էր, «Ահա»ն հանդիպում է 331 անգամ (ըստ համաբարբառի⁷⁷. Համեմատութեան համար՝ Խորենացու մօտ մէկ տասնեակից պակաս է), ընդ որում դրա քառորդ մասը նախադասութիւնների սկզբում է: Եւ նկատի ունենանք, որ անհրաժեշտութեան դէպքում օրինակների թիւը կարելի է աւելացնել:*

*Վերջում Ս. Գրքից բերենք նաեւ մի զուգահեռ՝ «կայ ինդիր արարեալ յ Արտաշէսի արքայի» - «Արտաշէս արքայի կողմից հարցում է արուել» ընկազման համար. «Եւ մնացեալ բանքն Ոգիայ՝ առաջինք եւ վերջինք՝ գրեալք են յԵսայեայ որդւոյ Ամովսայ մարգարէի» (Բ Մնաց. ԻԶ, 22): Նոյն գրքում յատկապէս առատ են օրինակներ Ահա-յով ու բաղադրեալ ստորոգեալով (թէպէտ վերջինիս յաջորդում են միայն ներգոյական հոլովով դրուած պարագաներ), որոնցից մի քանիսը եւս բերում ենք. «Եւ մնացեալ բանքն Արիայ եւ գործք նորա եւ խօսք նորա, *ահա գրեալ են ի գիրս մարգարէին Ադդովայ*» (Բ Մնաց. ԺԳ, 22); «Եւ մնացեալ բանքն Յովասու՝ *ահա գրեալ են ի գիրս քազաւորացն*» (ԻԴ, 27); «Եւ մնացեալ բանքն Եզեկեայ եւ ողորմութիւն նորա *ահա գրեալ է ի մարգարէութեանն Եսայեայ որդւոյ Ամովսայ մարգարէի, եւ ի գիրս քազաւորացն Յուդայ եւ Իսրայելի*» (ԼԲ, 32); «Եւ ասաց ողբս Երեմիաս ի վերայ Յովսեայ, եւ ամենայն իշխանքն արք եւ կանայք, ասացին զողբսն... եւ *ահա գրեալք են ի քառս ողբոցն*» (ԼԵ, 25):*

76 Ա.Ն.Ա.ՆՈՒՆ, 684 *թուականի պատմութիւն*, Գիտա-բնական բնագիտական ՅԱԿՈՐԵԱՆ, Ա., ի *Մատենագիրք Հայոց*, հտ. Գ.-Ե., Ե. դար, Անթիլիաս 2005, 820, 868, 888: ՄՈՎՍԷՍ ԿԱՂԱՆԿԱՏՈՒԱՑԻ, *Պատմութիւն Ադուանից աշխարհի*, Քննական բնագիրք եւ ներածութիւնը ԱՌԱՔԵԼԵԱՆ, Վ., Երևան 1983, գլ. Բ. իր., 184, Բ. լր., 237, Բ. խա., 258:

77 *Համաբարբառ Հին եւ Նոր կտակարանաց*, Աշխատասիրութիւն ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐԵԱՆ, Թ. վրդ., Երուսաղէմ 1895, 28-30:

* * *

Մեզ հասած «Գահնամակ»ի կազմման պատմական համատեքստը լիարժեք ճշտելու համար անհրաժեշտ է նամակ-առաջաբանի հաղորդած տուեալներին զուգահեռ քննարկել (ինչպէս որ դա արել են նաեւ նախորդ աղբիւրագէտները) Մովսէս Խորենացու «Պատմութիւն Հայոց»ում պահպանուած այն տեղեկութիւնները, որ վերաբերում են Տիգրանում Սահակ Պարթեւի գործունէութեան երեք-չորս դէպքերին՝ 380 կամ 390ական, 414ին եւ 428-432 թուականներին⁷⁸: Դրանցից առաջինը, որ ուսումնասիրողների կողմից նկատուած խիստ ուշագրաւ մանրամասներ է պարունակում, Պատմահօր որդեգրած ժամանակագրական համակարգի թերիւների պատճառով⁷⁹ նաեւ ակնյայտ հակասութիւններ է ցուցաբերում: Խորենացու խօսքերով՝ Վռամշապուհ թագաւորը, որն իր ակազ եղբօրը՝ Շապուհ Գ. Սասանեանի կողմից (ըստ Պատմահօր ժամանակագրական պատկերացումների՝ Շապուհ Բ.ի կողմից) գահընկէց արուած Խոսրով Դ. թագաւորին յաջորդել էր 388 թուականին (իսկ, ըստ ամենայնի, Յագեբերտ Ա.ի կողմից պաշտօնական հաստատմամբ՝ 399ին⁸⁰) «հրաժարէր առանց հրամանաց արքայից արքայի առնել զայն [իւնա՛ Համագասպ Մամիկոնեանին նշանակել սպարապետ]... Վասն որոյ առեալ ի նմանէ թուրքս՝ ... ինքնին չոգաւ [Սահակն, որ կայտնիկոս էր 388-ից] առ Արտաշիր Պարսից արքայ [sic! - 379-383/384⁸¹], որ յետ եաւթանասուն ամի թա-

78 Պէ, գլ. Գ. ծա., 322-324 - Գ. ծե., 329-330 - Գ. կդ.-կե., 348-352:

79 Մանրամասն տե՛ս անգլերագանցելի մնացած՝ ՍԱՐԳՍԵԱՆ, Գ., *Մովսէս Խորենացու «Հայոց պատմութեան» ժամանակագրական համակարգը*, Երևան 1965:

80 Ա.ՆԱՆԵԱՆ, Կ. Պ., *Գրոց գիտի թուականը եւ Վռամշապուհ Հայոց թագաւորի վեցերորդ տարին*, ի *Բագմավէպ* 1985, 138 (յօդուածի ծանօթագրուած վերահրատարակութիւնը տե՛ս Միջագային գիտաժողով՝ նուիրուած Հայոց գրերի գիտի 1600ամեակին. Երևան, 12-17 Սեպտեմբերի, 2005, *Ջեկուցումների ժողովածոյ*, Երևան 2006, 589): Հեղինակը 414 թուականին վախճանուած Վռամշապուհի 21ամեայ իշխանութեան (ըստ Խորենացու ժամանակագրական տուեալի) ոչ պաշտօնական սկիզբը դնում է 393ից, սակայն չի քացառում նաեւ 388/389 թուականի հնարաւորութիւնը:

81 Սասանեան արքաների ժամանակագրութիւնը (որ շարունակում է մնալ տարբերակներով) տե՛ս ХУРШУДЯН, Э., *Армения и Сасанидский Иран (Историко-культурологическое исследование)*, Алматы 2003, 387: նաեւ ՆԷՕԼԴԷՔԷ, Թ., *Պատմութիւն Սասանեան տերութեան*, Մանօթութիւններով եւ յաւելուածով, Թարգմանեց ԳԱՐԱՄԵԱՆ, Ն., Ս. Էջմիածին, Վաղարշապատ 1896, 93-96:

գաւորութեան հարցն կալաւ գտերութիւնն ամա չորս: Եւ մեծարի ի նմանէ յոյժ... Որոյ զրնան կատարեալ զխնդիրսն, նախ՝ վասն փեսայի նորա Համագասայայ, դարձեալ եւ վասն մնացելոցն մեղուցեալ նմա ազգացն Կամսարական եւ Ամատունի... հրամայեաց գտունս երկափանջիւրոցն՝ զկալեալսն յարժունիս՝ դարձուցանել ի նոսա, բայց միայն ի գահ հայրենի ո՛չ հաստատել... իսկ զազգն Համագասայայ, որ է տոհմ Մամիկոնեան՝ ի վեր մատուցանել, զի կարգեսցին ունել զհինգերորդ գահ նախարարացն Հայոց, եւ ի դիւանի իւրում գրել» (*Հարունակութեան մէջ ուշազրաւ է նաեւ. «Զի գերկուս գայս այսպէս պահէին սովորաբար. զի յորժամ նստէր արքայ նոր, նոյնժամայն փոխէին գորամ՝ գտեալ ի գանձս արժունի, զնորայն տպաւորեալ պատկեր, եւ զգիր դիւանին յայլ փոխեալ նորա անուամբ՝ սուղ ինչ զանագանեալ, ոչ բառնալով զհինն: Իսկ եթէ յամիցէ ի տերութեանն ամա բազումս եւ արասցէ աշխարհագիր նոր, թողուն զայն, որ ի հնոյն փոխեցաւ, զի միայն նորոյն վերագրեսցի անուն: Արդ՝ Արտաշիր ոչ ժամանեալ ի կարմութենէ աւուրցն ա՛յլ առնել աշխարհագիր՝ յայնմ որ յառաջնոցն փոխեաց, իւր անուամբն հրամայեաց գրել...»*)⁸²:

*Այս տեղեկութիւնները հաղորդող Պատմահայրն, անշուշտ, ամենեւին չի գիտակցել Սահակ Պարթեւի այս այցը Արտաշիր Բ-ի հետ կապելուց առաջացող ժամանակագրական հակասութիւնը եւ անգամ պնդում է, որ հէնց այդ արքայից արքան է պատասխան նամակով Հայոց թագաւորին համապատասխան յանձնարարութիւններ տուել (նամակի սկիզբը. «Մագղեզանց քաջ Արտաշիր արքայից արքայ՝ առ երբայր Վռամշապուհ թագաւոր Հայոց՝ ողջո՛յն շատ: Ընկալայ զգրեալս քո...»)*⁸³: *Դրանց մէջ մեզ համար կարեւոր է. «զՀամագասայ կացուցն՝ս ի վերայ գաւրացոյ սպարապետ՝ մեր հրամանաւ, եւ ազգի դորա տացն՝ս զգահն հինգերորդ»⁸⁴ պատուոյ նախարարացոյ... եւ գտունս վնասակարաց ազգացոյ, զորս կալաք յարժունիս, թողցն՝ս ի բաց՝ աներկիւղաբար ժառանգել նոցին մնացորդաց, բայց գահուց հայրենականաց պատուոյն մի՛ արասցես արժանի. զի եւ մեք ի մերում դիւանի հրամայեցաք գրել»:* *Ինչպէս*

82 ՊՀ, գլ. Գ.ծա., 322-323:

83 ՊՀ, գլ. Գ.ծբ., 323-324:

84 Այստեղ բնական հրատարակութեան աշխատասիրողների դրած բուրք շփոթեցնում է. պետք է ընկալել (պայմանականօրէն պարզեցնած)՝ «զհինգերորդ պատուոյ-գահն նախարարացոյ»:

նկատում ենք, Խորենացին երկու գլուխներում էլ արծարծում է Սասանեան արքայի եւ Սահակ կաթողիկոսի կողմից քննարկուած (եւ լուծում ստացած) հայ նախարարների գահակարգութեան խնդիրները, սակայն ոչինչ չի ասում ուղղակի «Գահնամակ»-փաստաթղթի վերաբերեալ՝ հակառակ, օր.՝ Բ. Յարութիւնեանի վարկածի (այն, որ որոշ վերականգնումով՝ «Գահնամակ»ում եւս Մամիկոնեանների դիրքը հինգերորդն է, ոչինչ չի փոխում, քանի որ Սահակի խնդրանքին անսած Պարսից արքայի վճռից յետոյ այդ կարգը պիտի բնականօրէն շարունակուած լինէր գոնէ տասնամեակներ. նոյնը վերաբերում է նաեւ Խորխոռունի մաղխագների՝ 387-388 թուականներին ձեռք բերած բարձր դիրքի շարունակմանը հետագայ տասնամեակներում)⁸⁵։ Բայց փոխարէնը՝ կարեւոր է, որ պատմիչի խօսքերն ակնարկում են մի շատ հին կարգից («գահուց հայրեմականաց պատուոյն») շեղումների վերականգնման կամ չվերականգնման իրողութեան մասին։

Ինչ վերաբերում է իրական ժամանակագրութեան համեմատի յայտ եկող հակասութեանը, ապա հետազոտողները լուծում են այն՝ ենթադրելով, որ Սահակ Պարթեւը Տիգրանում հանդիպել է, հաւանաբար, ոչ թէ Արտաշիւր Բ.ին, այլ կա՛մ նրա որդի Շապուհ Գ.ին (383/384-388)⁸⁶, կա՛մ, գուցէ, թոռանը՝ Վռամ Դ. Կրմանին (388-399)⁸⁷։ Հ. Պօղոս Անանեանն անգամ Յագկերտ Ա.ի (399-420) տարբերակն է հաւանական համարում, թէպէտ չի բացառում նաեւ նրա աւագ եղբայր Վռամ Դ.ին հանդիպելու հնարաւորութիւնը⁸⁸։ Կարեւոր է թւում, որ Պատմահայրն Արտաշիւրի նամակից յետոյ գլխի վերջում ուշագրաւ նշում ունի, ըստ որի այդ արքայից արքայի՝ վրայ հասած վախճանից յետոյ գահակալած Վռամ Կրմանը նոյն կերպ բարեացակամ վերաբերմունք է ցուցաբերել Հայոց թագաւորի, աւագանու եւ Սահակ Պարթեւի նկատմամբ (բնագրում. «յորժամ եկն մեծն Սահակ եւ զամենայն պարգեւեալսն յԱրտաշրէ հաստատեաց, մեռաւ արքայն Պարսից Արտաշիւր, եւ փո-

85 ՅԱՐՈՒԹԻԻՆԵԱՆ, Բ., «Գահնամակի» թուագրման հարցի շուրջը, 70:

86 Ա.Ա.Պ., 63-64:

87 ՎԱՐԳԱՆԵԱՆ, Վ., Հայոց եկեղեցին վաղ միջնադարի Բաղաճախան խաչուղիներում, Ս. Էջմիածին, Վաղարշապատ 2005, 141:

88 ԱՆԱՆԵԱՆ, Խ. Պ., Գրոց գիտի թուականը եւ Վուսնաստմի Հայոց թագաւորի վեցերորդ տարին, 139 (ի Միջագագային գիտածողով՝ նուիրած Հայոց գրերի գիտի 1600ամեակին, 590):

Խանակ նորա քագաւորեաց Վոսամ, որ եւ կրմանն կոչեցաւ, ամս տասն. եւ զնոյն բարեկամութիւն կալաւ ընդ աշխարհիս Հայոց եւ ընդ քագաւորին մերում Վոսամշապիոյ եւ ընդ մեծին Սահակայ...»): Այդ տեղեկութիւնն ինչ-որ չափով մեղմում է պատմիչի վկայութիւնների բոլոր մանրամասների հաւաստիութեան վերաբերեալ ծագող կասկածը եւ թոյլ տալիս համարել, որ նրա ձեռքի տակ ենթադրաբար եղած բուն աղբիւրում, գուցէեւ, կարող էր նշուած լինել Սահակ Պարթեւին Տիգրանում իրօք ընդունելութեան արժանացրած արքայից արքայի մասին, բայց ո՛չ յատկապէս Արտաշիր Բ.ի:

Մի փոքր շեղուելով մեր հիմնական նիւթից՝ տեղին նշենք, որ Շապուհ Գ.ի գահակալութեանը ծանօթ չի եղել ոչ միայն Մովսէս Խորենացին, այլեւ է. դարի 40ական թուականների կէսերին իր երկի շարադրանքն սկսած (եւ, ինչպէս ցոյց ենք տուել այլ տեղում, 659ի կէսերին դադարեցրած) Սեբէոս պատմիչը⁸⁹, որն օգտագործել է Ե. դարում շրջանառուած եռանուն-գուգաղիւր արքայացանկի մէկ այլ՝ «միջխորենացիական» տարբերակ. ըստ Հ. Պօղոս Անանեանի պարզաբանումների (որ մանրակրկիտ սրբագրում է նախորդ բանասէրների վարկածները)⁹⁰՝ փաստարկում է, որ այդ եռանուն արքայացանկը է. դարի պատմիչը կարող էր վերցնել Փաւստոս Բուզանդի «Պատմութիւն Հայոց»ի մեզ չհասած Ա. եւ Բ. դպրութիւններում ենթադրաբար եղած «Ժամանակագրական կանոն»ից⁹⁰ («որուն մէջ պէտք էր արտագրուած ըլլալ Ագաթանգեղոսի արձանագրութեան պատճենը, ինչպէս կը խոստանայ

89 Սեբէոսի եպիսկոպոսի Պատմութիւն, բաղդատութեամբ ձեռագրաց, հանդերձ առաջաբանիւ եւ ծանօթագրութեամբք ի ձեռն ՄԱԼԽԱՍԵԱՆՑ, Ա., Երևան 1939⁴, գլ. Գ., 19 (1979ի հրատարակութեան մէջ՝ գլ. Ե., 61. առիք եւմ ունեցել՝ ցոյց տալու, որ 1979ի հրատարակութիւնը պակաս յարմար է օգտագործման համար, քանի որ նրա աշխատասիրողը չարդարացուած շեղումներ է կատարել պահպանուած միակ ամբողջական ձեռագրից, տե՛ս ՅԱԿՈՒՅԱՆ, Ա., Սեբէոսի Պատմութեան հատուածաբանական խնդիրը եւ Չուարթնոցի տաճարի կառուցման մասին գլուխը, ի Հանդէս Ամսօրեայ, ձժԹ. տարի, Վիեննա-Երևան 2005, 213-270):

90 Ա.ՆԱՆԵԱՆ, Է. Պ., Սեբէոսի Պատմութեան գրքի մասին քանի մը լուսաբանութիւններ, Ս. Ղազար, Վենետիկ 1972, 81-108: Նշուած դպրութիւնների խնդրի մասին նաև ԱԿՕՍԿԱՆ, Ա., "История Армении" Фавста Бузанда как источник "Повести о Вачагане" (Слова о первом и втором днруте ю нах Фавста Бузанда), - "Кавказ и Византия", вып. 5, Ереван, 1987, 72-81:

Սերէտսին Ա. գլուխին յառաջարանը»⁹¹): *Սակայն հէնց արքայից արքայ Շապուհ Գ.ի (այլ ո՛չ թէ Շապուհ Բ.ի) մասին է իր երկու գլուխներում յիշատակում Ղազար Փարպեցին (հմմտ. «մնուաւ եւ Շապուհ արքայն Պարսից, եւ քագաւորեաց Վոսամ որդի նորա... յետ մահուան Վոսամայ արքային Պարսից քագաւորէր Յագկերտ եղբայր Վոսամայ, որդի Շապիոյ...»)⁹²: *Եւ թւում է, թէ որեւէ երրորդ տարբերակի չզոյուլթեան պատճառով պարտաւոր ենք ենթադրել, որ Ե. դարի վերջերի պատմիչը պէտք է յենուած լինէր իրեն աղբիւր ծառայած Կորիւնի խօսքերի վրայ, թէպէտեւ այդպիսիք բացակայում են «Վարժ Մաշտոցի» երկի՝ մեզ հասած ամբողջական ձեռագրում: Այսինքն՝ մենք համարում ենք, որ վերջինիս մէջ անհրաժեշտ է անպայման գտնել այն յարմար հատուածը, որտեղ ենթադրաբար կարող էր լինել Շապուհ Գ.ի յիշատակութիւնը՝ կորսուած, ըստ ամենայնի, մի վաղ գրչական վրիպման հետեւանքով: Ընդ սմին դժուար չէ նկատել, որ այդ յարմար հատուածն, առաւել մեծ հաւանականութեամբ, «Վարժ»ի աւարտական գլխում տրուած ժամանակագրական ամփոփումն է՝⁹³, որի մէջ կարելի է վերականգնելի համարել երեք բառ՝ «որդւոյ Շապիոյ արքայի» (այսպիսով ստացուում է՝ «քագաւորեալ Կրմանայ՝⁹⁴ Պարսից արքայի, [որդւոյ Շապիոյ արքայի], ամս վեց...»: հմմտ. *արքայի... արքայի*): *Ի դէպ, հէնց այդ տեղից մի փոքր յետոյ Հր. Աճառեանը, Մ. Աբեղեանը եւ այլք անհրաժեշտ են գտել՝ վերականգնելու «[եւ Վոսամայ՝ ուր եւ տասն]» բառերը (այսպիսով ստացուել է՝ «[եւ Յագկերտի՝ ամս քսան եւ մի, եւ [Վոսամայ՝ ուր եւ տասն, եւ] [հմմտ. եւ... եւ] յառաջնումն ամի երկրորդ Յագկերտի՝ որդւոյ Վոսամայ, վախճանեցաւ երանելին»)⁹⁵: *Այդ տեղում դեռեւս Նորայր Բիւ-****

91 Ա.Ն.Ա.ՆԵԱՆ, Կ. Պ., *Սերէտսի Պատմութեան գրքի մասին քանի մը լուսարձակումներ*, 108:

92 Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց եւ Թուրք առ Վահան Մամիկոնեան, Աշխատութեամբ Տէր-ՄԿՐՏՉԵԱՆ, Գ. - ՄԱԼԽԱՍԵԱՆ, Ա., Տփլիս, 1904, գլ. Ա.թ., 12-13, Ա.ժբ., 18 (*Մատենագիրք Հայոց*, հտ. Ա.-Բ., 2211, 2216):

93 ԿՈՐԻՒՆ, *Վարժ Մաշտոցի*, գլ. ԻԹ., 98. ԿՈՐԻՒՆ, *Վարժ Մաշտոցի*, 1998, թիւ 94, 88. *Մատենագիրք Հայոց*, հտ. Ա.-Բ., գլ. Լ., 257:

94 Գրչական վրիպակով՝ Դիմոնայ. Նորայր Բիւզանդացու, Հ. Աճառեանի եւ Մ. Աբեղեանի այս սրբագրումն ընդունուած է բոլորի կողմից:

95 Ա.ՃԱՌԵԱՆ, Հ., *Հայոց գրեղը*, Երևան 1984, 353. ԿՈՐԻՒՆ, *Վարժ Մաշտոցի*, գլ. ԻԹ., 98, 123, ծնթ. 173. *Մատենագիրք Հայոց*, հտ. Ա.-Բ., գլ. Լ., 257. KORIWAN, *La*

զանդացին առաջարկում էր նոյն կերպ վերականգնել՝ «[և Վոամայ Հինգերորդի՝ ամս քսան]» բառերը⁹⁶: Յաւելենք, որ ըստ Հ. Պ. Անանեանի, վերականգնելի տարբերակը կարող է լինել՝ «[և Վոամայ՝ ամս իննետասն]» (հաշուի առնելով Վոամ Ե.ի թագաւորութեան իրական տեւողութիւնը)⁹⁷, իսկ ըստ Հ. Նորայր Պողարեանի՝ «[և Վոամայ՝ ամս քսան եւ մի]» (համադրելով Ե. դարի պատկերացումների հետ՝ Խորենացու օրինակով, ինչպէս նաեւ նկատել տալով՝ քսան եւ մի... քսան եւ մի)⁹⁸:

Տեղին նշենք նաեւ, որ նոյն տրամաբանութեամբ (այլ տարբերակի բացակայութեան պատճառով)՝ պէտք է վերականգնում ենթադրել Ղազար Փարպեցու մեզ հասած միակ գրչագրի Ա.ժբ գլխի սկզբում: Գլխի առաջին նախադասութիւնից («Յետ այտրիկ մեռաւ եւ Շապուհ արքայն Պարսից, եւ թագաւորեաց Վոամ որդի նորա, որ էր կրման արքայ»⁹⁹) յետոյ անհրաժեշտ է թւում վերականգնել ինչ-որ վաղ վրիպման հետեւանքով մէկ պարբերութիւն ներքեւ տեղափոխուած 4րդ նախադասութիւնը («Եւ յետ մահուան Վոամայ արքային Պարսից թագաւորէր Յագկերտ եղբայր Վոամայ, որդի Շապուհոյ՝ ի վերայ աշխարհին Պարսից»): Նրան, այսպիսով, հեղինակային սկզբնօրինակում յաջորդում էր բովանդակութեամբ արդէն լիովին իր տեղում գտնուող արտայայտութիւն՝ «յորմէ [իմա՝ ի Յագկերտէ] ինդրեցին Հայք թագաւոր գնոյն միւսանգամ Խոսրով¹⁰⁰, գեղբայր Վոամշապուհոյ, գոր յառաջնումն բանասրկութեամբ ետուն մերժել գնա Հայք՝ Շապուհոյ արքային Պարսից՝ ի թագաւորութենէ Հայոց»: Այսպէս լիովին իր տեղում է յայտնուում նաեւ 3րդ նախադասութեանը («եկեալ Խոսրով յաշխարհս Հայոց եւ

Vie de Maštoc', Traduction annotée par MAHE, J.-P., - RÉArm., NS, t. 30, Paris, 2005-2007, 94 ("[et Vfam, dix-huit ans]").

96 Կորիւնի քննական բնագիրը եւ ծանօթագրութիւններ ըստ Նորայրի (ՆՈՐԱՅՐ Ն. ԲԻԻ-ԶԱՆԳԱՑՈՒ ԴԻՒԱՆԻԿ. ԻՐԱՏԱՐԱԿՈՂ՝ ՄԻՆԱՍԵԱՆ, Մ.), ի Հանդէս Ամսօրեայ, ձՁ. տարի, Վիեննա 1992, 94, 128, 138:

97 ԿՈՐԻՒՆ, Վարժ Մաշտոցի, 1998, թիւ 94, 88:

98 ՆՈՐԱՅՐ ԵՊՍ., Կորիւնի ծամանակագրական Վերջաբանը, ի Սիռն, 1962, թիւ 2-3, 39-40:

99 ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑԻ, Պատմութիւն Հայոց, գլ. Ա.ժբ., 18. Մատենագիրը Հայոց, հտ. Ա.-Բ., 2216:

100 Ըստ ձեռագրի. տպագրում գլխարկով է: Վերջին երեք բառերը պիտի ընկալել (պայմանականօրէն պարզեցուած)՝ «միւսանգամ գնոյն Խոսրով»:

կեցեալ ամիսս ութ՝ վախճանէր...») *չարունակող հինգերորդը՝ «Եւ ո՛չ կամեցեալ Յագկերտի թագաւորեցուցանել ի վերայ աշխարհիս Հայոց յազգէն Արշակունեաց՝ թագաւորեցուցանէր ի վերայ սոցա գիր որդին...»*: *Քննարկուած վրիպման հաւանական պատճառ կարելի է համարել կա՛մ ժամանակագրական տուեալներ հաղորդող լուսանցագրութիւններից (զուտ իբրեւ վարկած՝ հնարաւոր) սխալ տեղում արտագրուելը, կա՛մ մի այնպիսի գրիչ-խմբագրի անյաջող նախաձեռնութիւնը, որ նկատել է գլխի սկզբում երկու Պարսից արքաների զահակալութիւնների յիշատակուելը (Վռամ Կրման եւ Յագկերտ եղբայրների) եւ, մտածելով, թէ յաջորդող տեղեկութիւններն էլ են երկուսին վերաբերում, սկզբնամասի՝ երկրորդ արքայի մասին հատուածը բաժանել-իջեցրել ու միացրել է այն կտորին, որը կրկին նշում էր նրա անունը («Եւ ո՛չ կամեցեալ Յագկերտի...»): Նախորդ բանասէրները նշուած հակասութիւնն անսպասելի թեթեւութեամբ վերագրել են ուղղակի Փարպեցի-պատմիչի կոպիտ վրիպմանը¹⁰¹: Իրականում, ճիշտ կը լինէր մի փոքր էլ խորանալ ու նկատել, որ «առն ցանկալի» Կորիւնին երիցս յանուանէ յղող եւ իր այդ աղբիւրը բաւականին խնամքով օգտագործող Ղազար Փարպեցին ուղղակի չունէր այնպիսի գաղափարական մօտեցումներ կամ ժամանակագրութեան մասին իւրատեսակ պատկերացումներ (Խորենացու եւ Սեբէոսի եռանուն-զուգադիր աղիւսակների ձեւով), որոնք ինչ-որ կերպ կարող էին հիմք դառնալ նման՝ իրօք «անկարագրելի» վրիպման համար: Հետեւաբար՝ վերջինս կարող էր ի յայտ գալ միմիայն մեզ հասած բնագրի գրչագրական թերիների հետեւանքով. հմտ., օր.՝ Ստեփաննոս Ասողիկի բնագրի մի թերիի առիթով նոյն Հր. Աճառեանի խօսքը. «Ի հարկէ Ասողիկն այնքան անմիտ չէր, որ այսպիսի յիմարութիւններ դուրս տար. պետք է ուրեմն կարծել, որ ձեռագիրը չստիպաւանց խանգարուած է»¹⁰²:*

101 Ա.ՃԱՌԵԱՆ, Հ., *Հայոց գրերը*, 382 («որքան արասփելի է Փարպեցու տգիտութիւնը»). ԱՆԱՆԵԱՆ, Խ. Պ., *Գրոց գիտի թուականը եւ Վռամշապուհ Հայոց թագաւորի վեցերորդ տարին*, 129-131 (ի Միջազգային գիտածողով՝ նուիրուած Հայոց գրերի գիտի 1600ամեակին, 581-583):

102 Ա.ՃԱՌԵԱՆ, Հ., *Հայոց գրերը*, 387. Փարպեցու ձեռագրի քննարկատական վիճակի մասին մանրամասն տե՛ս ՄՈՒՐԱԳԵԱՆ, Պ. - ԻԻԶԲԱՇԵԱՆ, Կ., *Ղազար Փարպեցու «Պատմութեան» նորայայտ պատարիկը*, ի *ԲՄ*, 11, Երևան 1973, 7-32:

Մահակ Պարթևի Տիգրանեան գործերի մասին Մովսէս Խորենացու երկրորդ վկայութեան համաձայն՝ երբ 21 տարի թագաւորած Վռամշապուհը վախճանուեց (414ին, իրականում՝ փաստացի 26 տարուայ իշխանութիւնից յետոյ), Արտաշիր Բ-ի (իրականում՝ Շապուհ Գ-ի) եւ Վռամ Դ-ի օրերից ի վեր Անյուշ բերդում «կապեալ» Խոսրով Դ-ն կրկին Հայոց գահին հաստատուեց այն բանի շնորհիւ, որ կաթողիկոսը մեկնեց Յագկերտ Ա. արքայի մօտ ու համոզեց նրան (բնագիրն է. «երթեալ մեծին Սահակայ ի դուռն արքային Պարսից Յագկերտի՝ խնդրել զկապեալն Խոսրով, որ զկնի մահուանն Արտաշրի լուծեալ պահեցաւ արձակ յԱնուշն [տարբ. յԱնյուշն] կոչեցեալ բերդի յաւուրս Վռամայ: Եւ Յագկերտի հաւանեալ՝ կատարէ զհայցուածսն. տալով նմա գտերութիւնն՝ արձակէ ի Հայս») ¹⁰³: Պատմահօր հաղորդումը զուգահեռ չունի Ղազար Փարպեցու համապատասխան դրուագում, որտեղ նշուում է լոկ Վռամշապուհի՝ «հասեալ ի յերկար ծերութիւն» եւ «յանկողնի իւրում խաղաղական հանգստի» մահուանից յետոյ Պարսից արքայի կողմից Խոսրովին երկրորդ անգամ թագաւորեցնելու մասին («յորմէ խնդրեցին Հայք թագաւոր զնոյն միւսանգամ Խոսրով՝ զեղբայր Վռամշապեայ... Եւ նորա կատարեալ զխնդիրս նոցա՝ թագաւորեցուցանէր դարձեալ զԽոսրով, գայր յոյժ ծեր») ¹⁰⁴. Իսկ Կորիւնն իր վարքագրական ոճով շարադրանքի բովում յարմար չի գտել արծարծելու անգամ դա: Չնայած այդ հանգամանքին՝ ուսումնասիրողներն, ըստ էութեան, կասկածի տակ չեն առել Մովսէս Խորենացու վկայութեան հաւաստիութիւնը ¹⁰⁵:

Եւ երրորդ դէպքում Պատմահայրը հաղորդում է 428 թուականին Արտաշէս Վերջին թագաւորի ու նրան սատարող կաթողիկոսի՝ Վռամ Ե. Գոռի կողմից Տիգրան կանչուելու եւ ամբաստանուելու, առաջինին գահընկէց անելու, բանտարկելու (եւ այդպէս՝ Հայաստանը մարզպանութեան վերածելու), իսկ Մահակին կաթողիկոսի պաշտօնից հեռացնելու եւ ողջ ունեցուածքը բռնագրաւելու մասին, որից միայն 3-4 տարի անց նա ներման արժանացաւ ու կարողացաւ հայրենիք վերադառնալ, սակայն լոկ՝ իբ-

103 ՊՀ, գլ. Գ. ծն., 329:

104 Ղազարայ Փարպեցույ Պատմութիւն Հայոց, գլ. Ա. Ժբ, 18 (Մատենագիրք Հայոց, հտ. Ա.-Բ., 2216): Հմմտ. վերնուում, ծնթ. 99-100:

105 ХАЛЯТЯНЦ, Г., *Армянские Аршакиды*, Ч. I, 293. ՕՐՄԱՆԵԱՆ, Մ. Արբ., *Հայապատում*, հտ. Ա., Ա. Էջմիածին, Վաղարշապատ 2001, 327:

րեւ խիստ կրճատուած իրաւասութիւններով «հակառակաթոռ» կաթողիկոս¹⁰⁶ : Տիգրեոնեան այս վերջին դրուագի առաջին կէսի մասին (428ին) հաղորդում է նաեւ Փարպեցին¹⁰⁷ : Ըստ երկու պատմիչներին՝ կաթողիկոսի դահն այդ պահին բաժին հասաւ Սահակի գլխաւոր ամբաստանիչին՝ Արծկէի երէց (Բզնունիքում) Սուրմակին, որ կարճ վայելեց իր դաւաճանութեան վարձը, քանի որ ամիսներ անց հալածուեց ու պաշտօնանկ արուեց իրեն սատարած նախարարների խնդրանքով: Պարսից արքան կաթողիկոս կարգեց (արդէն միայն՝ ըստ Խորենացու) աւելի վատթար Բրքիշոյ ասորուն, որն էլ հեռացուեց երեք տարի իշխելուց յետոյ: Դրանից յետոյ է, որ Վռամ Ե. Գոռը «հակառակաթոռ» կաթողիկոսներ «նշանակեց» Սահակ Պարթեւին եւ նրա «անարժան հովիտի» ասորի Շամուէլին, որին վերապահուած էր՝ վարելու բոլոր տնտեսական ու վարչական գործերը¹⁰⁸ : Վերջին վճռից բաւարարուած Սահակը դիմել է արքայից արքային (Խորենացու խօսքերով՝ իր համագգի պարթեւ պալատականի միջոցով) երկու խնդրանքով, որոնցից մէկն էր՝ «զգահ նախարարացն Հայոց, որպէս կարգեալ յԱրտաշրէ՛ վարեցան մինչև ցայժմ՝ նորին աւրիմակաւ հրամայեսցէ եւ առ յապայ, զի մարգպանմ պարսիկմ մի՛ կարասցեն... փոփոխել ըստ կամաց իւրեանց», ընդ որում այդ խնդրանքը բաւարարուել է («Այնմ լսող եղեալ Վռամայ՝ հրամայէ գամեցայնն կատարել») ¹⁰⁹ :

Հարկ է նշել, որ արդէն Գր. Խալաթեանցի ուշագրաւ դիտարկմամբ՝ կարծես թէ, Պատմահայրն իրար է միացրել Սահակ Պարթեւի երկու տարբեր Տիգրեոնեան այցելութիւններ՝ 428ին եւ 432ին¹¹⁰ : Մի առիթով մենք եւս նկատել ենք, որ հէնց այդ տարիների միջեւ են ընկնում Կորիւնի եւ նոյն Խորենացու կողմից

106 ՊՀ, գլ. Գ.կդ, 348-349, Գ.կե, 350-352:

107 Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց, գլ. Ա.ժդ., 23-25 (Մատենագիրք Հայոց, հտ. Ա.-Բ., 2221-2223):

108 ՊՀ, գլ. Գ.կե., էջ 350-352: Տե՛ս նաեւ ԿԶ. գլխի վերնագրում (էջ 353), քեպտեւ երկի՝ մեզ հասած գլխագրերի մի մասը, գուցէ եւ, կարող է դիտարկուել իբրև ուշ յաւելում. տե՛ս ՍԱՀԱԿԵԱՆ, Ա., Մովսէս Խորենացու «Հայոց պատմութեան» գլխաւորագրումը որպէս բնագրի վերջին խմբագրութիւն, - «Լեւոն Խաչիկեան. 90. Նիւթեր Մատենադարանի միջնադարի տնօրէնի ծննդեան ինստիտուտականի նուիրած միջազգային գիտաժողովի (9-11 Հոկտեմբերի 2008 թ.)», Երևան 2010, 226-254:

109 ՊՀ, գլ. Գ.կե., 352:

110 ХАЛАТЯНЦ, Г., *Армянские Аршакиды*, Ч. I, 293-294:

բաւականաչափ լուսաբանուած երկու կարեւոր իրադարձութիւններ՝ Մաշտոցի երկրորդ հիւսիսային ուղեւորութիւնը (դէպի Աղուանք, Բաղասական, Գարդման, ապա՝ Վիրք եւ Տաշիր)¹¹¹, որից վերադարձին նրան դիմաւորում էր Ս. Սահակը՝ «ի սովորական տեղիսն» (բառացի ընկալման դէպքում՝ Վաղարշապատում)¹¹², եւ Եփեսոսի 431ի եկեղեցական տիեզերաժողովից անմիջապէս առաջ աշակերտներին երկու խմբի նախապատրաստումը եւ ուղարկումը Ասորիք, ապա՝ Բիւզանդիոն՝ խորանալու յունական դպրութեան մէջ եւ զբաղուելու թարգմանչական խնդիրներով¹¹³ (բայց դուցէ եւ՝ հէնց ժողովին ներկայ լինելու նպատակով): Ի դէպ, Խորենացու առաջին զրուագի ներկայացմամբ՝ Վիրքից ու Աղուանքից Մաշտոցի վերադարձի պահին Սահակը զբաղուած էր Ս. Գրքի թարգմանութեամբ. «գտանէ գմեճն Սահակ քարգմանութեան պարապեալ յասորւոյն՝ յոչ լիմելոյ յունի»¹¹⁴: Ճիշտ է, այդ գլխում խառնուած են հիւսիսային երկու ուղեւորութիւններին տուեալներ-

111 ՅԱԿՈՒԵԱՆ, Ա., *Մաշտոցի երկրորդ հիւսիսային ուղեւորութեան ժամանակը եւ խնդիրները*, ի «Միջագային գիտածողով՝ նուիրած Հայոց գրերի գիտի 1600-ամեակին...», 122-131 («Մաշտոցի՝ իւրօրինակ գոյգերով կատարուած՝ դէպի Աղուանք - Գարդման, եւ ապա՝ Վիրք - Գուգարք... այցելութիւնների գլխաւոր նպատակը, ըստ երևոյթի, պարզապէս լուսաւորական չի եղել (ինչպիսին որ, գուցէ, արևի շատ է՛ր հիւսիսային առաջին ուղեւորութեան պարագայում դէպի Վիրք): Ենթադրելի է, որ Մաշտոցի վերը նշուած այդ... «մաքոնային հանդիպումների» արդիւնքում է լուծուել պետականութիւնը հենց նոր կորցրած հայ ժողովրդի եւ Հայոց եկեղեցու համար չափազանց կարեւոր ազգային-նազմավարական մի խնդիր, այն է՝ Վիրքի եւ Բուն Աղուանքի թագաւորութիւնների եւ այս կամ այն չափով նրանց ենթակայացուած էթնիկապէս հայկական շրջանների միջէն ձևաւորուելիք յարաբերութիւնների կոնկրետ պայմանների նշտումը... դրանից յետոյ է, որ պետական աջակցութիւնից այլևս զրկուած հայերէնը հաստատապէս պահպանում է իր... «պետական» լեզուի կարգավիճակը Ռուսիում եւ Գուգարքում, եւ բացի այդ, ամենայն հաւանականութեամբ, շարունակում մնալ որպէս ժամասացութեան երկրորդ լեզու Բուն Աղուանքում ու Վիրքում...»։ Էջ 127-128):

112 ԿՈՐԻԻՆ, Վարդ Մաշտոցի, գլ. ԺԸ., 74. Մատենագիրք Հայոց, հտ. Ա.-Բ., գլ. ԺԹ., 247. ԿՈՐԻԻՆ, Վարդ Մաշտոցի, 1998, քիւ 66, 60-ում՝ «ի թագաւորական տեղիսն»՝ ըստ ԱԿԻՆԵԱՆ, հ. Ն., անընդունելի ուղղման (տե՛ս 110ի ծնթ.):

113 ԿՈՐԻԻՆ, Վարդ Մաշտոցի, գլ. ԺԹ., 74. ԿՈՐԻԻՆ, Վարդ Մաշտոցի, 1998, քիւ 68-69, 62. Մատենագիրք Հայոց, հտ. Ա.-Բ., գլ. Ի., 247-248. ՊԷ, գլ. Գ.Կ., 341:

114 ՊԷ, գլ. Գ.Ժդ., 329. ՏԵՐ-ՄԻՆԱՍԵԱՆՅ, Ե., *Հայոց եկեղեցու յարաբերութիւնները Ասորոց եկեղեցիների հետ*, Ս. Էջմիածին, Վաղարշապատ 1908, 51:

րը¹¹⁵, բայց հաւանական է թւում, որ Սահակի թարգմանութիւնների պահը Պատմաճօր աղբիւրում (ինչպէս նաեւ՝ իրականում) համընկել է հէնց երկրորդ ուղեւորութեան աւարտի հետ, քանի որ Կորիւնը եւս Մաշտոցի՝ Տաշիրից վերադարձը նշելուց յետոյ գրում է թարգմանական խնդիրների մասին («Յետ այսորիկ ուշ եղեալ երկոցունց երամելեացն գիւրեանց ազգին դպրութիւնն առաւելուլ, յարգել եւ դպրաց ուսուցանել՝ ձեռն ի գործ արկանէին ի թարգմանել եւ ի գրել՝ ըստ յառաջագոյն սովորութեան...»)¹¹⁶:

Նկատի ունենալով ներկայացուած տուեալները՝ Սահակին ամբողջ չորս տարի Տիգրեոնում պահելու մասին Պատմաճօր նշումները, գուցէ, հնարաւոր է համարել կենդանի շարադրանքի բովում ծնուած չափազանցութիւն-շեղում, իսկ իբրեւ թէ հէնց 432ին արքայից արքայի կողմից պարգեւուած «շնորհները» (նշումը եւ «հակառակաթոռ» կաթողիկոսական կարգավիճակը), գուցէ, կարելի է իրապէս ստացուած համարել արդէն ամբաստանիչ Սուրմակի կաթողիկոսութեան անփառունակ աւարտից յետոյ (այսպիսով՝ թուագրելով դա 428ի շնորհագրկումից մի քանի ամիս անց՝ նոյն տարեմուտով կամ յաջորդ տարուայ սկզբով): Ինչպէս վերեւում նշեցինք, Ղազար Փարպեցու մօտ նկարագրուած են միայն 428ի դէպքերը, որից յետոյ պատմիչն անցնում է բարոյախօսական գեղումների եւ Ներսէս Մեծի տեսիլի երկարաշունչ շարադրանքին՝ այդպէս էլ ուղիղ չնշելով կաթողիկոսական պաշտօնին Սահակի վերադարձի մասին¹¹⁷: Մեր վարկածին չեն հակասում նաեւ կաթողիկոսի Տիգրեոնեան ուղեւորութիւնների մասին ոչինչ չասող Կորիւնի հաղորդած յարակից տուեալները, թէպէտ պարզ է, որ իր վարքագրական երկը նա շարադրել է արդէն իր երանելի ուսուցիչների՝ «լցեալ աւուրբք երկայն ժամանակաւ եւ վայելչացեալ աստուածաբեր պտղոցն բարութեամբք» վախճանից (439ի Սեպտեմբեր եւ 440ի Փետրուար) ոչ շատ անց, բայց՝ 440ական թթ. երկրորդ կէսի՝ ըստ ամենայնի, բարուք տարիներին ու, կարծես թէ, ուրախ է եղել (նաեւ՝ ժանրի ոճին հարա-

115 Մանրամասն տե՛ս ՅԱ.ԿՈՐԵԱՆ, Ա., *Մաշտոցի երկրորդ հիւսիսային ուղևորութեան ժամանակը*, 128-131:

116 ԿՈՐԻՒՆ, *Վարժ Մաշտոցի*, գլ. ժԹ., 74. ԿՈՐԻՒՆ, *Վարժ Մաշտոցի*, 1998, թիւ 67-68, 62. *Մատենագիրք Հայոց*, հտ. Ա.-Բ., գլ. Ի., 247:

117 Ղազարայ Փարպեցույ Պատմութիւն Հայոց, գլ. Ա.ժղ.-ժԷ., 25-37 (*Մ Մատենագիրք Հայոց*, հտ. Ա.-Բ., 2221-2234): Հմմտ. ծնթ. 107:

զատ¹¹⁸)՝ լրիւ մոռացութեան տալու ոչ վաղ անցեալի ինչ-ինչ անուրախ պատահմունքներ: Բայց բոլոր դէպքերում հաւաստին այն է, որ ժամանակային մեծ կամ փոքր միջակայքից յետոյ Սահակ Պարթեւն իր կեանքի վերջին՝ շուրջ 10 տարիներն ապրել է կաթողիկոսական իր իրաւունքները վերականգնած, ընդ որում դրանց վերականգնման մասին վճիռը կայացուել էր Տիգրանում:

Արդ, ուսումնասիրողներն, իբրեւ կանոն, փորձել են նոյնացնել «Գահնամակ»ի նամակ-առաջաբանում եւ Մովսէս Խորենացու ներկայացրած այս երեք-չորս դրուագներից մէկում կամ երկուսում յիշատակուած իրողութիւնները, իսկ տարբերութիւնները վերագրել են Պատմահօր ունեցած տեղեկատուութեան ու դրա ընկալման թերիներին (Ն. Ադոնցն անգամ ենթադրել է, թէ վերը նշուած առաջին դրուագի շարագրանքի հիմքում բացառապէս ընկած են պատմիչի ձեռքի տակ եղած «Գահնամակ»ի տուեալները)¹¹⁹: Յատուկ շանդրադառնալով արտայայտուած կարծիքներին՝ կարելի է ուղղակի նշել, որ վերը կատարուած քննութիւնից իրականում երեւաց այլ պատկեր. ընդհանուր առմամբ, մենք տեսանք՝ մի կողմից՝ Խորենացու հաղորդումներից իւրաքանչիւրի, միւս կողմից՝ «Գահնամակ»ի նամակ-առաջաբանի տուեալների ինքնուրոյնութեան ու հաւաստիութեան որոշակի աստիճանը: Այդ պատճառով՝ թւում է, թէ թուլատրելի կը լինէր միմիայն այն վերապահումը, թէ Պատմահայրը, նկատելով «Գահնամակ»ի տուեալների հետ իր իմացած տեղեկութիւնների ինչ-ինչ զուգորդութիւններ, գուցէ, իրօք փորձել է որոշ դէպքերում համաձայնացնել դրանք: Օր.՝ արդէն Ն. Ադոնցը նկատել է, որ այդպիսի տպաւորութիւն է առաջանում Վռամ Ե.ին Սահակ Պարթեւի ներկայացրած վերջին ինդրանքի բառերից՝ «գգահ նախարարացն Հայոց, որպէս կարգեալ յԱրտաշրէ՝ վարեցան միմչեւ ցայժմ...», որոնք կարելի է զուգորդուած համարել «Գահնամակ»ի՝ «գումականն գնամակն, գոր Արտաշրի ի դիւանին՝ տեսի» հատուածի հետ: Սակայն հէնց այս օրինակը լաւագոյնս ցուցանում է, որ Պատմահօր հնարաւոր միջամտութիւնն ամենեւին չի եղել այն աստիճա-

118 «Վարբ Մաշտոցի» երկի ժանրային առանձնայատկութիւնների մասին տե՛ս TERICIAN, A., *Further observations on the genre of Koriwn's Life of Mashtots*, ի «Միջագային գիտածոյով՝ նոյիրուած Հայոց գրերի գիտի 1600ամեակին. Երևան 12-17 Սեպտեմբերի, 2005», Զեկուցումների դրոյթներ, Երևան 2005, 108-109:

119 АДОНИЦ, Н., *Армения в эпоху Юстиниана*, 267-271:

նի, որպէսզի ուշադիր ընթերցողը Սահակի յղումը չկարողանայ վերագրել հէնց առաջին Սասանեան արքային (իսկ մեր ժամանակների մասնագէտի հայեացքով, ի հարկէ՝ «Հայաստանի մեծ արքայ» տիտղոսով 252-272 թագաւորած Որմիգդ-Արտաշիր-Արտաշէս Սասանեանին, որն էլ, թերեւս, անկախ գրականութեան մեջ կուտակուած ծաւալուն աւանդոյթից, հռոմէացի մի պատմագրողի կողմից կոչուած է նաեւ Արտաւազդ-Artabazdes¹²⁰): Իսկ այդ Արտաշիրի օրօք հաստատուած կարգի մասին (ինչպէս նշել ենք, այն կրկնում էր առաջին Արշակունի թագաւոր Վաղարշակի հաստատած կարգը) ակնարկ կայ ոչ միայն «Գահնամակ»ում, այլեւ հէնց «Պատմութիւն Հայոց»ի՝ վերեւում բերուած գրուագում¹²¹: Հետեւաբար՝ անգամ վերը նշուած վերապահումը թոյլատրելի է, գուցէ, միայն այն չափով, որչափ որ Պատմահայրն Արտաշիր Բ.ին վերագրել է իրապէս անհաւաստի գործեր, այդ թւում՝ նախարարների գահակարգութեան խնդիրներին առնչուող բայց կրկին չենք կարող մոռանալ, որ սխալի հիմքում ընկած էին Ե. դարի երկրորդ կէսի թիւր ժամանակագրական պատկերացումները, որոնց համակարգման խորենացիական ճիգերի արդիւնքում Արտաշիր Բ.ի իշխանութեան չորս տարիներն, ըստ էութեան, պատահականօրէն համընկել էին Մեծ Հայքի մասնատման յաջորդած ժամանակին¹²² (հմմտ. Սեբէոսի՝ ոչ պակաս խառնակ տարբերակը. «յերկրորդի ամի Արտաշրի արքային Պարսից թագաւորեն ի վերայ Հայոց Արշակ եւ Վաղարշակ՝ ամս Ե.: ...Ապա թագաւորէ Պարսից Վուամ՝ ամս ԺԱ.: ...Յամի երկրորդի Վուամայ... թագաւորէ ի վերայ Հայոց Խոսրով ոմն՝ հրամանաւ Պարսից արքային՝ ամս Գ.»¹²³): Այսպիսով՝ մեր նշած թոյլատրելի վերապահումը եւս ոչ մի չափով հիմք չի տալիս՝ կասկածի տակ առնելու Տիգրանում Սահակ

120 IULIUS CAPITOLINUS, *Valerianus duo* (Scriptores Historiae Augustae, Edidit HOHL, E.), T. I, Lipsiae, 1927, § 6-7 (ի դէպ, հմմտ. *Artabazdes – *Ohrmazd-Artasir): Շապուհ Ա.-ի Քաարա-ե Զարդուշտի եռլեզու վիմագրի յայտնաբերումից յետոյ Սասանեանների եմքակայ Հայաստանում Որմիգդ-Արտաշիրից բացի այլ տիրակալ ընդունելու անհաւանակամութեան մասին մանրամասն տե՛ս CHAUMONT, M.-L., *Recherches sur l'histoire d'Arménie de l'avènement des Sassanides à la conversion du royaume*, Paris 1969, 85-86:

121 ՊՀ, գլ. Բ.հէ., 215-216 (ծմբ. 58):

122 ՊՀ, գլ. Գ.ծ.-ծա., 320-322:

123 *Սեբէոսի եպիսկոպոսի Պատմութիւն*, գլ. Գ., 19:

Պարթևելի՝ կարեւոր խնդիրներ լուծած լինելու մասին փաստերը ո՛չ Դ. դարի վերջերին¹²⁴, ո՛չ Վռամշապուհի մահուանից յետոյ, ո՛չ 428-432ին, եւ ո՛չ էլ, ինչպէս երեւում է «Գահնամակ»ի առաջաբանից՝ Արտաշէս թագաւորի վեցամեայ իշխանութեան (422/423-428) առաջին տարիներին, այսինքն՝ նաեւ մի չորրորդ կամ հինգերորդ դէպքում:

Ամփոփենք. այս նոր տարբերակով «Գահնամակ»ի նամակ-առաջաբանի ամբողջ բնագիրը դառնում է չափազանց պարզ, եւ վերանում է քերականական անհարթութիւնները շրջանցելու, առանձին բառեր անտեսելու¹²⁵ կամ լրացուցիչ վերականգնումներ կատարելու¹²⁶ անհրաժեշտութիւնը: Թէպէտ, թւում է, թէ կարելի է փորձել կատարել ընդամէնը մէկը՝ «արբայից արբայի եւ բարերարի» բառերին յաջորդող «եւ»ի փոխարէն նախօրինակում ենթադրելով՝ «Եի», այսինքն՝ «հինգերորդի [ամի]»: Դրանով կը յաղթահարուէր դեռեւս Գր. իշխութեանցի նկատած քերականական սկիւյայտ անհարթութիւնը¹²⁷, ու նաեւ պարզ կը դառնար Սահակ Պարթևելի նամակի ոչ միայն ամսաթիւը (Քաղոց ամսի 17ը), այլեւ ճշգրիտ տարեթիւը՝ Վռամ Գոռի թագաւորութեան հինգերորդ տարին (= 424՝ հաշուած 420 Նաւասարդի 1ից¹²⁸, որն Օգոստոսին էր): Հետեւաբար՝ ճշգրիտ ամսաթիւը ստացւում է 424 Դեկտեմբերի 26ը¹²⁹:

124 Բայց, իհարկէ, ո՛չ Արտաշիր Բ.ի, այլ, ինչպէս ենթադրում են ուսումնասիրողները՝ կա՛մ Շապուհ Գ.ի, կա՛մ Վռամ Դ. կրմանի, կա՛մ, անգամ՝ վերջինիս 399 թուականին յաջորդած Յագկերտ Ա.ի օրօք (ծնթ. 86-88):

125 Հմմտ., օր.՝ Ստ. Մալխասեանցի Բարգմանութեան մէջ (ՄՈՎԱԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ, *Հայոց պատմութիւն*, 338-339):

126 АДОНИ, Н., *Армения в эпоху Юстиниана*, 270; ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ, Բ., «Գահնամակի» թուագրման հարցի շուրջը, 73:

127 ХАЛАТЯНЦ, Г., *Армянские Аршакиды*, Ч. I, 297:

128 Սասանեանները նոր արբայի առաջին տարին հաշուում էին նախորդին փոխարինելու տարուայ Նաւասարդի 1ից (CHRISTENSEN, A., *L'Iran sous les Sassanides*, Copenhagen 1936, 166):

129 424ի Նաւասարդի 1ը Օգոստոսի 12ին էր (428-431 քառամեակում այն Օգոստոսի 11ին էր. տե՛ս, օր.՝ ԲՐՈՒՏԵԱՆ, Գ., *Օրացոյց Հայոց*, Ս. Էջմիածին, Վաղարշապատ, 1997, 130-131. ՎԱՐԳԱՆԵԱՆ, Ռ., *Հայոց տօնացոյցը (4-18-րդ դարեր)*, Երեւան 1999, 16-17), ուստի՝ Քաղոցի 1ը՝ Դեկտեմբերի 10ին: Հմմտ. ХАЛАТЯНЦ, Г.,

Յաւելէլի է նաեւ, որ ըստ Մ. Էմինի եւ Ղ. Ալիշանի՝ «գոա-մականն գնամա[կ]» բառերը կարելի է վերականգնել «գ[վ]ոա-մականն գնամա[կ]»¹³⁰: Սակայն, ինչպէս արդարացիօրէն նկատել են դեռեւս Գր. Խալաթեանցը եւ Ն. Ադոնցը, նման լրացման անհրաժեշտութիւն չի զգացւում, քանի որ «ոամ» պահպանուած է «ժողովուրդ» (նաեւ՝ «հասարակ ժողովուրդ») է նշանակում (որից կան՝ «երամ» եւ «ոամիկ»), իսկ «նամակ/նամա»ն իրանական լեզուներում էլ նոյնն է՝ իր նաեւ «գրուածք», «վաւերաթուղթ» նշանակութեամբ¹³¹: Այդպիսով՝ Սահակ Պարթեւի նամակում աղբիւրագիտական առումով խիստ ուշագրաւ փաստերի թւում յիշատակութիւն է պահպանուել նաեւ իրանական այն վաւերագրերի մասին (Ռամական նամակ), որոնք ամփոփում էին Սասանեան պետական աշխարհագրերի (այստեղ՝ բառացի թարգմանութեամբ՝ «ժողովրդագրերի»), իսկ նորօրեայ եզրոյթով ասած՝ մարդահամարների¹³²) արդիւնքները: Ի դէպ, Ն. Ադոնցը փորձում է վիճարկել արդէն Գր. Խալաթեանցի կողմից կատարուած (որոշ շեղումով) նման դիտարկումը եւ «ոամական» եզրոյթի տակ «հեծելագորայի» («երամակայի») իմաստ տեսնել¹³³: Սակայն դա չի բխում ենթատեքստի բովանդակութիւնից, եւ հակառակ հետազոտողի անընդհատ պնդումների՝ «Զօրանամակ»ում նշուած է ոչ թէ Հայոց միայն հեծելագորի քանակը, այլ ուղղակի՝ բոլոր մարտիկ ա-

Армянские Аршакиды, Ч. I, 296 ("17-го числа армянского месяца к'ах'оца, соответствовавшего декабрю месяцу - не показано, однако, какого года...").

- 130 *История Армении Моисея Хоренского*, 1893, 296; Ա.Լ.ԵՒՍԱՆ, Գ., *Նամակներ*, էջ 355. Ա.Լ.ԵՒՍԱՆ, Կ. Ղ., *Այրարատ*, 430:
- 131 HÜBSCHMANN, H., *Armenische Grammatik*, Bd. 1, Leipzig, 1895, 147, 201, 233; ԱՃԱՌԵԱՆ, Հ., *Հայերէն արմատական բառարան*, Խո. Գ., Երևան 1977, 425. Նոյն, Խո. Գ., Երևան 1979, 140: ХАЛАТЯНЦ, Г., *Армянские Аршакиды*, Ч. I, 295; АДОНИ, Н., *Армения в эпоху Юстиниана*, 297:
- 132 Այդ աշխարհագրերի մասին գիտեր նաև Մովսէս Խորենացին (*ՊՀ*, գլ. Գ. ծա., 323. «և գգիր դիւանին յայլ փոխեալ նորա անուամբ՝ ... ոչ բառնալով գիինն: Իսկ եթէ յամիցէ ի տերութեանն ամս բագումս եւ արասցէ *աշխարհագիր* նոր, բողոխն գայն, որ ի հնոյն փոխեցաւ, զի միայն նորոյն վերագրեսցի անուն: Արդ՝ Արտաշիր ոչ ժամանեալ ի կարմութենէ աւուրցն ա՛յլ առնել *աշխարհագիր*՝ յայնմ որ յառաջնոցն փոխեաց, իւր անուամբն հրամայեաց գրել...»): Հմմտ. ծնթ. 82:
- 133 АДОНИ, Н., *Армения в эпоху Юстиниана*, 297: Հմմտ. ХАЛАТЯНЦ, Г., *Армянские Аршакиды*, Ч. I, 296. "...в архиве царя... видел касающийся армян нամականն ցամա[կ] - податный список крестьян...").

րանց (Թարգմանուում է՝ «գորական», «ուզմիկ»)։ ընդ սմին՝ հայ նախարարական «ազգերի» հեծելագորը Դ. դարում չէր կարող 84 հազար՝ պարզապէս ահռելի թուաքանակ ունենալ (հմտ. փաստաթղթի ամփոփման մէջ՝ «լինի թիւ մարտիկ արանց, որ ընդ ազգաւք՝ ԶԴ.ից հազարաց») ¹³⁴։ Նշելի է, որ Հայոց ընդհանուր զօրքի մէջ հեծեալների թուաքանակը ճիշտ կը լինէր հաշուարկել 1 - 4, 1 - 5 յարաբերութեամբ, ինչպէս որ երեւում է տարբեր դարաշրջաններում արձանագրուած վկայութիւններէից։

Բայց պատմական դիտանկիւնով ամենից կարեւորն, իհարկէ, այն է, որ «Գահնամակ»ի ժամանակի մասին նոր ընկալումը ցոյց է տալիս, թէ Հայոց վերջին Արշակունի թագաւորի առաջին տարիներին երկրի հասարակական եւ պետական կառոյցն ամրապնդելու ուղղութեամբ որքա՛ն ծանօթ ջանքեր էին գործադրում հայ պատասխանատու-նուիրեալները։ ճիշտ այնպէս՝ ինչպէս դա արել էին ու անելու էին դարեր շարունակ, անցեալում ու ապագայում, հայրենի հողի վրայ ու տիգրոններում՝ ի հեճուկա յարարթուն եւ ամէն ազգային-կենսականը կաթուածահարող հանրային յոռետեսութեան։

* * *

Այսպիսով՝ մեզ հասած «Գահնամակ»ը կարող է ներկայացուել ստորեւ տրուած՝ նոր կէտադրմամբ եւ տողատմամբ գիտաքննական բնագրով, որ կազմուած է մէկ գրչագրով պահպանուած մատենագրական միաւորի (այն նշանակում ենք՝ A) նախօրինակի վերականգնման սկզբունքներով ¹³⁵։ Այդ բնագրից յետոյ ներկայացրել ենք նաեւ մեզ հասած միակ գրչագիր օրինակի՝ թիֆլիսեան մագաղաթեայ պահպանակ-պատառիկի զոյգ էջերի

134 Հայ պատմիչների հաղորդած ինչ-ինչ տուեալների վրայ հիմնուած նոյն շտապողական դրոյթը տե՛ս նաև Ն. Ադոնցի հետևորդների մօտ. TOUMANOFF, C., *Studies in Christian Caucasian History*, 234-238. ԿԱՏՈՒԱԼԵԱՆ, Մ., *Այրուծի*, ի ՀՍՀ, հտ. Ա., Երևան 1974, 354-356: Նշելի է, որ Հայոց ընդհանուր զօրքի մէջ հեծեալների թուաքանակը ճիշտ կը լինէր հաշուարկել 1-4, 1-5 յարաբերութեամբ, ինչպէս որ երևում է տարբեր դարաշրջաններում արձանագրուած վկայութիւններից։

135 Օգտագործել ենք հետևեալ փակագծերը. [...] վերականգնում. [...] աւելորդ տառեր. (...) կորսուած հատում։

վերծանութիւնը (Ղ. Ալիշանի՝ «Այրարատ»ում հրատարակուած, ինչպէս նաեւ Արշակ Բանուչեանի՝ Վենետիկում Մխիթարեան միաբանութեան Ս. Ղազարի վանքի թանգարանում պահուող բնօրինակից նորերս արուած լուսանկարներէից): Նշենք, որ դրանց գիրը բոլորագրին անցման երկաթագրով է, որն առաւել տարածում ունէր Ժ.-ԺԲ. դարերում¹³⁶. Աչ. Աբրահամեանի մօտ հմմտ. նաեւ. «Անցման գրի հնագոյն նմուշներից մէկն է «Գահնամակ»ի գրութիւնը, որ հրատարակել է Ղ. Ալիշանը: Այստեղ տառանիշերի մեծ մասը ուղղագիծ երկաթագրով է, բայց նրանց մէջ արդէն մուտք է գործել երեք ճիւղ ունեցող այբը, ուղիղ սիւնագիծ ընդունած յիւ, տառաշարքից սկսել է դուրս գալ մեն տառի գլխիկը, դատի պոչը տառաշարքից ներքեւ է կախուել եւ այլն...» (չարունակութեան մէջ. «Անցման շրջանի հետաքրքիր գրութիւն ունի ակադ. Ն. Մառի ուսումնասիրած Պիշպեֆի գերեզմանատան մի տապանաքարի 1323թ. հայկական արձանագրութիւնը»)¹³⁷: Բնագրերի բաժնում դրանից յետոյ տուել ենք նաեւ «Գահնամակ»ի սկզբնամասի նոր աշխարհաբար թարգմանութիւնը:

Այնուհետեւ ներկայացրել ենք մեզ հասած «Ձօրանամակ»ի գիտա-քննական բնագիրը՝ նոր կէտադրմամբ: Այն կազմելիս էապէս կիրառել ենք նոյն՝ մէկ գրչագրով պահպանուած մատենագրական միաւորի նախօրինակի վերականգնման սկզբունքները, թէպէտ համեմատել ենք ե՛ւ Յովհ. Շահխաթունեանցի տպագիր արտատպութիւնը (որ նշանակել ենք՝ T տառանիշով), ե՛ւ նրա՝ ամենայն հաւանականութեամբ, ՄՄ թիւ 1999 ձեռագրից կատարած ու պատուիրած երկու նմանահանութիւնները (հ^մ 382 թուակիրը նշանակել ենք՝ A, հ^մ 383 թուակիրը՝ B), ե՛ւ Երզնկայի ձեռագրի (ՄՄ, թիւ 1379) պակասաւոր տարբերակի ընթերցումնե-

136 Ա.ԲՐԱՀԱՄԵԱՆ, Ա., *Հայոց գիր եւ գրչութիւն*, Երևան 1973, 56-70:
 137 Նոյն, 70: Մեզ հասած «Գահնամակ»ի պատուիրակի բնագրի ձեռագրի մանրէն մօտ օրինակները տե՛ս ԳԱՐԵԳԻՆ ՎՐԴ., *Քարտեզ հայ հնագրութեան*, ի *Շողակաք*, գիրք Ա., Ա. Էջմիածին, Վաղարշապատ 1913, տախտ. ԺԵ. (պատկ. 48), տախտ. ԻԲ. (պատկ. 36), տախտ. ԼԷ. (պատկ. 62), տախտ. ԼԹ. (պատկ. 64), տախտ. ԿԵ. (պատկ. 112). ՍԹՈՒՆ, Մ. - ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ, Տ. - ԼԵՄԱՆՆ, Հ., *Հայկական հնագրութեան այբում*, Անգլերէնից թարգ. ՄՈՒՐԱԳԵԱՆ, Գ. - ԹՈՓՉԵԱՆ, Ա., Ա. Էջմիածին, Վաղարշապատ 2006, թիւ 10 (138-139), թիւ 30 (178-179), թիւ 39 (196-197), թիւ 40 (198-199), թիւ 41 (200-201), թիւ 46 (210-211): Սրանց մեծ մասը՝ ԺԲ. դարի գրչագրեր են:

րը (նշանակել ենք՝ E)¹³⁸: Վերջինիս երկու գրիչների ձեռացա-
 գիրն էլ արեւմտեան կամ կիլիկեան տիպի բոլորագիր է¹³⁹: Ի
 դէպ, որոշ փաստեր յուշում են, որ Յովհ. Շահխաթունեանցն, ըստ
 ամենայնի, ծանօթ է եղել նաեւ Երզնկայի գրչագրին (ՄՄ 1379.
 E)¹⁴⁰: Այլ կերպ դժուար է բացատրել նրա տպագրի ընթեր-
 ցումների համընկնումը «Զօրանամակ»ի «Հարաւային դռան» երկու
 ինդրառու անունների դէպքում (տարբերուելով տպարան ուղար-
 կուած երկու նմանահանուժիւններից (AB, որոնցից մէկն, ամե-
 նայն հաւանականութեամբ, արուած էր իր ձեռքով)՝ ԺԳ. Ե-
 ր[ու]անդունի (AB - Երանդունի, ET - Երանթունի) եւ ԺԴ. Հա-
 մաւտունեան (- ET. AB - Համատունեան):

138 Օգտագործուած փակագծերն են. [...] - վերականգնում. [...] - աւելորդ տառեր.
 (...) - արարական բուանշանով ծանօթագրում:

139 ԱՐԲԱՀԱՄԵԱՆ, Ա., *Հայոց գիր եւ գրչութիւն*, 71-74: «Զօրանամակ»ն ընդօրինակած
 առաջին՝ Թորոս գրչի գեղեցիկ ձեռացագրին ամենից մօտ օրինակները տե՛ս
 ԳԱՐԵԳԻՆ ՎՐԴ., *Քարտէզ հայ հնագրութեան*, տախտ. ԾԴ. (պատկ. 84, 1266 ք.),
 տախտ. ԾԵ. (պատկ. 87, 1267 ք.), տախտ. ԾԹ. (պատկ. 88, 1268 ք.), տախտ. ԿԹ.
 (պատկ. 102, 1288 ք.), տախտ. ՀԲ. (պատկ. 105, 1292 ք.), տախտ. ՀԸ. (պատկ. 128,
 1328 ք.), տախտ. ԶԴ. (պատկ. 132, 1334 ք.). ՍԹՈՈՒՆ, Մ. - ԳՈՒՅՈՒՄՉԵԱՆ, Տ. -
 ԼԵՄԱՆՆ, Հ., *Հայկական հնագրութեան պլան*, քիւ 71 (260-261), քիւ 72 (262-263),
 քիւ 77 (272-273), քիւ 80 (278-279): Սրանք բոլորը՝ ԺԳ. դարու գրչագրեր են՝
 վերջին երկուսն ընդօրինակուած Երզնկայում:

140 *Սրբոյն Եփրեմի Մատենագրութիւնք*, հտ. Գ., Մեկնութիւն չորեքտասան քրթոցն Պա-
 դոսի, Ա. Ղազար, Վենետիկ 1836:

[ԳԱՀՆԱՄԱԿ ԱԶԱՏԱՅ ԵՒ ՏԱՆՈՒՏԷՐԱՆՅ ՀԱՅՈՑ]¹

[Ա]հա կայ² խնդիր արարեալ ի դըրան արքունի յԱրտա-
չէսի³ թագաւորի՝ զոր⁴ ի Տիսպոնն, խաւսեցեալ՝ եթե⁶ ես զու-
մականն⁵ զնամա(կն)⁶, զոր Արտաշրի ի դիւանին՝ տեսի:

Ի Քաղոց ամսոյ ի⁷ Ժէ.ի⁸ Վումայ արքայից արքայի եւ
բարերարի Ե.[ի]⁹ գիր արարի ես՝ Սահակ կաթողիկոս, եթե¹⁰ որ-
պէ՛ս Ձեր բարերարութի[ւ]նդ¹¹ հրաման տացէ Հայոց ազատաց

-
- 1 A չիք *Գահնամակ...Հայոց* (վերականգնում՝ ըստ առաջաբանում նշուած անուանման). այլ վարկածները (ըստ ՌԻՆՏԱՆԷՍԻ՝ *Գահնամակ նախարարացն Հայոց*, ըստ ՕՐԲԷԼԵԱՆՍ Ա՝ *Գահնամակ իշխանացն Հայոց*) կարող են ուղղակի ուշ գրական հողի վրայ ծագած դիտուել:
 - 2 A *Հակայ* փխ *[Ա]հա կայ* (վերականգնում. Մ. Էմինը եւ Ղ. Ալիշանը վերականգնելի են համարել՝ *[Մ]հակայ*, Ն. Ադոնցը՝ *[Իմ՝ Սա]հակայ*):
 - 3 Ղ. Ալիշանի մօտ, հաւանաբար, տպագրական վրիպակով՝ *յԱրտատաչէսի*:
 - 4 Գուցէ, կարելի է վերականգնելի համարել՝ *որ* փխ *զոր* (ըստ Բ. Յարութիւնեանի. *յգ[որ]*):
 - 5 Ըստ Ղ. Ալիշանի՝ վերականգնելի է *զ[Վ]ումականն* փխ *զումականն*:
 - 6 Բառի վերջին տառերը (ըստ չափի՝ երկու) կորել են պատառիկ-պահպանակը նոր ձևագրում կարելիս փորում ընդհանրացնելից շրդի մէջ, թէպէտ վերևի երկու չնչին կետեր լուսանկարներում նշմարում են (= <կն>, իգաֆետային <կի>-ն քիչ հաւանական է). Մ. Էմինը վերականգնել է *նամականի* (ԱԽՎԵՐԴԵԱՆ, Գ., *Նամակներ*, 355), Ղ. Ալիշանը՝ լոկ <կ>, Ն. Ադոնցը բաց է թողել:
 - 7 Ն. Ադոնցի մօտ այս *ի*-ն բացակայում է՝ թերևս, տպագրական վրիպակով:
 - 8 Տողակգրի այս *ի*-ին գոնէ Ղ. Ալիշանի լուսատիպ նկարում (որի որոշ տառեր ուտուշուել են, բայց՝ ինամբով) յստակ ընթերցուող խոշոր գլխատառով է (գրչի թողած վերջակետից յետոյ՝ *Ժէ. / Ի*), եւ հասկանալի չէ, թէ երեք հրատարակիչներն էլ նրա փոխարէն ինչու են վերծանել՝ *Եւ*:
 - 9 A *եւ բարերարի եւ* փխ *եւ բարերարի Ե-ի* (վերականգնում. իմա՝ «*Ե-երորդի [ամի]*». հմմտ. երկաթագիր *Ի-Ի*. ըստ Ն. Ադոնցի եւ Բ. Յարութիւնեանի՝ վերականգնելի է՝ *եւ բարերարի եւ [հզաւրի]*):
 - 10 Հրատարակիչները վերծանել են՝ *թէ* փխ *եթե*, իսկ երկու տող վեր՝ *եթէ*, բայց լուսանկարներում երկու դեպքում էլ *եթե*-ն է յստակ ընթերցում (այլ վաղ գրչագրերում եւս այս շաղկապի երկրորդ *ե*-ն է աւելի յաճախ):
 - 11 Գրիչը վրիպել է պատուոյ նշանը. բոլոր հրատարակիչները վերականգնել են *ւ*-ը առանց նշման:

եւ տանուտէրանց՝ որպէս յառաջ առ Հայոց ազգին՝ եւս¹² նոյնպէս եւ ի Զերուստ դիւանի շահահամարին¹³ առնել:

Որ յայսմ հետէ Հայոց ազատաց եւ տանուտէրանց գահ ի յայտ լինէր, նոյնպէս Ներսէս՝ հրամանաւ արքայից արքայի, եւ ես՝ Սահակ¹⁴ Հայոց կաթողիկոս, կնքեցաք զԳահահամակին¹⁵ եւ եղաք մատանի զարքայից արքայի եւ զմերս:

- Եւ է այսպէ՛ս արդար եւ ճշմարիտ¹⁶.
- Առաջին իշխանն¹⁷ Հայոց եւ Մախրազն¹⁸,
- Ա.¹⁹ Սիւնեաց տէր,
- Բ. Ասպետն,
- Գ. Արծրունեաց տէր,
- Դ. Մամիկոնէից տէր²⁰,
- Ե. Շահապն Ծոփաց տէր²¹,

12 Այս եւս բառը, քերես, պատահմամբ վրիպուել է ն. Ադոնցի րնագրում:
 13 Ր տառի ստորին մասը կորել է պատառիկ-պահպանակը կարելիս փորում 5 անցքերից 4րդի մէջ (վերևի մասը լուսանկարներում նշմարում է). վերականգնումը կատարել են բոլոր հրատարակիչները. ըստ Գ. Խալաթեանցի՝ վերականգնելի է շահահամարն (Մաս I, 295):
 14 <Սահակ անուան սկզբնատուերը մնացել են պատառիկ-պահպանակը կարելիս փորում վերջին անցքի մէջ (վերականգնումը կատարել են բոլոր հրատարակիչները):
 15 Ըստ ն. Ադոնցի՝ ընկալելի է զԳահահամակն (270, ծնթ. 1). եզրոյթի այս ձևը՝ Գահահամակի, քերես, կարող է դիտուել՝ իբրև իրանական իզաֆետային կառուցումով նշան (ըստ այդմ՝ «Գահ[եր]-ի նամակ-վաւերագիր»):
 16 ն. Ադոնցի մօտ տպագրական վրիպակով է՝ ճշմարիտ:
 17 ն. Ադոնցի մօտ, հաւանաբար, տպագրական վրիպակով՝ իշխանն:
 18 Մատենագիրների մօտ այս գործակալութեան անուանումը Մաղխազ տարբերակով է («Զօրանամակ»ի՝ Արեւմտեան դուռն... Զ. Խորխուռունի - Ռ [(1000) մարտիկ արք]):
 19 Գուցէ, այս Ա եւ յաջորդող թուահամարները կարելի է նաև հետագայ արտագրողի յաւելում համարել, կամ էլ՝ շարունակող նախորդ՝ մաղխազ-իշխան-ի թուահամարին (ըստ ԽԱԼԱԹԵԱՆՑ, Գ., Մաս I, 294, Մաս II, 114):
 20 Ըստ ն. Ադոնցի՝ վերականգնելի է Դ. [Մաղխազունի, Ե.] Մամիկոնէից տէր փի Դ. Մամիկոնէից տէր (հմմտ. ՈՒԽՏԱՆԷՍ, գլ. Ա.ի.է., տե՛ս հետագօտութեան րաժնի ծնթ. 25-27):

- Զ. Մոկաց տէր,
 է. Ռչտունեաց տէր,
 Ը. Վահուհեաց տէր,
 Թ. Կասպէից²² տէր,
 Ժ. Անձաւացեաց տէր,
 ԺԱ. Ապահունեաց տէր,
 ԺԲ. Կամսարականն,
 ԺԳ. Այդ Ապահունի²³,
 ԺԴ. Վանանդացին,
 ԺԵ. Ամատունի²⁴ տէր,
 ԺԶ. Գողթան տէր,
 ԺԷ. Գնունեաց տէր,
 ԺԸ. Այդ Անձաւացի,
 ԺԹ. Տայոց,
 Ի. Բասենոյ դատաւորն²⁵,

- 21 Թերևս, կարելի է վերականգնելի համարել՝ *Ե. Շահապն, [Զ.] Մոկաց տէր* փխ *Ե. Շահապն Մոկաց տէր* (տե՛ս Ագաթանգեղոսի իշխանացուցակում՝ *Եաւթերորդ՝ իշխանն Մոկաց աշխարհին... չորեքտասաներորդ՝ իշխանն շահապ* [ձձ. շահապն] *Զարաւանդ եւ Հեր գաւառի*). բոլոր դէպքերում, հակառակ Ն. Ադոնցի (263), Կ. Թումանովի (252) և Բ. Յարութիւնեանի (69) դրոյթի՝ «Գահնամակ»ի *Մոկաց = [Մեծն] Մոկաց*, ինչպէս որ եղել է յունարէն թարգմանութեամբ պահպանուած «Գրիգորի վարք»ում. *Եօթերորդ՝ իշխանը Մեծ Մոկքի, որ Միջագետքի մօտ է գտնուում* (GARITTE, G., 1946, 73; Ա.Գ.Ա.Թ.Ա.ՆԳԵՂՈՍ, 1977, 178):
- 22 Թերևս, կարելի է վերականգնելի համարել՝ *Կաղմէից* փխ *Կասպէից* (ՅԱ.ԿՈՒԵԱՆ, Ա., 2009, 291):
- 23 Պատահիկում երկրորդ քառը միացուած է առաջինին և փոքրատառով է՝ *Այդապահունի*. նոյնն է նաև միւս երեք դէպքերում՝ *ԺԸ. Այդանձաւացի, ԼԶ. Այդաբեղեանն, ԼԷ. Այդղիմաքսեանն*:
- 24 «Ջօրանամակ»ում, թերևս, գրչական վրիպակով՝ *Արեւելեան դուռն... Բ. Ամասկոնի*. նրա զօրաբանակի թուանշանը ևս, գուցէ, կարելի է համարել երկաթագիր տառերի շփոթի արդիւնք և վերականգնել՝ *Տ (4000)* փխ *Մ (200)*. յիշենք, որ ոչ շատ անց՝ 440 և 450-451 թուականներին Վահան Ամատունին Հայոց առաջին պաշտօնեան էր՝ հազարապետը (Կորիւնի ԻԶ. գլխում. *Ի զինուորական կողմանն առաջնուան՝ Վահան անուն յազգէն Ամատունեաց, որ էր հազարապետ Հայոց Մեծաց*):

ԻԱ. Գն/թունեաց տէր,
ԻԲ. Վարձաւունին,
ԻԳ. Գարդմանայ²⁶ տէր,
ԻԵ.²⁷ Սահ[ա]ւունին²⁸,
ԻԶ. Գաբեղէնից²⁹ տէր,
ԻԷ. Աբեղէնից տէր,
ԻԸ. Սիւնեաց երկրորդն,
ԻԹ. Արծրունեաց երկրորդն,
Լ. Արծրունեաց երրորդն,
ԼԱ. Մամիկոնէից երկրորդն,
ԼԲ. Ռոփսեանն,
ԼԳ. Աշոցեանն³⁰,
ԼԴ. Դիմաքսեանն,
ԼԵ. Բուխա Դիմաքսեանն³¹,

25 Գուցէ, կարելի է վերականգնելի համարել՝ **Ի. Բասենոյ, [ԻԱ.] Դատաւորն** փխ **Ի. Բասենոյ դատաւորն** (A):

26 Ղ. Ալիշանի հրատարակութեան մէջ, հաւանաբար, տպագրական վրիպակով՝ **Գարդմանայ**:

27 Գուցէ, կարելի է վերականգնելի համարել՝ **ԻԳ. Գարդմանայ տէր, [ԻԴ. Ծաւղէից** (կամ՝ **Ուտէացի**) **տէր.] ԻԵ.** փխ **ԻԳ. Գարդմանայ տէր, ԻԵ.** (ըստ «Զօրանամակ»-ի և Խորենացու, որոնք **Գարդմանայ, Ծաւղէից** և **Ուտէացի** իշխաններին յիշում են իրար կողքի. հմմտ. **տէր... տէր.** ըստ Բ. Յարութիւնեանի՝ «Գահնամակ»ի մեզ հասած ընագրում Ծաւղէից իշխանութեան բացակայութիւնը բաւարար է՝ մտածելու, թէ այն վերացուել էր մինչև Գ. դարու կեսերը, որից յետոյ Փաւստոս Բուզանդը նշում է Մուշեղ Մամիկոնեանի կողմից՝ արդէն **Արձախ/Արցախ** կոչուած ապստամբած մարզի հպատակեցումը):

28 **Ա Սահւունին** փխ **Սահ[ա]ւունին** (գրչի կողմից, գուցէ, իրօք պատահաբար բաց թողած **ա**-ի վերականգնումը կատարել են բոլոր հրատարակիչները, այն էլ՝ առանց նշումի):

29 Այս ևս յաջորդ անունը, գուցէ, կարելի է վերականգնելի համարել՝ **Գաբեղէնից և Աբեղէնից**, ինչպէս մատենագիրների մօտ է (հմմտ. **ԼԶ. Այդ Աբեղեանն**):

30 **Ա Գաշոցեանն** (վերականգնումը՝ բոլոր հրատարակիչների. հմմտ. **ԼԳ. Երկրաշոցեանն**):

31 Պատահիկում երկրորդ բառը միացուած է առաջինին և փոքրատառով է՝ **Բուխադիմաքսեանն**:

- ԼԶ. Այդ Աբեղեանն,**
ԼԷ. Այդ Դիմաքսեանն,
ԼԸ. Պալուենին,
ԼԹ. Առաւելեանն,
Խ. Աշահմարեանն³²,
ԽԱ. Համբուժեանն³³,
ԽԲ. Վարասպակեանն³⁴,
ԽԳ. Ջիւնականն,
ԽԴ. Ակէացին,
ԽԵ. Զարեհաւանեանն,
ԽԶ. Ընծայեցին³⁵,
ԽԷ. Մանդակունին,

- 32 Ըստ Ն. Աղոնցի՝ *Աշահմարեան* = «Զօրանամակ»ի՝ *Աշխաղարեան (Հիւսիսային դուռն... ԽԱ. ... - Ճ. [(100) մարտիկ արք])*. տե՛ս 257 (հմմտ. **Հ - Խ** և ուշ երկաթագիր **Մ - Տ > Գ**):
- 33 Ըստ Ն. Աղոնցի՝ *Համբուժեան* = «Զօրանամակ»ի՝ *Հարուժեան (Հարաւային դուռն... Ը. ... - Ճ. [(100) մարտիկ արք])*. տե՛ս 263՝ "кн. Амбужанъ 100" (երկու տարբերակների համադրումով, թերևս, վերականգնելի է՝ **Հարուժեան* իրական անուանաձևը, որում կատարուել են յանախ հանդիպող անցումներ՝ *ար* → *ար եւ ար* → *ամբ*. «Ներսէսեան» գահնամակում՝ [ՃԶ.] *Համբուժեանք*):
- 34 Ըստ Ն. Աղոնցի՝ *Վարասպակեան* = «Զօրանամակ»ի՝ *Վարազարտիկեան (Հիւսիսային դուռն... ԽԲ. ... - Ճ. [(100) մարտիկ արք])*. տե՛ս էջ 263՝ "кн. Вараспакянъ 100"
- 35 Արդէն ըստ Ն. Աղոնցի (264, 317) և Բ. Յարութիւնեանի (1991, 29)՝ *Ընծայեցին* = «Զօրանամակ»ի՝ *Ընծաքին (Արեւմտեան դուռն... ԺԳ. ... - Տ* [ուղղելի՝ Մ (հմմտ. ուղղագիծ երկաթագիր **Մ - Տ**) (200) *մարտիկ արք*]). միևնոյն ժամանակ, դժուար թէ կարող է գիշտ լինել այս նախարարութեան (որին երկու փաստաթղթում էլ յաջորդում է հետագայի Տուրուբերանի *Մանդակունի* և *Սղկունի* տոհմերի յիշատակութիւնը, և որին ծանօթ էին Եղիշէն ու Ղազար Փարպեցի(ն) նոյնացումը հետագայի Վասպուրականի արեւելքում *Անձահիճոր* գաւառի (Թովմա Արծրունու մօտ մէկընդմէջ կոչուած նաև՝ *Ընծայից ձոր*) իշխանատոհմի հետ. այն շատ հեռու էր «Արեւմտեան դռնից», և նրա անունը կարելի է փորձել փնտռել լոկ «Արեւելեան»ի ցուցակում. պատահական չէ, գուցէ, որ «Ներսէսեան» գահնամակում երկու տարբեր տոհմեր կան՝ *Ընծայնոցք* ([ԿԳ.], *Ապահունիքի* ու *Հարքեանքի* միջև) և *Ընծայենիք* ([ՂԸ.] անուններով (տարբերակներ՝ *Ընծայնոցք* և *Ընծայենիք*)

ԽԸ. Սղիունին,
Մ. Երմանթունին³⁶,
ՄԱ. Սպանդունին,
ՄԲ. Առաւենեանն,
ՄԳ. Տրունին,
ՄԴ. Տամբերացին³⁷,
ՄԵ. Հաւնունին,
ՄԶ. Բժնունին,
ՄԷ. Քաջբերունին,
ՄԸ. Մեհնունին,
ՄԹ. Նախճերին,
Կ. Քաղաքապետն արքունի,
ԿԱ. Որսապետն արքունի³⁸,
ԿԲ. Արտաշեսեանն³⁹,

36 Ըստ Ն. Ադնցի՝ *Երմանթունի* = «Զօրանամակ»ի՝ *Երանթունի* (< *Եր[ու]անթունի* < *Երունանդունի*) (*Հարաւային դուռն... ԺԳ. ... - Յ [(300) մարտիկ արք]*). տե՛ս 263՝ "кн. Ермавтуни 300":

37 *Մամբերացին* փխ *Տամբերացին* (վերականգնում՝ ըստ Ղ. Ալիշանի եւ Ն. Ադնցի. հմմտ. ուղղագիծ երկարագիր **Տ - Մ**. «Զօրանամակ»ում՝ *Արեւելեան դուռն... Ե. Տամբարացի* [*Տամբերացի*] - **Ճ [(100) մարտիկ արք]**):

38 Ըստ Ն. Ադնցի՝ *Որսապետն արքունի* = Խորենացու՝ *Վարաժնունի* (262). ճիշտ է, Պատմահայրը արքունի որսապետ-գործակալների տոհմի անուանադիր *Վարժ/Վարաժ*-ին սերուած է համարել Գեղամեան Գառնիկից, այսինքն՝ կապել է Այրարատի հիւսիս-արեւելեան *Վարաժնունիք* գաւառի հետ (Մարմարիկի աւազան եւ Ադստեւի վերնահովիտ), այնինչ «Զօրանամակ»ում այդ անունով տոհմ չկայ «Արեւելեան» կամ «Հիւսիսային դուռն» պաշտպանների շարքում (սպասելի՛ համապատասխանաբար՝ *Մազազացի* կամ Նիգի *Գնթունի* տոհմերի կողքին), այլ միայն՝ «Արեւմտեան դուռն» պաշտպանների (ուրեմն՝ հետագայի Տուրուբերանի նոյնանուն գաւառում). **ԺԶ. Վարաժնունի - Յ [(300) մարտիկ արք]**. իսկ «Արեւելեան դուռն»՝ ԺԵ. *Վիժանունի* տոհմանունը (դրուած՝ *Գազրիկանից* յետոյ), որը «Գահնամակ»ում *Որսապետից* չորս տող ներքեւ է, կարող է կապուել միայն հետագայի Վասպուրական շխարհի հարաւ-արեւելեան *Վարաժնունիք* գաւառի եւ նրա *Վարաժնունի* տոհմի հետ (լաւ յայտնի՛ է. դարու «Աշխարհացոյց»ին եւ Թովմա Արծրունուն):

39 Նախորդ հրատարակիչների մօտ շտապողաբար վերծանուած է՝ *Արտաշեսեանն*:

- ԿԳ. Վանանդացին երկրորդը**⁴⁰,
ԿԴ. Յուլին,
ԿԵ. Վիժանու⁴¹,
ԿԶ. Աքածու⁴²,
ԿԷ. Շիրակա Դիմաքսեանն⁴³,
ԿԸ. Գազրիկանն,
ԿԹ. Մարացեան տէր,
Հ. Վազրասպունին⁴⁴,
 [...]⁴⁵:

40 **Երկրորդը**<դն> բառի վերջին տառերը մնացել են պատառիկ-պահպանակը կարելիս փորձած նախավերջին անցքի մէջ (վերականգնումը կատարել են բոլոր հրատարակիչները):

41 Ըստ Ն. Ադոնցի՝ վերականգնելի է՝ **Վիժանու[նի]** (250). «Զօրանամակ»ում՝ **Արեւելեան դուռն... ԺԵ. Վիժանունի - Մ [(50) մարտիկ արք]**:

42 Տոհմանուան վերջին **Ի** տառը մի՛ ըստ ամենայնի, ուշ գրիչ փորձել է վերածել **յ**-ի, եւ **Ղ**. Ալիշանը վերծանել է **Աքածոյ**, բայց միւսները՝ **Աքածու** («Զօրանամակ»ում՝ **Արեւելեան դուռն... ԺԸ. Աքածեցի - Մ [(50) մարտիկ արք]**):

43 Ն. Ադոնցի մօտ, հաւանարար, տպագրական վրիպակով՝ **Դիմաքսեան**. պատառիկի բնագրում այս բառը միացուած է նախորդին եւ փոքրատառով է՝ **Շիրակադէմաքսեանն**:

44 Ն. Ադոնցի մօտ, հաւանարար, տպագրական վրիպակով՝ **Վազրասպունին**. ըստ գիտնականի՝ **Վազրասպունի** = «Զօրանամակ»ի՝ **Մազրասունի (Հարաւային դուռն... ԺԶ. ... - Զ [(100) մարտիկ արք])**. 264 (հմմտ. ուղղագրի երկաթագիր **Վ-Ս**):

45 Այս վերջից կորստի հատուածում, գուցէ, կարող են վերականգնելի համարուել «Զօրանամակ»ի հետեւեալ 19 համեմատարար փոքր նախարարական տոհմերը, որոնցից մի քանիսի անունները (դեռ՝ ըստ Ն. Ադոնցի իրաւացի դիտարկման) գրչական աղաւաղումներով են.

Արեւելեան դուռն... Գ. Աւածացի [գուցէ, վերականգնելի՝ **Արածացի**]՝ ըստ Այրարատի **Արածոյ կողմն գաւառի** - **Մ [(200) մարտիկ արք]**,

Զ. Մազազացի - **Զ [(100) մարտիկ արք]**,

Թ. Վառնունի [գուցէ, համեմատելի՝ **Առնայ**]՝ գաւառ հետագայի Պարսկահայքում - **Մ [(50) մարտիկ արք]**,

Ժ. Բաքան [հմմտ. **Բազան**]՝ գաւառ հետագայի Վասպուրականի հարաւ-արեւել-ում - **Մ [(50) մարտիկ արք]**,

ԺԱ. Կճրունին [հմմտ. **Կրճունիք**]՝ գաւառ Վասպուրականի արեւելքում - **Մ [(50) մարտիկ արք]**,

- ԺԲ. Գուկանն** [հմմտ. **Գուկանք**՝ գաւառ վասպուրականի արեւելքում. չշփոթել՝ **Գուկանց** բերդի հետ՝ վանայ լիճի ափին] - **Մ** [(50) մարտիկ արք],
- ԺԳ. Պատասպարունին** [հմմտ. **Պարսպատունիք**՝ գաւառ վասպուրականի արեւելքում] - **Մ** [(50) մարտիկ արք],
- ԺԶ. Զանդաղան** [գուցէ, համեմատելի՝ **Աղանդ-ուտ**՝ գաւառ վասպուրականի արեւելքում] - **Մ** [(50) մարտիկ արք],
- ԺԹ. Ասճչեան** [ըստ Ն. Ադունցի՝ **Ճուարչեան**՝ վասպուրականի հիւսիս-արեւելքում, 321] - **Մ** [(50) մարտիկ արք],
- Է. Յողկեպան** [գուցէ, համեմատելի՝ **Ջորք-Կապան**՝ Սիւնիքում. ՅԱ.ԿՈՐԵԱՆ, Ա., 2009, 282-283. ըստ Կ. Թումանովի՝ **Յողկեպան** = «Գահնամակ»-ի՝ **ԿԴ. Յուլչն** (231, ծնթ. 283, հարցականով)] - **Մ** [(50) մարտիկ արք],
- Ը. Գրգճունի** [գուցէ, համեմատելի՝ **Գորոգու**՝ հետագայի Արցախի հարաւում, ՅԱ.ԿՈՐԵԱՆ, Ա., 2009, 281-282] - **Մ** [(50) մարտիկ արք],
- ԺԷ. Սողացի** [հմմտ. **Սոթք**՝ գաւառ Սիւնիքի հիւսիս-արեւելքում] - **Մ** [(50) մարտիկ արք],
- Ի. Կինան** [գուցէ, համեմատելի՝ **Կէնուազ**՝ ուշ միջնադարեան հարաւային Սիւնիքում, տե՛ս ՅԱ.ԿՈՐԵԱՆ, Ա., 2009, 282-283] - **Մ** [(50) մարտիկ արք] (վերջին չորսը կարող էին «Գահնամակ»ում նաև չլինել՝ մեզ հասած բնագրում երկիցս յիշուած **Սիւնեաց** տոհմանունն տակ նկատի առնուած լինելու պատճառով),
- Արեւմտեան դուռն... ԺԷ. Այծենական** - **Ճ** [(100) մարտիկ արք],
- ԺԹ. Վարժնունեան** - **Ճ** [(100) մարտիկ արք],
- Հարաւային դուռն... Թ. Տրպատունի** - **Ճ** [(100) մարտիկ արք],
- ԺԴ. Համաստունեան** - **Ճ** [(100) մարտիկ արք],
- ԺԷ. Աբրահամեան** - **Ճ** [(100) մարտիկ արք],
- ԻԱ. Բողունի [բնագրում՝ Բողունի]** - **Ճ** [(100) մարտիկ արք] (հմմտ. Ա.ԳՈՒՅ, Ն., 256, ուր նաև մի քանի վրիպումներ կան):

ՎԵՐԾԱՆՈՒԹԻՒՆ

(նշուած են միայն գրչի կէտադրական նշանները եւ գլխատառերը. մերն են փակագծերը եւ բառաբաժանումը, որ բնագրում խառն է. տողահամարները տուել ենք ըստ չորս սիւնակների. լրիւ չընթերցուող տառերը ստուերել ենք)

հա կայ խնդիր արարեալ ի դ-
 րան արքունի յարտաչէ-
 սի թագաւորի զոր ի տիս-
 պոնն խաւսեցեալ եթե

5 ես զուամականն զնամա-
 Վն՝ զոր արտաչրի ի դիւա-
 նին տեսի ի քաղոց ամսոյ ի ժէ:
 Ի Վուամայ արքայից արքա-
 յի եւ բարերարի եւ գիր ա-

10 րարի ես Սահակ կաթող-
 իկոս եթե որպէս ձեր բա-
 րերարութիւնդ հրաման
 տացէ հայոց ազատաց եւ
 տանուտէրանց որպէս

15 յառաջ առ հայոց ազգին
 եւս նոյնպէս եւ ի ձեր-
 ում դիւանի շահհամա-
 Վր՝ին առնել որ յայսմ
 հետէ հայոց ազատաց եւ

20 տանուտէրանց դահ ի
 յայտ լինէր: Նոյնպէս
 ներսեհ հրամանաւ ար-
 քայից արքայի եւ ես
 Վս՝հակ հայոց կաթողի-

25 կոս կնքեցաք զգահնա-

մակին. եւ եղաք մատա-
 նի զարքայից արքայի եւ
 զմերս. եւ է այսպէս ար-
 դար եւ ճշմարիտ:

5 Առաջին իշխանն Հայոց
 եւ մախրագն:
 Ա Սիւնեաց տէր:
 Բ Ասպետն:
 Գ Արծրունեաց տէր:
 10 Դ Մամիկոնէից տէր:
 Ե Շահապն ծովաց տէր:
 Զ Մոկաց տէր:
 Է Ռշտունեաց տէր:
 Ը Վահունեաց տէր:
 15 Թ Կասպէից տէր:
 Ժ Անձաւացեաց տէր:
 ԺԱ Ապահունեաց տէր:
 ԺԲ Կամսարականն:
 ԺԳ Այդ ապահունի:
 20 ԺԴ Վանանդացին:
 ԺԵ Ամատունի տէր:
 ԺԶ Գողթան տէր:
 ԺԷ Գնունեաց տէր
 ԺԸ Այդ անձաւացի:
 25 ԺԹ Տայոց

- Ի Բասենոյ դատաւորն:*
- ԻԱ Գնթունեաց տէր:*
- ԻԲ Վարձաւունին:*
- ԻԳ Գարդմանայ տէր:*
- 5 *ԻԵ Սահռունին:*
- ԻԶ Գաբեղէնից տէր:*
- ԻԷ Աբեղէնից տէր:*
- ԻԸ Սիւնեաց երկրորդն:*
- ԻԹ Արծրունեաց երկրորդն:*
- 10 *Լ Արծրունեաց երրորդն:*
- ԼԱ Մամիկոնէից երկրորդն:*
- ԼԲ Ռոփսեանն:*
- ԼԳ Գաշոցեանն:*
- ԼԴ Դիմաքսեանն:*
- 15 *ԼԵ Բուխա դիմաքսեանն:*
- ԼԶ Այղ աբեղեանն:*
- ԼԷ Այղ դիմաքսեանն:*
- ԼԸ Պալունին:*
- ԼԹ Առաւելեանն:*
- 20 *Խ Աշահմարեանն:*
- ԽԱ Համբուժեանն:*
- ԽԲ Վարասպակեանն:*
- ԽԳ Զիւնականն:*
- ԽԴ Ակէացին:*
- 25 *ԽԵ Զարեհաւանեանն:*
- ԽԶ Ընծայեցին:*
- ԽԷ Մանդակունին:*
- ԽԸ Սղկունին:*
- ԽԹ Տայգրեանն*
- 5 *Մ Երմանթունին:*
- ՄԱ Սպանդունին:*
- ՄԲ Առաւելեանն:*
- ՄԳ Տրունին:*
- ՄԴ Մամբերացին:*
- 10 *ՄԵ Հաւնունին:*
- ՄԶ Բժնունին:*
- ՄԷ Քաջբերունին:*
- ՄԸ Մեհնունին:*
- ՄԹ Նախճերին:*
- 15 *Կ Քաղաքապետն արքունի*
- ԿԱ Որսապետն արքունի*
- ԿԲ Արտաշեսեանն:*
- ԿԳ Վանանդացին երկրորդն¹*
- ԿԴ Ցուն:*
- 20 *ԿԵ Վիժանու:*
- ԿԶ Աքաճու:*
- ԿԷ Շիրակա դիմաքսեանն*
- ԿԸ Գազրիկանն:*
- ԿԹ Մարայեան տէր*
- 25 *Հ Վազրասպունին¹*

1. Բացի գլխատուերից միշտ երկաթագրով են **Զ, Է, Թ, Լ, Խ, Կ, Հ, Զ, Մ, Ն, Շ, Պ, Ռ, Ի, Փ, Ք** տառերը. երկձև է **Ա**-ն՝ եռաստեղն (բոլորագրով) և երկստեղն (ուշ երկաթագրով). **Զ**-ն չի հանդիպում. միւսները բոլորագրով են:

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

(մասնակի. Սահակ Պարթեևի նամակ-առաջաբանը՝ լրիւ¹)

Ահաւասիկ Արտաշէս թագաւորի կողմից արքունի դռանը, որ Տիգրեոնում է, հարցում է արուել, [որում] խօսուած [է այն մասին], [թէ արդեօ՞ք ես այն Ռամական-նամակը, որ [կար] Արտաշիրի դիւանում, գտել եմ [գտայ, տեսայ]:

Քաղոց ամսի տասնեօթին՝ Վռամ արքայից արքայի եւ բարերարի հինգերորդ [տարուայ], նամակ գրեցի ես՝ Սահակ կաթողիկոսս [այն մասին], [թէ Ձերդ բարերարութիւնը ի՛նչպէս հրաման տայ՝ Հայոց ազատներին եւ տանուտէրերին Ձեր դիւանի շահհամարում [աշխարհագրում] այժմ եւս նոյն կերպ դասակարգել, ինչպէս որ նախկինում [էր] Հայոց ազգի մօտ:

Նաեւ [նոյնպէս], որպէսզի այսուհետեւ Հայոց ազատների եւ տանուտէրերի գահ[ակարգ]ը յայտնի [պարզ] լինէր, արքայից արքայի հրամանով՝ Ներսէհը եւ ես՝ Սահակ Հայոց կաթողիկոսս, կնքեցինք այս Գահնամակին [Գահնամակը] եւ դրեցինք [վրան] արքայից արքայի մատանեդրոշմը եւ մերը:

Եւ այսպէս է արդարը եւ ճշմարիտը.

Նախ եւ առաջ՝ Հայոց իշխանը եւ Մաղխազը, [ապա՝]²

Առաջին՝ Սիւնեաց տէրը³,

Երկրորդ՝ Ասպետը⁴,

Երրորդ՝ ...

...

Եօթանասուներորդ՝ Վազրասպունին,

[...]:

1 Քառակուսի փակագծերի մէջ տուել եմք ինչպէ՛ս լրացումներ՝ «այսօրուայ հայերէնով սահուն շարադրանք ստանալու նպատակով», այնպէ՛ս էլ քացատրական նշումներ՝ նախորդող բառի կամ բառերի համար (հմմտ. ՈՒԽՏԱՆԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ, Հայոց պատմութիւն, Թարգմանութիւնը, առաջաբանը եւ ծանօթագրութիւնները ԱՌԱՔԵԼԵԱՆ, Վ., Խմբագիր՝ ՅԱ.ԿՈՐԵԱՆ, Ա., Երևան 2006, 17-18): Ընդ սմին՝ քննարկը (որի շարադասութիւնը եւս հնարաւորինս տուել եմք այսօրուայ հայերէնի կանոններին համապատասխան՝ պահելով գրաբար խօսքի շեշտերը) կարելի է ընթերցել՝ նաև դրանց մի մասը բաց թողնելով:

2 Այս տողի միտքը, գուցէ, կարելի է ընկալել նաև այլ տարբերակով՝ Հայոց իշխան[ներից] առաջինը՝ նաեւ [Հայոց] մաղխազն [է]:

3 Իմա՝ Սիւնեաց իշխանը:

4 Իմա՝ [Թագադիր] ասպետ [իշխան]ը:

[ԶԱԻՐԱՆԱՄԱԿ]¹

Արեւմտեան դուռն է².

- Ա.³ Անգեղտուն⁴ - ՎՆ [(3400) մարտիկ արք⁵],
- Բ. Բղեշին Աղձնեաց - Տ [(4000) մարտիկ արք],
- Գ. Բզնունական⁶ - Վ [(3000) մարտիկ արք],
- Դ. Մանաւազեան - Ռ [(1000) մարտիկ արք],
- Ե. Բազարատունի⁷ - ՌՇ⁸ [(1500) մարտիկ արք],
- Զ. Խոռխոռունի⁹ - Ռ [(1000) մարտիկ արք],
- է. Ծովացի - Ռ [(1000) մարտիկ արք],
- Ը. Վահունի - Ռ [(1000) մարտիկ արք],
- Թ. Ապահունի - Ռ [(1000) մարտիկ արք],
- Ժ. Գնունի¹⁰ - Շ [(500) մարտիկ արք],

- 1 ABET չիք *Զաւրանամակ* (պայմանական վերականգնում՝ ըստ գրականութեան մէջ առաւել տարածուած աւանդոյթի, ըստ Ղ. Ալիշանի՝ վերնագրելի է՝ *Զօրաթիւ Հայախումբ բանակի*):
- 2 ABT *Արեւմտեան դուռն է: Արեւմտեան դուռն է:* (T-ում՝ կրկնակետերի փոխարէն՝ միջակետեր), E *Արեւմտի դուռն է այս:* (E-ի պակասող թերթում եւս կրկնութիւնը, հաւանաբար, եղև է) փխ *Արեւմտեան դուռն է* (չպիտի շփոթութեան տեղիք տայ նաև այն, որ կրկնուող դոմանունն աղիւսակում՝ թերևս, ուշ գրչի կողմից և գեղագիտական նկատառումներով անկացուել է իր ցանկասիւնակի ուղղութեանը հակառակ՝ յարելով «Հարաւային դռան» վերջին անուանը. վերականգնումը կատարել են բոլոր վերծանողները):
- 3 T-ում թուանշանների վրայ (տոհմահամարների և գորաբանակների. բոլոր տարբերակներում, բացի Ղ. Ալիշանից՝ փոքրատառերով) պատուոյ նշան է դրուած, որ չունեն ABE / E չիք *Ա. Անգեղտուն... Վարազարտիկեան - Ճ* (44 տող. գրչագրում երկու թերթերից առաջինի կորուստի պատճառով) (ABT):
- 4 ABT-ում բոլոր անուններից յետոյ դրուած են միջակետեր, E-ում՝ կրկնակետեր (մենք տալիս ենք գծիկով). Ղ. Ալիշանն այստեղ ևս յաջորդ 85 սիւնակատողերում արարական թուանշաններով տուել է գորաբանակները՝ *Անգեղտուն - 3400* փխ *Անգեղտուն* (ABT). մենք դրանք տալիս ենք հայկական թուանշաններից յետոյ ֆառակուսի փակագծերի մէջ:
- 5 Ըստ բնագրի աւարտ-ամփոփման մէջ նշուած եզրոյթի՝ այս *[մարտիկ արք]* բառերը պայմանականօրէն վերականգնելի ենք համարում նաև բոլոր յաջորդ սիւնակատողերում (առանց յատուկ նշման):
- 6 *T Բզնունական* փխ *Բզնունական* (AB. բոլոր վերծանողներն՝ ըստ T-ի):
- 7 Թերևս, ընկալելի է՝ *Բագ]ա[րատունի*:
- 8 Ն. Ադոնցի մօտ (251), թերևս, պատահական վրիպմամբ՝ *Ռ* (1000):
- 9 Ն. Ադոնցի մօտ (251), թերևս, տեխնիկական վրիպակով՝ *Խորխոռունի* (իմա՝ «Գահնամակ»ի՝ *Առաջին իշխանն Հայոց եւ Մախղազն*):

- ժԱ. Բասենացի - Ո [(600) մարտիկ արք],
- ժԲ. Պալուների - Յ [(300) մարտիկ արք],
- ժԳ. Ընծաքին¹¹ - Մ¹² [(200) մարտիկ արք],
- ժԴ. Մանդակունի - Յ [(300) մարտիկ արք],
- ժԵ. Ս]ա[ղկունի¹³ - Յ [(300) մարտիկ արք],
- ժԶ. Վարաժնունի - Յ [(300) մարտիկ արք],
- ժԷ. Այծենական - Ճ [(100) մարտիկ արք],
- ժԸ. Առուենեան¹⁴ - Յ [(300) մարտիկ արք],
- ժԹ. Վարժնունեան - Ճ [(100) մարտիկ արք],
- Ի. Սպան[ղ]ունի¹⁵ - Յ [(300) մարտիկ արք],
- ԻԱ. Ռափսեան¹⁶ - Ճ [(100) մարտիկ արք]:

Հիւսիսային դուռն է¹⁷.

Ա. Բդեշխ Գուգարայ¹⁸ - ՏՇ¹⁹ [(4500) մարտիկ արք],

10 T Գընունի փխ Գնունի (AB. այսպէս ման՝ ն. Ադոնցի մօտ, 251):

11 Ըստ ն. Ադոնցի (264) և Բ. Յարութիւնեանի (1991, 29)՝ Ընծաքին = «Գահնամակ»ի՝ *ԽԶ. Ընծայեցին*. միաժամանակ դժուար թէ քիչտ լինի այս մախարարութեան (երկու փաստաթղթում էլ յիշուած՝ *Մանդակունի* և *Սղկունի* տոհմերից առաջ) նոյնացումը յետագայի Վասպուրականի արևելքում ընկած *Անձահիճոր* գաւառի (Թովմա Արծրունու մօտ մէկընդմէջ կոչուած ման՝ *Ընծայից ձոր*) իշխանատոհմի հետ. վերջինս հետո էր «Արևմտեան դոնից», և նրա անունը փնտոնելի է լոկ «Արևելեան դոն» ցուցակում (պատահական չէ, գուցէ, որ «Ներսէսեան» գահնամակում կան *Ընծայնոցք [ԿԴ.]* և *Ընծայենիք [ՂԸ.]* անուններով երկու տարրեր տոհմեր):

12 T Տ (4000) փխ Մ (200) (վերականգնում. տն՛ս ուղղագիծ երկաթագիր Մ - Տ և փոխարէնը):

13 ABT *Սաղկունի* (ըստ ամենայնի, պէտք է վերականգնելի համարել առանց *ա*-ի՝ ըստ պատմիչների և «Գահնամակ»ի՝ *ԽԸ. Սղկունի*):

14 Գուցէ, ըստ պատմիչների և «Գահնամակ»ի (ԾԲ. *Առաւենեանն*)՝ կարելի է վերականգնելի համարել՝ *Առաւենեան* փխ *Առուենեան* (ABT):

15 ABT *Սպանունի*. վերականգնումը՝ ըստ պատմիչների և «Գահնամակ»ի (ԾԱ. *Սպանդունիին*)՝ կատարել են արդէն Ղ. Ալիշանը (առանց փակագծերի) և ն. Ադոնցը:

16 Հմմտ. «Գահնամակ»ի՝ ԼԲ. Ռոփսեան:

17 ABT *Հարաւային դուռն է* (միայն T-ում՝ միջակէտով) փխ *Հիւսիսային դուռն է* (չպիտի շփոթութեան տեղիք տայ ման այն, որ ABT տարրերակի աղիւսակում դոնանունը գրուած է վերելի կենտրոնից դէպի աջ բոլորտող-իջնող ցանկասիւնակի ներքեւում և շրջուած. վերականգնումը կատարել են բոլոր հրատարակիչները):

- Բ. Կամսարական* - *Ռ*²⁰ [(1000) մարտիկ արք],
- Գ. Կասպեցի* - *Վ* [(3000) մարտիկ արք],
- Դ. Ուտէացի*²¹ - *Ռ* [(1000) մարտիկ արք],
- Ե. Ծաւղէացի*²² - *Ռ* [(1000) մարտիկ արք],
- Զ. Տայեցի* - *Ո* [(600) մարտիկ արք],
- է. Մամիկոնեանն* - *Ռ* [(1000) մարտիկ արք],
- Ը. Վանանդացին* - *Ռ* [(1000) մարտիկ արք],
- Թ. Գարդմանեցին*²³ - *Ռ* [(1000) մարտիկ արք],
- Ժ. Որդուհի* - *Չ* [(700) մարտիկ արք],
- ԺԱ. Առուեղեանքն*²⁴ - *Շ* [(500) մարտիկ արք],
- ԺԲ. Աշոցեան* - *Շ* [(500) մարտիկ արք],
- ԺԳ. Դիմաքսեան* - *Յ* [(300) մարտիկ արք],
- ԺԴ. Գ]ը[նիթուհի*²⁵ - *Յ* [(300) մարտիկ արք],
- ԺԵ. Բոխայեցի* - *Յ* [(300) մարտիկ արք],
- ԺԶ. Գաբեղեան* - *Յ* [(300) մարտիկ արք],
- Ժէ. Աբեղեան* - *Յ* [(300) մարտիկ արք],
- ԺԸ. Հանուհի* - *Յ* [(300) մարտիկ արք],
- ԺԹ. Սահառուհի* - *Յ* [(300) մարտիկ արք],
- Ի. Զեւնականն*²⁶ - *Յ* [(300) մարտիկ արք],
- ԻԱ. Աշխաղարեան*²⁷ - *Ճ* [(100) մարտիկ արք],
- ԻԲ. Վարազարտիկեան*²⁸ - *Ճ* [(100) մարտիկ արք]:

18 ABT. գուցէ, տեխնիկական վրիպակով՝ Ղ. Ալիշանի մօտ՝ *Գուգարաց*, ն. Ադոնցի մօտ (251)՝ *Բդեշին Գուգարաց*;

19 ABT. գուցէ, կարելի է վերականգնելի համարել՝ *ՏՃ* (4100) փխ *ՏՇ* (4500) (տե՛ս անցման երկաթագիր *Ճ - Շ*):

20 ABT *Ո* (600) փխ *Ռ* (1000) (վերականգնում. տե՛ս անցման երկաթագիր *Ռ - Ո*):

21 ABT *Որտէացի* փխ *Ուտէացի* (վերականգնումը կատարել են բոլոր վերծանողները):

22 ABT *Ծաւղէացի* փխ *Ծաւղէացի* (վերականգնումը կատարել են բոլոր վերծանողները):

23 B *Գարդմանեցի* փխ *Գարդմանեցին* (AT):

24 Գուցէ, ըստ պատմիչների եւ «Գահնամակ»ի (*ԼԹ. Առուեղեանն*)՝ կարելի է վերականգնելի համարել՝ *Առուեղեանքն* փխ *Առուեղեանքն* (ABT):

25 ABT. ըստ ամենայնի, պետք է վերականգնելի համարել առանց *ը-ի*):

26 ABT *Զեւնականն* փխ *Զեւնականն* (վերականգնում). գուցէ, տեխնիկական վրիպակով՝ Ղ. Ալիշանի մօտ՝ *Զիւնական*, ն. Ադոնցի մօտ (252)՝ *Զիւնականն*:

27 Ըստ ն. Ադոնցի՝ *Աշխաղարեան* = «Գահնամակ»ի՝ *Խ. Աշահմարեան* (257, հմմտ. *չ - Խ* եւ ուշ երկաթագիր *Մ - Տ > Դ*):

28 Ըստ ն. Ադոնցի՝ *Վարազարտիկեան* = «Գահնամակ»ի՝ *ԽԲ. Վարասպակեան* (263):

*Արեւելեան դուռն է*²⁹.

- Ա. Միւնի**³⁰ - **Ա՜ՔՆ**³¹ [(19400) մարտիկ արք],
Բ. Ամատունի³² - **Տ**³³ [(4000) մարտիկ արք],
Գ. Աւածացին³⁴ - **Մ** [(200) մարտիկ արք],
Դ. Վարձաւունի³⁵ - **Մ** [(200) մարտիկ արք],
Ե. Տամբարացի³⁶ - **Ճ** [(100) մարտիկ արք],
Զ. Մազազացի - **Ճ** [(100) մարտիկ արք],
Է. Յողկեպան³⁷ - **Ծ** [(50) մարտիկ արք],

- 29 ABT *Արեւելեան դուռն է: Արեւելեան դուռն է:* (T-ում՝ կրկնակետերի փոխարեն՝ միջակետեր), E *Արեւելեան դուռն է այս:* (E-ի պակասող թերթում եւս կրկնութիւնը, հաւանաբար, եղել է) փիւ *Արեւելեան դուռն է* (չպիտի շփոթութեան տեղիք տայ նաեւ այն, որ կրկնուող դոմանունն աղիւսակում՝ թերեւս, ուշ գրչի կողմից եւ գեղագիտական նկատառումներով աւելացուել է իր ցանկասիւնակի ուղղութեանը հակառակ՝ յարելով «Հիւսիսային դռան» առաջին կամ վերջին անուանը, եւ ոչ էլ այն, որ ցանկասիւնակի անունները աղիւսակի տողերի՝ ներսից դուրս ճառագայթաձև ուղղութիւնը պահպանելու համար գրուել են շրջուած. վերականգնումը կատարել են բոլոր վերծանողները):
- 30 AE *Միւնի* փիւ *Միւնի* (BT. թերեւս, առաջինն է գալիս երկու տարբերակների նախագաղափարից, բայց, իհարկէ, ո՛չ սկզբնօրինակից):
- 31 ABT *Ա՜ՔՆ* փիւ *Ա՜ՔՆ* (E. առանց վերջինիս ծանօթ լինելու՝ բիրի նշանը վերականգնել են արդէն Ղ. Ալիշանը եւ Ն. Ադոնցը):
- 32 ABET *Ամասկոնի* փիւ *Ամատունի* (վերականգնում. հմմտ. «Գահնամակ»ի բնագրի ծնթ. 24):
- 33 ABET *Մ* (200) փիւ *Տ* (4000) (վերականգնում. տե՛ս ուշ երկաթագիր **Տ - Մ**. յիշենք, որ Արտագ խոշոր գաւառի տէր Ամատունիները գոնէ 440, 445 եւ 450-451 թուականներին յիշուած են իբրեւ Հայոց երկրի «առաջին... զինուորական» պաշտօնեայ՝ հագարապետ):
- 34 Գուցէ, կարելի է վերականգնելի համարել՝ *Արածացին* փիւ *Աւածացին* (ABET. ըստ Այրարատի *Արածոյ կողմն* գաւառանուն, տե՛ս ուղղագիծ երկաթագիր Խ - Բ):
- 35 Ղ. Ալիշանի գծապատկերում, գուցէ, ինչ-որ տեխնիկական վրիպակով՝ *Վարձաւունի* (հմմտ. նաեւ նրա «Այրարատ»ում, 426. «*Վարձաւունիք* կամ *Վարձաւունիք...*»):
- 36 ABE *Տամբարացի* (A-ի առաջին *ր*-ն գծիկով ջնջած), T *Տամբարացի* փիւ *Տամբարացի* (վերականգնում՝ ըստ Ղ. Ալիշանի. «Գահնամակ»ի՝ ԾԳ. *Մամբարացի* [=Տամբարացի], տե՛ս ուղղագիծ երկաթագիր **Մ - Տ**):
- 37 Գուցէ, այս տոհմանունը (գրիչների կողմից աղաւաղուած) կարելի է համեմատել Սիւնիքի *Ջորք* - *Կապան* գաւառանունների հետ (ՅԱ.ԿՈՐԵԱՆ, Ա., 2009, 282-283).

- Ը. Գրքը** [զճոռնի³⁸ - Մ [(50) մարտիկ արք],
Թ. Վառնոռնի³⁹ - Մ [(50) մարտիկ արք],
Ճ. Բաքան - Մ [(50) մարտիկ արք],
ԺԱ. Կճրոռնին - Մ [(50) մարտիկ արք],
ԺԲ. Գոռկանն⁴⁰ - Մ [(50) մարտիկ արք],
ԺԳ. Պատասպարոռնին - Մ [(50) մարտիկ արք],
ԺԴ. Գազրիկան - Մ [(50) մարտիկ արք],
ԺԵ. Վիժանոռնի⁴¹ - Մ [(50) մարտիկ արք],
ԺԶ. Զանդաղան⁴² - Մ [(50) մարտիկ արք],
ԺԷ. Սողացի⁴³ - Մ [(50) մարտիկ արք],
ԺԸ. Աքաձեցի - Մ [(50) մարտիկ արք],
ԺԹ. Ասճչնեան⁴⁴ - Մ [(50) մարտիկ արք],
Ի. Կինան⁴⁵ - Մ [(50) մարտիկ արք],
ԻԱ. Տագրեան - Մ [(50) մարտիկ արք]:

Հարաւային դռուն է⁴⁶.

ըստ ԹՈՒՄԱՆՈՎ, Կ., (1963, 231, ծնթ. 283, հարցականով)՝ *Յողկեպան* = «Գահնամակ»ի՝ **ԿԴ. Յուռն**:

- 38 **B Գրքը** [զճոռնի փխ **Գրքը**զճոռնի (AET. գուցե, կարելի է վերականգնելի համարել առանց Ը-ի. համեմատելի է թուով **Գորոզու** իշխանութեան եւ ամրոցի հետ հետագայ Արցախի հարաւում (ՅԱԿՈՐԵԱՆ, Ա., 2009, 281-282):
- 39 Թերևս, կարելի է համեմատել **Առնայ** գաւառի անուան հետ հետագայ Պարսկահայքում (Վ-ն դիտարկելով իբրև իրատեսակ անական):
- 40 **B Գուռկանն** փխ **Գուռկանն** (AET):
- 41 Ըստ Ն. Ադոնցի (321)՝ = **Վարաժնուռնի/Վաժնուռնի**՝ իշխանատոհմ, գաւառ Վասպուրականի հարաւ-արևելքում («Աշխարհացոյց», Թովմա Արծրունի):
- 42 Գուցե, կարելի է համեմատել **Աղանդ-ուռ** գաւառի հետ Վասպուրականի արևելքում (անուրը մէկ անգամ կայ Ղազար Փարպեցու մօտ, գլ. Բ.լր.):
- 43 Ըստ Ն. Ադոնցի (էջ 256)՝ = **Սոթք** գաւառ՝ Սիւնիքի հիւսիս-արևելքում:
- 44 Ըստ Ն. Ադոնցի՝ = վրիպեալ **Ճուրաչեան** (321), հմմտ. **Ճուրաչ-ուռ**՝ գաւառ Վասպուրականի հիւսիս-արևելքում (գուցե՞ վրիպումներով՝ **Ռոռ-Ճուրաչան** > **Ռտճուչնեան** > **Ասճչնեան**):
- 45 Թերևս, կարելի է համեմատել ուշ միջնադարեան հարաւային Սիւնիքի **Կէնուալ**՝ գաւառակի հետ, գուցե նաև՝ Ստ. Օրբէլեանի մօտ (գլ. ԿԱ., 248-249) իբրև նահանգի 30 նշանաւոր վանքերից չորրորդը մանրամասն ներկայացուած **Կնէվանքի** (ՅԱԿՈՐԵԱՆ, Ա., 2009, 282-283):
- 46 ABET **Հիւսիսային դռուն է** (միայն T-ում՝ միջակետով) փխ **Հարաւային դռուն է** (չպիտի շփոթութեան տեղիք տայ նաև այն, որ դռնանունը հակառակ է հայում

- Ա. Կաղմէացի - ԱՎՄ⁴⁷ [(13200) մարտիկ արք],
 Բ. Կորդուացի - Ռ [(1000) մարտիկ արք],
 Գ. Արծրունի - Ռ [(1000) մարտիկ արք],
 Դ. Ռ]ը[չտունի⁴⁸ - Ռ [(1000) մարտիկ արք],
 Ե. Մոկացի - Ռ⁴⁹ [(1000) մարտիկ արք],
 Զ. Գողթնեցի⁵⁰ - Շ [(500) մարտիկ արք],
 Է. Անձեւացի - Շ [(500) մարտիկ արք],
 Ը. Հարուժեան⁵¹ - Ճ [(100) մարտիկ արք],
 Թ. Տրպատունի⁵² - Ճ [(100) մարտիկ արք],
 Ժ. Մեհնունի - Ճ [(100) մարտիկ արք],
 ԺԱ. Ակէացի - Յ [(300) մարտիկ արք],
 ԺԲ. Զարէուանեաց⁵³ - Յ [(300) մարտիկ արք],
 ԺԳ. Եր[ու]անդունի⁵⁴ - Յ [(300) մարտիկ արք],

իր ցանկասիւնակի անունների ուղղութեանը, որոնք հայերէն քարգմանուելիս աղիւսակի տողերի՝ ներսից դուրս փառագայթածն ուղղութիւնը պահելու համար գրուել են շրջուած. վերականգնումը կատարել են բոլոր հրատարակիչները):

- 47 ABET ՍՎՄ փխ ԱՎՄ (վերականգնումը կատարել են արդէն Ղ. Ալիշանը եւ Ն. Ադոնցը):
- 48 ABET. ըստ ամենայնի, պէտք է վերականգնելի համարել առանց ւ-ի:
- 49 Բ-ի գեղագիրն այս տողն ամբողջապէս (Ե. Մոկացի - Ռ) գրել է ցանկասիւնակի սկզբում (Ա. Կաղմէացի-ից առաջ), բայց նկատել է վրիպումը եւ կողմն ուղղման նշան դրել:
- 50 Թերևս, կարելի է վերականգնելի համարել՝ Գառնեցի փխ Գողթնեցի (ABET. ըստ Գառնի գաւառի՝ Վասպուրականի հիւսիսում. իսկ «Գահնամակ»ի ժՁ. Գողթան տէր իշխանատոհմը կարող էր յիշուած լինել լոկ «Արևելեան դրան» ցուցակում. ՅԱԿՈՒԵԱՆ, Ա., 2009, 412):
- 51 Ըստ Ն. Ադոնցի՝ Հարուժեան = «Գահնամակ»ի՝ ԽԱ. Համբուժեան (263. "KH. AM-бужанъ 100"). երկու տարբերակների համադրումով, քերևս, վերականգնելի է՝ *Հարուժեան իրական անուանմանը, որում կատարուել են արք → ար եւ արք → ամբ յաճախողէպ վրիպեալ անցումները («Ներսէսեան» գահնամակում՝ [ՃԶ.] Համբուժեանք):
- 52 Դ Տրպատունի փխ Տրպատունի (ABE. այսպէս է եւ Ն. Ադոնցի մօտ):
- 53 AT Զարէուանեաց, Բ Զարէավանեաց փխ Զարէուանեաց (Ե. Ղ. Ալիշանի եւ Ն. Ադոնցի մօտ, քերևս, տեխնիկական վրիպակներով՝ Զարէուանեաց). համադրելով «Գահնամակ»ի հետ (ԽԵ. Զարէհաւանեանն)՝ գուցէ, կարելի է վերականգնելի համարել՝ Զարէ[հա]ւանեաց (սակայն ու-ով գուզորդութիւնները հմմտ. վերելում, ծնք. 14, 24):

- ԺԴ. Համաստունեան**⁵⁵ - **Ճ** [(100) մարտիկ արք],
ԺԵ. Արտաչեսեան⁵⁶ - **Յ** [(300) մարտիկ արք],
ԺԶ. Սազրատունի⁵⁷ - **Ճ** [(100) մարտիկ արք],
ԺԷ. Աբրահամեան - **Ճ** [(100) մարտիկ արք],
ԺԸ. Տրունի⁵⁸ - **Յ** [(300) մարտիկ արք],
ԺԹ. Թուժունի⁵⁹ - **Մ**⁶⁰ [(200) մարտիկ արք],
Ի. Քաջբերունի - **Ճ** [(100) մարտիկ արք],
ԻԱ. Բողունի⁶¹ - **Ճ** [(100) մարտիկ արք],
ԻԲ. Մուրացան - **Յ** [(300) մարտիկ արք]:

- 54 AB *Երանդունի*, ET *Երանթունի* փխ *Եր[ու]անդունի* (վերականգնում՝ ըստ Ն. Ադոնցի, որի մօտ *Եր[ու]անթունի* տարբերակով է. նաև ըստ նրա՝ *Երուանթունի* = «Գահնամակ»ի՝ *Մ. Երմանթունի* [*< Երուանթունի < Երուանդունի*], 263. "кн. Ермантуни 300"):
- 55 AB *Համաստունեան* փխ *Համաստունեան* (ET. «Ներսեսեան» գահնամակում, ըստ ամենայնի՝ [Ղ.] Համագգունի):
- 56 BT *Արտաչեսեան* փխ *Արտաչեսեան* (AE):
- 57 Ըստ Ն. Ադոնցի՝ *Սազրատունի* = «Գահնամակ»ի՝ *Վազրասպունի* (264. հմմտ. ուղղագիծ երկաթագիր **Վ - Ս**):
- 58 T *Տրունի* փխ *Տրունի* (ABE. այսպես է եւ Ն. Ադոնցի մօտ):
- 59 AB *Թուժունի* (A-ում *Թ*-ն գծիկով ջնջած եւ վերելում գրուած՝ Բ) փխ *Բուժունի* (ET):
- 60 Գուցէ, կարելի է վերականգնելի համարել՝ **Ճ** (100) փխ **Մ** (200) (ABET. տե՛ս բոլորագիր **Մ - Ճ**, ինչպէս նաև փոխարէնը). իհարկէ, վաղ գրիչներից մէկի այն վրիպումը, որի հետեւանքով Հայոց նախարարական «ագգերի» զօրքերի ընդհանուր ֆանակը շեղում է տուել 100 «մարտիկ արք»ով (84.100 փխն. 84 հազար, հմմտ. ստորև, ծնթ. 65), կարելի է նաև ենթադրել ոչ թէ այս, այլ մէկ ուրիշ հատուածում, ընդ որում՝ կապելով ոչ միայն նմանագիր տառերի շփոթի, այլև տեխնիկական վրիպման հետ, երբ մի ֆանի անգամ նոյն թուանշանն ընդօրինակած (այդպէս ունենք *Թ*-եր, *Յ*-եր, *Մ*-եր եւն) գրիչը կարող էր մեքնայարար կրկնել այն՝ չնկատելով յաջորդողի փոխուելը:
- 61 B *Բաղունի* փխ *Բողունի* (AET). անշուշտ, հետեւելով Ն. Ադոնցին (256)՝ ցիշտ է սկզբնօրինակում վերականգնելի համարել *Բողունի* (ըստ «Աշխարհացոյց»ի եւ Թովմա Արծրունու՝ գաւառ Վասպուրականի արեւմուտում), տե՛ս երկաթագիր եւ բոլորագիր **Գ - Դ**:

*Սորին մեկնեալ*⁶² եւ զոմանս՝ ի յայլ աշխարհս⁶³ գրաւեալս⁶⁴ : Եւ լինի թիւ մարտիկ արանց, որ ընդ ազգաւք՝ **ԶԴ-ից** հազարաց⁶⁵ : Թող՝ զսպասաւորս⁶⁶ դրանն⁶⁷ արքունի, որ է Ոստանդ, որք ի պատերազմ ելանէին ընդ արքայի⁶⁸, եւ⁶⁹ Մարդպետական, որ է ներքինի պահապան ի վերայ թագուհւոյն⁷⁰ եւ գանձուցն, եւ ընդ ամենայն⁷¹ թիւ զաւրացն Հայոց, որ է՝ հարիւր եւ քսան հազարաց :

ԱԼԵՔՍԱՆ ՅԱԿՈՒԲԵԱՆ

62 A *Ստին մեկնեալ*, B *Սորին մեկնեալ* փխ *Սորին մեկնեալ* (վերականգնում. տե՛ս բոլորագիր Կ - Ն) / T չիք *Սորին մեկնեալ* (AB):

63 E [...]խարհս փխ *Սորին մեկնեալ ... աշխարհս* (ABT):

64 Այս վերջակէտն առկայ է E (Երզնկայի) գրչագրում, որ եւս մէկն էլ ունի վերջում, պատուիրատու Կիրակոս վարդապետի յիշատակագրութիւնից առաջ. Յովի. Շահխաթունեանցի նմանահանութիւններում եւ տպագրում դրուած է միայն աւարտինը: Երկու տարբերակում էլ կցագիր **Լ** է, գլխատուեր չկան: **ԶԴ**. Թուանշանի վրայ (փոքրատուերով) պատուոյ նշանը երկու տարբերակում էլ գրիչնեւրինն է. E-ում եւս մէկով օժտուած է դրան յաջորդող՝ *հազարաց* բառը (**ձգ-ից ու-աց**), B-ում՝ միայն առաջին *ընդ-ը* (**ը**):

65 Ըստ մեզ հասած բնագրի՝ նախարարական գորաբանակների գումարը կազմում է ոչ քէ 84 հազար, այլ 84.100: Սակայն մի բանի պարտադիր եւ երկու նախընտրելի թուացող վերականգնումներով հնարաւոր է ստանալ հէնց նշուած թուաբանակը: Արուած վերականգնումներով՝ «Արեւմտեան դուան» գորաբանակը դառնում է 20.300 (բնագրով՝ 24.100), «Հիւսիսային դուանը»՝ 18.000 (բնագրով՝ նոյնը), «Արեւելեան դուանը»՝ 24.800 (բնագրով՝ 21.000), «Հարաւային դուանը»՝ 20.900 (բնագրով՝ 21.000):

66 Ըստ Ա. Մուշեղեանի (236, համադրելով Փաւստոսի Ե.Ե. գլխի՝ «թող զսպարակիրս» տեղիի հետ)՝ վերականգնելի է *զսպարաւորս* փխ *զսպասաւորս* (ABET):

67 B *դրանն* փխ *դրանն* (AET):

68 T *արքայի* փխ *արքայի* (AB) / E չիք *ընդ արքայի* (ABT):

69 B չիք *եւ* (AET):

70 E *թագուհւոյն* փխ *թագուհւոյն* (ABT):

71 B *ամենանայնն*, E^{ամենայնն} փխ *ամենայնն* (AT):

Summary

"THE GAHNAMAK OF ARMENIAN AZATS AND TANUTERS" AND "ZÖRANAMAK". RESEARCH AND TEXTS

ALEXAN HAKOBYAN

In the reserche a new historic-philological analysis of Armenian unique, early medieval documents, namely “Gahnamak” (Throne List, Ranking List) and “Zōranamak” (Military List, Military Register), and their scientific-critical texts are presented. This analysis shows, that in the “Gahnamak” the beginning of Sahak Partev’s letter should be conjectured as “[Ա]հա կայ խնդիր արարեալ...” (“Here is requested...”), not “[Իմ] Սա]հակայ խնդիր արարեալ...” (“I, Sahak, was searching...”), as former philologists supposed. Therefore, Sahak’s letter was sent to Armenia from Ktesiphon (the capital of Iran), not per contra, as it was thought by now. The list of princes was made in reply to the request from the last Arsakid king of Armenia Artashes (422-428) to Iranian court and in the result of searches of catholicos Sahak in the Ktesiphonian archive, which was named “Ardashir’s archive” (Ardashir was probably the founder of Sassanid dynasty).

If our hypothetic conjecture is true, the letter can be dated to the 5th year of Sassanid king Bahram V Gur’s reign, that is 424 year (the date is also mentioned in the text, namely the 17 of month K’aloc’, that is the 26 of December). Movses Khorenac’i does not know about Sahak’s this trip to Ktesiphon, but he reports about 3-4 other similar trips. There is only a single folio that reached us and which contains the list of Armenian principalities only up to number 70 are brought forward in it but at least 19 more smaller principalities can be restored, because they were mentioned in an other unique document of early medieval, namely “Zōranamak”. According to the new analysis, the “Zōranamak” (Military List, Military Register) was composed approximately in 330-s in one of the Semitic languages (possibly in Syrian) and was translated to Armenian in 5th century. The taking into ac-

count the specifics of Semitic graphics allows us to correct the obvious mistakes of the text that reached us.

The proposed reading and translations of “Gahnamak” and “Zōranamak” are also provided at the end of the article. Additionally, Ukhtanes' "The List of first 30 bishops", Mesrop Vayotsdzoretsi's late version of “Gahnamak” and “The Military List of Israel” (in two manuscripts from Mashtots' Matenadaran) are presented as appendices.